

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Պ, ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏԱՆ

Ն Ո Ր

Վ Ա Ր Ժ Ո Ւ Թ Ի Ի Ն

Մ Ա Ն Կ Ա Ն Ց



Ե Ր Կ Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի




Կ. ՊՈԼԻՍ

ԳՐԱՑՈՒՆ Պ. ԳԱԼԵՆՑ

Զախմա/ճիշտագրություն, թիվ 20

1909

3



ՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Պ, ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏԱՆ


491.99-82

Գ Ն Ո Ր

ՂԱՐԺՈՒԹԻՒՆ

ՄԱՆԿԱՆՑ

A $\frac{II}{13725}$



ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ



Կ. ՊՈԼԻՄ
ԳՐԱՏՈՒՆ Գ. ՊԱԼԵՆՑ

Զամբախիկառ կողմից, թիւ 20

1902



ՏՊԱՐԱՆ, ԿԻՄԱԳՐԱՑՈՒՆ, ԿԱԶՄԱՑՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՏՈՒՆՈՒԹՅԱՆ

Ե. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

27, Ֆինանսներար եղուշու, Կ. Պոլիս

معارف نظارت جلیلهی و مطبوعات ادارهٔ بییهی رخصتیه
طبع اولمشدر فی ۹ نیسان سنه ۱۳۱۸

Յ Ա Ռ Ա Ջ Ա Ր Ա Ն

Անցեալ տարի ՆՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑԻ առաջին մասը հրատարակելնուս առթիւ, թուելով անոր ուրիշ նմանօրինակ դասագրքերու վրայ ունեցած բազմաթիւ առաւելութիւնները, յոյս յայտնած էինք թէ մեր այս նոր գործը պիտի ունենար մեծ օգտակարութիւն տանկալիսս հայ մանուկներու ուսուցանելու համար իրենց մայրենի լեզուն : Ուրախ ենք այսօր տեսնելով որ մեր յոյսը կատարելապէս իրականացած է, զի այդ գրքին մէկ տարուան ժամանակամիջոցի մէջ մեծաքանակ սպառումն յայտնի ապացոյց մըն է իր գտած լաւ ընդունելութեան :

Ուրեմն քաջալերուելով մեր գտած յաջողութենէն այս տարի ալ փութացինք պատրաստել Երկրորդ մասը, զոր այսօր հրատարակ հանելու պատիւն ունինք : Աւելորդ է կարծեմ ըսել թէ ընաւ հոգ եւ խնամք չենք խնայած սա երկրորդ մասն ալ առաջնոյն չափ օգտակար ընելու : Այս դասագիրք ոչ միայն պիտի զիւրացնէ մայրենի լեզուի ուսուցումն, այլ իր պարունակած բարոյալից հատուածներով եւ պիտանի գիտելիքներով, մեծապէս պիտի սատարէ փոքրիկ տղայոց բարոյական լաւագոյն սկզբունքներ ներշնչելու եւ անոնց միաքը զարգացնելու :

Վստահ ենք ուրեմն որ սպասուարժան ուսուցիչներ պիտի բարեհաճին գնահատել մեր այս գործն ալ եւ այսու կրկնապէս քաջալերել զմեզ մեր օգտակար ձեռնարկին մէջ :



Handwritten text at the top of the page, partially cut off.

W. J. ...
1903 26



ՆՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ

Ե Բ Կ Ը Ո Բ Գ Ծ Ա Բ Ծ

1. Ա Ս Տ Ո Ւ Ա Մ

Աստուած ստեղծած է երկինքը, երկիրը և անոնց մէջ դասուած ամէն բաները: Ան կը տեսնէ մեր բոլոր գործերը, և գիտէ ինչ որ կ'անցնի մեր մտքէն: Տղայք, պէտք է որ սիրէք Աստուած և հնազանդիք Անոր պատուէրներուն, որովհետև այսպէս միայն կրնաք երջանիկ ըլլալ: Սիրեցէ՛ք նաև ձեր կրօնքը որ ձեզի կը սորվեցնէ թէ ինչպէս պէտք է պաշտել Աստուած:

ՌԱՌՆԲ. — Ստեղծել, երգարձ. — Պէտք է որ սիրէք, «եղբայրներէն» . — Պէտք է որ հնազանդիք, ինչպէս երգարձ. — Պատուէր, դիպար. — Որովհետև, շնորհ. — Երջանիկ, հաշտ. — Կրօնք, հոգեւոր. — Սորվեցնել, եղբայր. — Պաշտել, ինչպէս:

ՄԱՆՈՒԹՈՒԹԻՒՆ. — Պէտք է սիրել, պէտք է հնազանդիք, այս ձեռքովն վրայ դանազան վարժութիւններ ընել տալ աշակերտաց հայրերէնէ տաճարէն եւ փոխադարձաբար:

1. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Որոշեցի՛ք անձ, կենդանի եւ առարկայ ցուցնող բաները. Դպրոցական, ժամացոյց, դիրք, շուն, դայլ, տեսարակ, քայր, ձի, մատիտ, գրիչ, հօրեղբայր, հայր, մայր, տուն, հաւ, սեղան, ստեւ, կիտ, մեղան, եղ, սոխակ, հովիւ, վարդապետ, արժու, ուղտ, թուղթ, դրացի, փայտ, Ֆէս, փիղ, կօշիկ, դաւաթ, դրագիր, նաւապետ, ոսկի, արծաթ:

2. ԲԱՐԻ ԴՊՐՈՑԱԿԱՆԸ

Միհրան առտուն կանուխ կ'ենէ. Կը բարեւէ հայրը, մայրը և պզտիկ քոյրը: Կը լուայ դէմքը, լիզը և մարմինը: Սանտրով կը շտկէ մազերը: Կը մաքրէ ձեռքերն ու եղունգները: Միհրան կը նախաճաշէ և իր դասին վրայէն կ'անցնի: Դպրոց կ'երթայ և ժամանակէն առաջ հոն կը հասնի: Դասին մէջ ուսուցչին բոլոր ըսածներուն մտիկ կ'ընէ: Աղտոտ չեն իր դիրքը և տետրակը: Զբօսանքի ատեն իր ընկերներուն հետ կը խաղայ: Երբ դասը լմնայ, Միհրան առանց փողոցը կենալու տուն կ'երթայ: Անիկա բարի դպրոցական մըն է: Իր հայրը և մայրը երջանիկ են ասանկ բարի զաւակ մը ունենալնուն համար:

ԲԱՌՆԵՐ. — Կանուխ, երէն. — Բարեւել, «ելմ վերդե» — Դէմք, եւլ. — Մաքրել, դեմքի վերդե. — Եղունգ, որբնե. — Նախաճաշել, քակալը երդե. — Ուսուցիչ, հոմ. — Զբօսանք, էյլնե:

ԾԱՆՕԹ. — Առանց փողոցը կենալու, «դեմքի դեմքի» առանց ուսելու, առանց խնդու եւայլն ձեւերուն վրայ վարժութիւններ ընել տալ աշակերտաց:

ՀԱՐՑԱՐԱՆ. — Պատմեցէ՛ք թէ ի՞նչպէս դպրոցական մըն է Միհրան և ի՞նչ կ'ընէ:

3. ՀՐԱՀԱՆԳ

Որոշեցի՛ք յասուկ եւ հասարակ անուաները.

Կարապետ, քար, դաւաթ, Մարիամ, գրիչ, ձի, էշ, աղջիկ, Յակոբ, Աստուած, Յիսուս, եկեղեցի, երկիրք, աշխարհ, տուն, սենեակ, Վարդուհի, փողոց, պատուհան, Յովհաննէս, Իսկուհի, Ագապի, Միհրան, ճանճ, թռչուն, հայելի, Պալիկ, Մաղաքիա:

Յ. ՄԱՔՈՒՐ ՏՂԱՆ

Մաքուր տղու մը չափ հաճելի բան չի կայ : Անոր երեսը թարմ է և ճերմակ, և մարմինն ալ առողջ : Ամէն մարդ կ'ախորժի անկէ անոր մաքրութեանը համար :

Աղտոտ տղան , ընդհակառակը , ամենուն զգուանք կ'ազդէ : Ո՞վ պիտի ուզէ համարել անոր անմաքուր այտերը : Ամէն մարդ երես կը դարձնէ անկէ : Անիկա շատ անգամ քիթը իսկ չի սրբեր : Մէկը չուզեր դայիլ անոր մատներուն որ միշտ աղտոտ են :

Սակայն մաքուր ըլլալը դժուար բան չէ : Քիչ մը ջուր բաւական է ասոր համար : Եւ ի՞նչ բան կայ ջուրէն շատ աշխարհի վրայ : Մաքուր մարդը միշտ առողջ կ'ըլլայ :

ՐԱՌԵՐ. — Մաքրութիւն , Կեօղիւն . — Հաճելի , Խօշ . — Թարմ , Կոշ . — Առողջ , Կոշ . — Ախորժիլ , Կոշ Կոշ . — Ընդհակառակն , Կոշ (Կեօղիւն) . — Զգուանք ազդել , Երէնքի Կեօղիւն . — Համարել , Կեօղիւն . — Անմաքուր , Կեօղիւն . — Այտ , Կեօղիւն . — Սակայն , Կեօղիւն . — Բաւական է , Կեօղիւն :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Ի՞նչպէս կ'ըլլայ մաքուր տղայ մը . — Անիկա ի՞նչպէս կ'երեւայ ամենուն . — Աղտոտ տղան ի՞նչպէս է . — Անիկա ի՞նչ բան կ'ազդէ մարդոց . — Մաքուր ըլլալու համար ի՞նչ ընելու է . — Մաքուր եղող մարդը ի՞նչպէս կ'ըլլայ :

Յ. ՀՐԱՀԱՆԴ

Հետեւեալ բառերը յոյճակի ըրե՛ք , միավանկներուն ծայրեր , իսկ բազմավանկներուն ծայրը ներ մասնիկները աւելցրե՛նք :

Տուն , աշխարհ , ծառ , աղարակ , դպրոց , քաղաք , տանձ , քանակ , քարետախտակ , պատառաքաղ , բաճկոն , տափաս , անձեռոց , պատ , իւղ , քար , հող , ձի , կին , մարգագետին , խոհանոց , աքաղաղ , եզ , կատու , ոչխար , ասեղ , հաւ , սեղան , նուշ , բալ , առիւծ , ձեռք , մուկ , տանիք , փողոց , եկեղեցի , խաղող :

4. ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Գրիգոր աշխատասէր տղայ մըն է : — Մայրս ինձի համեղ կերակուրներ տուաւ : — Եղբայրներս և քոյրերս շատ կը սիրեմ : — Ոչխարը խելօք կենդանի մըն է : — Տանիքին վրայ աղանիներ կան : — Շուկայէն ուտելիք, խմելիք, հագնելիք կը դնենք : — Սեղանին ծածկոցը կտաւէ կը շինեն : — Պարտիզպանը ծառեր, ծաղիկներ, պտուղներ և բանջարեղէններ կը հասցնէ պարտէզին մէջ : — Տուներուն մէջ կան սենեակներ, խոհանոց, մառան, բակ, պահարան, սանդուղ :

ՐԱՌՆԵՐ. — Աշխատասէր, շուշան . — Համեղ, քոյր . — Խելօք, քոյր . — Տանիք, քոյր . — Աղանի, կիւղիք . — Շուկայ, շուշ . — Գնուլ քոյր . — Ծածկոց, էջեր . — Կտաւ, դէշ . — Մառան, մահլէն :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Որո՞ւ կ'ըսեն աշխատասէր . — Քանի մը համեղ կերակուրի անուն տուէ՞ք . — Ոչխարը ի՞նչ տեսակ կենդանի մըն է . — Աղանին ի՞նչ է . — Հինգ տակիքի, հինգ խմելիքի և հինգ ալ հաղնելիքի անուն տուէ՞ք . — Ծածկոցով ի՞նչ կ'ըսեն . — Պարտիզպան ի՞նչ ըսել է և ի՞նչ կ'ընէ . — Տունը ուրիշ ի՞նչ մասեր ունի :

4. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Հեհեհալ բառերը եզակի բրե՛հ .

Աչքեր, կենդանիներ, պալատներ, թոշուններ, տուներ, այգիներ, ոչխարներ, հայրեր, մայրեր, դուխներ, շուներ, դաւազաններ, ձիեր, էշեր, կատուններ, գամեր, մուճակներ, խաղալիքներ, հաւեր, կառքեր, սեղաններ, բանալիներ, մանչեր, աղջիկներ, պարտէզներ, աքաղաղներ, ծիծեռնակներ, դիւքեր, թուղթեր, գրիչներ, արասյաներ, ծովեր, հողեր, տանիքներ, հաւնոցներ, դաւալմներ :

5. ԱՏԱԽՕՍ ՏՂԱՆ

Դրիգոր աղուոր պղտիկ տղայ մըն է : Բայց մեծ թերութիւն մը ունի : Միշտ սուտ կը խօսի : Անոր հայրը և մայրը շատ դժգոհ են այս բանէն : Շատ անգամներ կը խրատեն , կը պատժեն իր այդ յոռի բնաւորութեանը համար , բայց ան նորէն ճշմարտքը չ'ըսեր : Այս պատճառաւ հիմա մէկը չի հաւտար անոր խօսքին : Երբ բերանը բանայ բան մը պատմելու համար , իր ընկերները զինքը մտիկ ընել չեն ուզեր , և «սուտ ես , սուտ ես» կը պոռան երեսին :

Ի՞նչ գէշ բան է սա ստախօսութիւնը :

ԱՆՈՍԲ. — Թերութիւն , գոտար . — Միշտ , որո՞՞մ . — Դժգոհ , ի՞նչո՞ր օլ՞յան . — Խրատել , նախադ լիք՞էր . — Պատժել , ճեղ՞ լիք՞էր . — Յոսի , ֆէն . — Բնաւորութիւն թող՞ար . — Ճշմարտ , որո՞ր . — Պատմել , հիտե՞յէ եր՞էր . — Ընկեր , որո՞ր . — Ստախօսութիւն , երան՞ջլլէր :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Դրիգոր ի՞նչպէս տղայ է . — Անիկա ի՞նչ թերութիւն ունի . — Անոր հայրը եւ մայրը ի՞նչ կ'ընեն . — Իր ընկերները ի՞նչ կ'ընեն երբոր ան խօսիլ ուզէ . — Ազէ՞կ բան է սուտ խօսիլը . — Ուրեմն դուք ալ սուտ պիտի խօսի՞ք :

5. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Հետեւեալ բառերուն եզակիները զատ , յոյնակիները զատ սիւնակի մեզ գրեցե՛ք .

Երկիր , հագուստ , վարդենիներ , թռչուն , ջուր , դաւազաններ , ընկոյզներ , ծաղիկներ , պտուղ , նարինջ , անիւներ , կասքեր , ամպ , ցորեն , խաղող , հրացաններ , պատկեր , դորգ , անտառներ , կարկանդակ , ծով , դազաններ , աշտանակներ , մուշտակ , քաղաք , դիւղեր , լեռներ , ձորեր , ծակ , ջերմոց , շղթայ , լուսին , խիթ , բերաններ :

6. ՔԱՂԱՔԱՎԱՐ ՏՂԱՆ

Փոքրիկ կարապետ երեկոյ մը երբ դպրոցէն տուն կը վերադառնար ուրախ և զուարթ, ճամբուն վրայ հանդիպեցաւ ծեր մարդու մը որ ձի հեծած կ'երթար :
 Կարապետ անմիջապէս յարգանքով գլխարկը հանեց և բարեւեց ծեր մարդը : Ծամբորդը այն ատեն դառնալով ըսաւ անոր . « Տղաս , ես քեզի չեմ ճանչնար , բայց քու քաղաքավարութիւնդ ցոյց կուտայ որ դուն բարի դպրոցական տղայ մըն ես , և երբոր մեծնաս պարկեշտ և ազնիւ մարդ մը պիտի ըլլաս : »

ԲԱՌՆԵՐ. — Քաղաքավար , դերպէյէլի . — Վերադառնալ , կերէ տե՛ժե՛ . — Ուրախ , զուարթ , տէ՛լնճիլ . — Հանդիպիլ , բո՛ւր կե՛լե՛ . — Հեծնել , դի՛նճե՛ . — Անմիջապէս , հե՛ժն . — Յարգանք , բո՛յե՛ . — Ծամբորդ , եւ՛ճն . — Երբոր մեծնաս , դե՛յե-դի՛յէնտե՛ . — Պարկեշտ , բըրը , նո՛մո-սը :

ԾԱՆՕԹ. — Երբոր մեծնաս , երբոր գաս , դե՛յե-դի՛յէնտե՛ , կե՛լի՛յէնտե՛ . այս ձևերուն վրայ զանազան վարժութիւններ ընել տալ տղայոց :

ՀԱՐՑԱՐՄԱՆ. — Փոքրիկ կարապետ ի՞նչ տեսակ տղայ մըն է . — Ի՞նչ պատահեցաւ օր մը անոր . — Ծերունին ի՞նչ ըսաւ իրեն :

7. ՉՈՒՈՎՈՒՄ ՄԻԱՎԱՆԿ ԲԱՌԵՐՈՒ

ԵԶԱԿԻ

ՅՈՒՆԱԿԻ

Ո.	Վարդ	Կիւլ	Վարդեր	Կիւլեր
Ս.	Վարդի	Կիւլիւն	Վարդերու	Կիւլերին
Տ.	Վարդի	Կիւլէ	Վարդերու	Կիւլերէ
Հ.	Վարդ	Կիւլիւ	Վարդեր	Կիւլերի
Բ.	Վարդէ	Կիւլեան	Վարդերէ	Կիւլերեան
Գ.	Վարդով	Կիւլ իլէ	Վարդերով	Կիւլեր իլէ

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆ. — Վարդ բառին պէս հոլովեցե՛ք հետեւեալ բառերը .

Ծառ , խոտ , քար , փայտ , մատ , հոլ :

8. ԻՆՔՆԱՀԱԻԱՆ ՏՂԱՆ

Գրիգոր անմիտ տղայ մըն է : Ինքզինքը շատ խելացի և շատ գիտուն կը կարծէ : Հպարտութեամբ ամէն մարդու կը պատմէ դպրոցին մէջ իր առած գովեստները : Բոլոր ծանօթները վրան կը խնդան : Ինքզինքէն զատ ուրիշ մէկուն չի հաւնիր . և այնչափ կարեւորութիւն կուտայ իր անձին որ մարդ չի կրնար խնդալը զըստել : Ամէն մէկ խօսքին մէջ ինքնահաւանութիւնը ցոյց կուտայ : Այս պատճառաւ բնաւ բարեկամ չունի :

ՌԱՌԵՐ. — Ինքնահաւան , +էրէնէ գէյէնէշ . — Անմիտ , -գէււււ . — Գիտուն , -լէ՛ . — Կարեւորութիւն , էհէ՛մէյէր . — Գովեստ , զէր . — Ծանօթ , գէլրէ՛ . — Զստել , շ-գէլէրէ՛ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Պատմեցէ՛ք թէ ի՞նչ տեսակ տղայ մըն է Գրիգոր . — Աղէ՞կ բան է ինքնահաւան ըլլալը :

6. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Հսկ'ք բէ ո՛ւր կը գտնուից

Սեղան , արեւ , ձուկ , կաթոյ , խնձորենի , դրասեղան , խորան , վայրի խող , ծաղիկ , վառարան , ձի , դպրոցական , շոգենաւ , թոշուն , կասք , աղարակ , հաւ , պատուհան , հրեշտակ , սատանայ , տերեւ , մելան , եղջիւր , կղմինար , կատու , բանտարկեալ , ջուր , խոտ , Աստուած , ստամոքս , օձ , կոկորդիլոս , մեղր , նպարեղէն , միտ , վայրի հաւ , պտղատու ծառ , մետաղ , ուղեղ , եղունոց , բազմոց , վանական , դատաւոր , նաւապետ , տիրացու , քահանայ , հիւանդներ , զինուորներ , պատառաքաղ , աղ , յիմարներ , շանթարդել :

9. ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Այսօր ինչո՞ւ ուշ ելաք անկողնէն : Քիչ մը գլուխս կ'դաւեր կոր : Կարծեմ օդը պիտի արտի : Երկինք սուպոտ է : Արեւմուտքի կողմը բոլորովին սեւդաւ : Կայծակ կը զարնէ կոր : Կը լսէ՞ք կոր որստումը : Հիմա անձրև պիտի գայ : Զուրի կաթիլներ կ'զգամ կոր երեսիս : Ահաւասիկ սկսաւ անձրևը . հովանոցդ բաց : Ո՞ւր է քու կինդ : Տունը մտոցայ : Իմ հովանոցիս տակը եկնուր : Ծուռ քալենք ու տուն երթանք : Փողոցները ցելս եղան : Վերարկուս լաւ մը թրչեցաւ : Խոնաւութիւն կ'զգամ կոր : Պէտք է որ հագուստնիս վտխեմք , ապա թէ ոչ հիւանդ կ'ըլլանք :

ԲԱՌԵՐ. — Ամպոս , պալատ . — Արեւմուտք , շաւր (կէն գորշը) . — Բոլորովին , բեռն . — Կայծակ , շեշտ . — Որստում , կէտ : կէտէտէ . — Կաթիլ , գոլ . — Ահաւասիկ , ելքէ . — Հովանոց , շեշտէ . — Ցելս , շաւր . — Վերարկու , քալի . — Խոնաւութիւն , շեշ . — Ապա թէ ոչ , ետէս :

10. ՀԱՆԵԼՈՒԿ

(Արեւ)

Գիտէ՞ք անունն այն կանթեղին
 Ձեռով կըլոր , գոյնով դեղին ,
 Որ կը վառի ցորեկ ատեն
 Եւ բուերը զանի կ'ատեն :

7. ՀՐԱ ՀԱՆԳ

Գիծերուն սեղ մեկ մեկ ձայնաւոր դնելով բառեր կազմել եւ նշանակութիւնը զրուցել .

Լ-ը , մ-ս , մ-ա , հ-դ , ձ-թ , ք-թ , թ-ւ , մ-դ ,
 ս-բ , մ-մ , լ-ճ , ք-բ , գ-ս , սլ-ա , գ-բ , գ-բ ,
 գ-մ , ս-գ , հ-ց , ձ-գ , հ-ւ , ճ-չ , ս-խ , լ-թ , ս-ւ ,
 կ-բ , բ-ց , խ-ա , խ-չ :

11. ԳՈՂՑՈՒԱԾ ԽՆՁՈՐՆԵՐ

Գէորգ պղտիկ բարի տղայ մըն էր, բայց կը կարծէր թէ ամէն բան ներելի է։ Օր մը դրացւոյն պարտեղին մէջ տեսաւ կարմիր աղուոր խնձորներ, և իսկոյն պատին վրայ գտնուած ծակէ մը պարտեղ մտնելով գրպանները խնձորներով լեցուց։ Յանկարծ դրացին վրայ հասաւ։ Գէորգ զայն տեսնելով անմիջապէս ծակին քով վազեց որ հոնկէ փախչի։ Բայց գրպանները այնչափ ուռեցած էին որ չի կրցաւ անցնիլ։ Դրացին հասաւ, պարպել տուաւ գրպանները և աղուոր պատիժ մը տուաւ անոր։

Մի՛ դողնաք ուրիշին ստացուածքը։

ՌԱՌՍԲ. — Գողցուած, շլէշէշլ. — Կարծել, շնն էդ-
ձէ. — Ներելի, —ճ օլննուր. — Գրպան, ճէպ. — Իսկոյն,
յանկարծ, հէձն. — Դրացի, Գէշլ. — Փախչիլ, Գալմէ. —
Ստացուածք, ճւլ.

ՀԱՐՑԱՐԱՆ. — Գէորգ ի՞նչ տեսակ տղայ էր. — Ի՞նչ
պատահեցաւ օր մը անոր. — Դրացին ի՞նչ ըրաւ իրեն. —
Գէորգին ըրածը լա՞ւ բան էր։ Այս պատմութիւնը ի՞նչ կը
սորվեցնէ։

8. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ո՛ր կեցդագիները ունին

Երկայն տկանջ, թաթ, եղջիւր, խայթոց, մազ, բուրդ,
կուղ, խեցի, պատիճ, ճանկ, սմբակ, բրտակ, լաշ, թոյն,
պոչ, փուշ, թեւ, լողակ։

ԾԱՆՕԹ. — Դասատուն պէտք է վերայիշեալ բառերուն
նշանակու թիւնները սորվեցնէ աշակերտաց։

12. ԽՆԱՅՈՂԸ ԵՒ ՇՌԱՅԼԸ

Յակոբ ձեռքը անցած ստակը անմիջապէս կը ծախսէ :
 Զարուհի, իր քոյրը, ընդհակառակը կը պահէ իր ստակը
 որ պէտք եղած ատենը դորձածէ զայն : Օր մը երբ
 քոյր և եղբայր միասին կը պտտէին փողոցին մէջ, հան-
 դիպեցան խեղճ կնոջ մը որ իրեն երեք փոքրիկ տղաք-
 ներուն հետ մէկտեղ հաց կը մուրար կոր : Զարուհի
 անմիջապէս քսակը հանեց և դրամ տուաւ աղքատ կնոջ :

Յակոբ ալ տալ ուզեց, բայց ունեցած դրամովը
 առտուն պտուղ և խաղալիքներ գնած էր և քովը բնաւ
 դրամ չէր մնացած : Այս պատճառաւ չի կրցաւ դրամ
 տալ, և մեծ ամօթ զգաց :

Աշխատող և խնայող մարդը կրնայ իր ամէն պէտ-
 քերը հողալ և քիչ մըն ալ ուրիշին տալ :

ՐԱՌՆԲ. — Խնայող, իր-բեճէ . — Շոյլ, մեծեղ . —
 Ծախսել, իրճամբ . — Գործածել, բուլանբ . — Պտախլ,
 կեշտ . — Հանդիսիլ, բոդ կեշտ . — Խեղճ, շէլ-լիւ . —
 Մուրալ, րիլնեթ . — Քսակ, տե . — Գնել, արըն արմբ .
 Ամօթ, արը . — Զգալ, արմբ (հիս երմթ) :

ՀԱՐՅԱՐԱՆ. — Խնայող որմը կ'ըսեն . — Շոյլ որու
 կ'ըսեն . — Յակոբին և Զարուհիին պատահածը կրնա՞ք պատ-
 մել . — Այս պատմութեան բարոյականը ի՞նչ է :

9. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Հետեւեալ վանկերուն սկիզբը մեկ մեկ բաղաձայն աւել-
 ցրենելով բառեր շինել եւ թալ նշանակուրիւնը .

ար — աւ — ալ — այց — իս — իղ — էր — որ —
 ոչ — ոց — այր — ուն — որ — այլ — արձ — իւղ — ոյր :

13. ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

Ականջը կը լսէ . աչքը կը տեսնէ . ձեռքը կը բռնէ . մեղուն կը խայթէ . ձուկը կը լողայ . թռչունը կը թռչի . գորտը կը ցատքէ . օձը կը սողայ . մարդը կը քալէ . արեւը կը լուսաւորէ . հողը կը փչէ . ամպը կը յառաջանայ . կայծակը կը փայլի . անձրեւը կը տեղայ . գետը կը յորդի :

ՐԱՌՆԵՐ. — Խայթել , սփռի . — Լողալ , ել-չեղ . — Լուսաւորել , բլբլ փրփր . — Փչել , ելի . — Յառաջանալ , ելբլ փրփր . — Փայլիլ , փրլլի . — Տեղալ , ելի . — Յորդիլ , իլի :

14. ՀՈՒՆՎՈՒՄ ԲԱԶՄԱՎԱՆԿ ԲԱՌԵՐՈՒ

ԵԶԱԿԻ

ՅՈՒՆՎԱԿԻ

Ո.	Պարտէզ	Պանչի	Պարտէզներ	Պանչիկեր
Ս.	Պարտէզի	Պանչիցի	Պարտէզներու	Պանչիկերի
Տ.	Պարտէզի	Պանչիկ	Պարտէզներու	Պանչիկերի
Հ.	Պարտէզ	Պանչիքի	Պարտէզներ	Պանչիկերի
Ի.	Պարտէզէ	Պանչիցի	Պարտէզներէ	Պանչիկերիցի
Գ.	Պարտէզով	Պանչի իլի	Պարտէզներով	Պանչիկեր իլի

ՎԱՐԺ. — Վերի օրինակին պէս հոլովեցէ՛ք պատկեր, սեպուղի հողոց , կւայն :


10. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Հետեւեալ բառերուն մէջ ձայնաւոր գիրերը փոխելով ուրիշ բառեր ժինել եւ սալ անոնց նշանակութիւնը .

Մաս — կեր — սկիւ — լաճ — բառ — դիր — դամ — մոմ համ — նոր — դատ — պետ — վար — խեղ — սէր — թիւ — մաս :

152 — Վ. Բ. Ռ. Տ. Բ.

2



15. ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Այսօր օդը շատ գեղեցիկ է : Եկուր միասին պտը-
տիլ երթանք : Ո՞ւր պիտի երթանք : Իմացի մարդա-
գետինը երթանք : Տես որչափ մարդ կայ հոն : Ամէն
մարդ շրջագայութեան ելեր է : Ի՞նչ գեղեցիկ են գետ-
նին խոտերը : Շուրջ գտնուած ծաղիկներուն նայէ :
Այդ ծաղիկներէն փունջ մը կապենք և միասին աուն
տանինք : Հիմա մեզի կը սպասեն : Յոգնութիւն կը
զգամ կոր : սէտք է որ քիչ մը հանգստանամ : Սաս-
տիկ ախորժակ ունիմ : Պտոյտը օգտակար բան է :

ԲԱՌԵՐ. — Գեղեցիկ, կէ-շէլ. — միասին, պեր-պեր. —
Մարգագետին, շաբաթ. — Շրջագայութիւն, կէշէ. — Շուրջ,
էրթ-ք. — Փունջ, տէրտ. — Ժամանակ, լ-էլք. — Սպա-
սել, պէլ-պէ. — Յոգնութիւն, երջ-ն-լ-է. — Հանգստա-
նալ, բ-հ-տ էր-տ. — Սաստիկ, լէ. — Ախորժակ, էլք-ն.
— Պտոյտ, կէշէ. — Օգտակար, ք-յտէլէ :

11. ՀՐԱՀԱՆԳ

Ի՞նչ կ'ընեն հետեւեալ գործիքներով .

Ասեղ, վրձին, դանակ, զրէչ, սուլիչ, կշիռ, ծխա-
փայտ, աւել, մուրճ, բանալի, մկրատ, կանգուն, սղոց,
ածելի, խարազան, խարտոց, դոյլ, ունելի, աքցան, ման-
գաղ, մամուլ, հերիւն :

ՕՐԻՆԱԿ. — Ասեղով կար կը կարեն :

ԾԱՆՕԹ. — Դասատուն կը բացատրէ աշակերտաց չհաս-
կըցած բառերը :

Պէտք չէ գէշ աչքով նայիլ աղքատներուն, և ո՛չ ալ գանիլ հիւանդներէն: Աղքատութիւնը և հիւանդութիւնը այնպիսի բաներ են, որ կրնան օր մըն ալ մեղի պատահիլ: Ուստի պէտք է վարժուինք անոնց, ինչպէս մեր գործերուն և սլարաքերուն: Երբ վարժուինք այս գժրաղբութիւններուն և բարեարտութեամբ վարուինք գժրաղբ մարդոց հետ, մեր տառապանքը պակաս կ'ըլլայ երբ մենք ալ օր մը այդ վիճակներուն մէջ իյնանք: Դժբաղդները սիրելու զգացումը լաւագոյն զգացումն է աշխարհի վրայ:

ԲԱՌԵՐ. — Ո՛չ ալ, չէ՛րէ. — Պատահիլ, բարձր իջնիլ. — Ուստի, գինայե՛ն լինիլ. — Վարժուիլ, լըլըմիլ. — Պարաք, լըլըմիլ, գործ. — Դժբաղդութիւն, գեղարարութիւն. — Բարեարտութիւն, եյի ել-բեկիլիլ. — Վարուիլ, գործնելիլ. — Տառապանք, եղբայր. — Վիճակ, հալ. — Չգացում, հիւանդութիւն:

ՀԱՐՑԱՐԱՆ. — Ըսէ՛ք թէ որո՞ւ կ'ըսեն աղքատ եւ որո՞ւ՞ հիւանդ: Անոնց հետ ի՞նչպէս վարուելու ենք եւ ինչո՞ւ համար:

18. ՀՐԱՀԱՆԳ

Ի՞նչ գոյն ունին հետեւեալները.
 Կաթ, արիւն, ածուխ, սոկի, աղ, շրթունք, յարդ, արծաթ, մելան, հասունցած ցորեն, կաւիճ, կարագ, ձիւն, ալիւր, հասուն ելակ, տերեւ, կեռաս, երկինք, ջուր, վարդ, լեմոն, խոտ, բոց, մուխ, սնդիկ, ապակի, քարե-տախտակ, մանիչակ:

17. ՉԱՐԱՍԻՐՏ ՏՂԱՆ

Անձրեւոտ օր մը կարապետ, դասադիրքերը թելին տակ և սակառն ալ ձեռքը բռնած, դպրոց կ'երթար: Գեախնները թրջած էին: Խեղճ տղուն ոտքը սահելով ինկաւ, և դէմքը բոլորովին աղտոտեցաւ: Թովմաս օր անտեղէն կ'անցնէր, փոխանակ անոր օգնելու՝ սկսաւ վրան խնդալ. «Օ՛ պարոն, այդ ի՞նչ աղու որ ես, պեխերդ ու մօրուքդ շատ շուտ բուսեր են:» պոռաց ծաղրելով: Այս խօսքերը ըսած ատեն, յանկարծ իր ոտքն ալ սահեցաւ և այնպէս ուժով մը ինկաւ որ քիթը բերանը արխնելով, իր չարութեան արժանի պատիժը դտաւ:

ՌԱՌՆԵՐ. — Չարասիրտ, ֆէն- եի-բե+իէ . — Անձրեւոտ, ե-ղմ-արլւ . — Դասադիրք, րեր+ րեր-ղը . — Սակառ, -եֆէր ի-ը . — Սահիլ, ք-յմ-է . — Փոխանակ անոր օգնելու, ճ-ե-րդը՞ էրե՞նէ+ եերդե . — Ծաղրել, ղէֆէն-մէ+ . — Յանկարծ, դերդե՞ն դերե . — Արժանի, լ-յըէ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Կարապետ ո՞ր կ'երթար կոր: Ի՞նչ ո՞ւ ինկաւ: Թովմաս այն ատեն ո՞ւր էր և և ի՞նչ ըրաւ: Թովմաս սին ի՞նչ պատահեցաւ: Աստուած ի՞նչ կ'ընէ չարերը, Ազէ՞կ բան է չարութիւն ընելը:

18. ՀՐԱ ՀԱՆԴ

Ըսկ' հեծեւեալ պսուղները տուող ծառերուն անունները . կեռաս, սալոր, դեղձ, նուշ, նուռ, սերկեիլ, տանձ, խնձոր, արմաւ, ընկոյզ, կաղին, շաղանակ, բալ, թուղ, նարինջ, խաղող, թութ, ծիրան, ձկթ:

18. Ծ Ո Յ Լ Ը

Ծոյլ աղայ մը կ'ըսէր օր մը բժիշկին . « Բնաւ չեմ աշխատիր , վասն զի միշտ հիւանդ եմ » — Բժիշկն անոր պատասխանեց . « Աւելի ճշմարիտ բան մը խօսած պիտի ըլլայիր եթէ ըսէիր , միշտ հիւանդ եմ վասն զի բնաւ չեմ աշխատիր »

Աղէկ գիտցէ՛ք , ծուլութիւնը որ ամէն շարեաց պատճառն է , հիւանդութիւն ալ կը բերէ :

ՌԱՌԵՐ. — Ծոյլ , դեմոն . — Վասնզի , չեմէ . — Բժիշկ , հեմէ . — Պատասխանել , ճիշտ լերեմ . — Պատճառ , եղեղ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Ծոյլ աղան ի՞նչ կ'ըսէր բժիշկին : Բժիշկը ի՞նչ պատասխան առաւ : Բժիշկը իրաւունք ունէր թէ ծոյլը Ծուլութիւնը ի՞նչ բաներու պատճառ կրնայ ըլլալ :

19. Հ Ո Լ Ո Վ Ո Ւ Մ

ԵԶԱՎԻ

ՅՈՒՔՆԱԿԻ

Ո. Ուսում	Իլիմ	Ուսումներ	Իլիմեր
Ս. Ուսման	Իլիմին	Ուսումներու	Իլիմերին
Տ. Ուսման	Իլիմե	Ուսումներու	Իլիմերե
Հ. Ուսում	Իլիմի	Ուսումներ	Իլիմեր
Բ. Ուսումէ	Իլիմեան	Ուսումներէ	Իլիմերան
Գ. Ուսումով	Իլիմ իլի	Ուսումներով	Իլիմեր իլի

ՎԱՐԺ. — Վերի օրինակին պէս հոլովեցէ՛ք խօսում , զնում , սպառում :

20. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ո՞վ կը օրհնէ կամ կը ծախսէ հետեւեալ առարկաները .

Գլխարկ , կօշիկ , հաց , դանակ , կերպաս , ժամացոյց , գիրք , ծաղիկ , հանդերձ , զէնք , դամ , պտուղ , դեղ , կարասիներ , ձուկ , միս :

20. ԶՐՈՒՅԱՏՐՈՒՅԻՒՆ

Կէս օր եղաւ : Ճաշը պատրաստ է : Այո՛, սեղանատուն իջնեմք : Եկուր, քովս նստէ՛ : Անձեռոցդ վրայ ա՛ն : Ի՞նչ կուզես որ տամ՝ քեզի : Ապուր կուզե՞ս : Այո՛, շնորհակալ եմ : Դդալ մոռցեր էք դնելու : Խորովածէն ալ կ'ուզէ՞ք : Իւղոտ կողմէն չեմ ուզեր : Այս կերակուրը շատ անլի է : Ի՞նչ գինի կը խմէք . սեւ թէ ճերմակ : Գինի չեմ ուզեր, բժիշկը արգիլած է : Գիշ մը ջուր պիտի խմեմ : Անուշեղէն կը սիրէ՞ք : Ա՛լ չի պիտի ուտեմ, լաւ մը կշտացայ : Հիմա սուրճ մը խմե՛նք :

ՌԱՌՅԲ. — Ճաշ, էե՛ղ : — Պատրաստ, հաշտ . — Անձեռոց, խէշի՛ք : — Ապուր, չօրո . — Շնորհակալ եմ, քեշի՛ք : — Խորոված, իւղո . — Արդիլել, զին էքե՛ղ (եւստէ էքե՛ղ) : — Անուշեղէն թօղ . — Կշտանալ, արցա՛ք : — Սուրճ չե՛ք :

21. ԲԱՐԻ ՏՂԱՆ

Փոքրիկ արզայ մըն եմ բարի,
 Կը խելօքնամ ամէն տարի .
 Գիրքերուս հետ կ'ապրիմ մինակ,
 Անոնք եզան հաճոյքս հիմակ :

Միրգ, կարկանդակ, սեր եւ շաքար
 Հրապոյր չունին ա՛լ ինձ համար :
 Գրքիչ, կարկին, թուղթ եւ տետրակ
 Խաղալիքներս եզան հիմակ :

ՌԱՌՅԲ. — Խելօքնալ, սուրճ . — Հաճոյք, խէ՛ք : — Միրգ, էե՛ղ : — Կարկանդակ, արցա՛ք : — Հրապոյր, զե՛ղ, ճաշի՛ք : — Կարկին, խէ՛ք :

ՊԱՏՈՒԼԻՐ. — Վերի ոտանաւորը գոց սորվեցէ՛ք, եւ պատմեցէ՛ք թէ ի՞նչ ըսել կ'ուզէ :

22. ԵՐԵՍԸ ԿԱԽ ՏՂԱՆ

Տես, Գրիգոր նորէն անկիւն մը քաշուեր նստեր է : Գլուխը կախած է և մէկուն չի նայիր : Մայրը քանի մը անգամ կը կանչէ և Գրիգոր չերթար . մատուըներով աչքերը կը շփէ . շրթունքները կախած է . լացը երեսէն կը վազէ :

Մայրը ձեռքը վար առնել կ'ուզէ : Գրիգոր կը հրէ իր մօրը ձեռքը, և նորէն երեսը անդին կը դարձնէ : Գրիգորին ընկերները զինքը բնաւ չեն սիրեր, ինչու որ անիկա ամէն խաղի մէջ կը գժտի, կռիւ կը հանէ և ետքը անկիւն մը կը քաշուի ու երեսը կը կախէ :

Մարդ չի սիրեր այն տղան որ երեսը կը կախէ ու կուլայ : Ի՞նչ զէջ և զզուելի բան է ատիկա :

ԲԱՌԵՐ. — Անկիւն, +եռէ . — Կախել, -մ-դ . — Շփել, -վ-լ-մ-դ . — Շրթունք, որ-որ-դ . — Լաց, -լ-լ-մ . — Վազել, -դ-մ-դ . — Հրել, որ-ը-դ-դ-դ . — Դարձնել, չէ-վ-ր-դ-դ . — Գժտիլ, որ-ը-լ-մ-դ . — Կռիւ, դ-վ-կ . — Քաշուիլ, շէ-վ-լ-մ-դ . — Լալ, -լ-լ-մ-դ . — Ջզուելի, դ-վ-ն-ե-ճ-դ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Գրիգոր ի՞նչ տեսակ տղայ է : Մօրը խօսքը մտիկ կ'ընէ : Գրիգորին ընկերները ինչո՞ւ չեն սիրեր զանիկա : Երեսը կախ տղաքները սիրելի կ'ըլլա՞ն :

15. ՀՐԱ ՀԱՆ Գ

Ի՞նչ կ'ընեն սա արհեստագործեր .

Ժամագործ, դարբին, ատաղձագործ, երկաթագործ, հացագործ, մտավաճառ, դերձակ, տիրացու, նաւավար, կառապան, պարտիզպան, հիւսն, որմնադիր, ճարտարասպետ, կահագործ, հնակարկատ, դեղագործ, լսոհարար, նպարավաճառ, կօշկակար, գրածախ, տպագրիչ, բժիշկ, ատամնարոյժ :

ՕՐԻՆԱԿ. — Ժամագործը աւրուած ժամացոյցներ կը շինէ :

23. Ա Ն Ձ Ե Ր

Եղբայր . քոյր . եղբօրորդի . քեռորդի . հօրաքոյր .
 մօրաքոյր . հօրեղբայր . մօրեղբայր . հայր . մայր . մօր-
 եղբօրորդի . հօրեղբօրորդի . քեռի . քենեկալ . զոքանչ .
 կեորայր . տղայ . աղջիկ . ծառայ . աղախին . աներձագ .
 կնքահայր . կնքամայր . հարս . կեսուր . վեսայ . տան-
 տիկին . այր . օրիորդ . մօրու . հօրու . պապ . մամ .
 տագր . քեռայր . ներ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Այրերու եւ կիներու անունները որոշե-
 ցէ՛ք : Չամուսնացող մարդ մը ի՞նչ ազգականներ կրնայ ու-
 նենալ : Ամուսնացեալ մարդ մը ի՞նչ ազգականներ կրնայ
 ունենալ :

24. Հ Ո Լ Ո Վ Ո Ւ Մ

ԵԶԱԿԻ		ՅՈՒՆԱԿԻ		
Ո.	Բարութիւն	Ելիբ	Բարութիւններ	Ելիբիեր
Ս.	Բարութեան	Ելիյից	Բարութիւններու	Ելիբիերից
Տ.	Բարութեան	Ելիյի	Բարութիւններու	Ելիբիերե
Հ.	Բարութիւն	Ելիյի	Բարութիւններ	Ելիբիերի
Բ.	Բարութենէ	Ելիբեցեաց	Բարութիւններէ	Ելիբիերեաց
Գ.	Բարութեամբ	Ելիյի իլի	Բարութիւններով	Ելիբիեր իլի

ՎԱՐԺ. — Վերի օրինակին պէս հօլովեցէ՛ք հիւանդու-
 քիւն , հարսուքիւն , բարկուքիւն , աղխուքիւն :

16. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ի՞նչ կը դնեն .

Գաւաթին մէջ , շիշին , կաղամարին , քոսկին , պայու-
 սակին , պնակին , կանթեղին , դարանին , կողովին , ախո-
 ոին , բանախին , աղամանին , խնկատուփին , վանդակին ,
 իւղամանին , դոյլին , դրամարկիլին , պահարանին , հաւնոցին :

25. ՄԱՆՈՒՇԱԿ

Այ մանուշակ .

Իմ անուշակ ,

Ի՛նչ աղուոր դաս

Ինձի կուտաս :

Կակաչին պէս

Ցուցամոլ շես .

Բուրմանդ համար

Չես պարծենար :

Թուփերուն տակ

Պահուած մինակ ,

Խոնարհ , անտես ,

Բոյր կ'արձակես :

Կ'ուզեմ ես ալ

Քեզ պէս բլլալ ,

Այ մանուշակ

Իմ անուշակ :

ԲԱՌՆԲ. — Մանուշակ , հնէ+չէ . — Անուշակ , Բ-դլը . —

Կակաչ , լւի . — Ցուցամոլ , +էնդինէ կեօդերէն . — Բուրում ,

բօթո . — Պարծենալ , էօյէննէր . — Թուփ , պօրոսը = շէ . —

Պահուած , կէղիւննէր . — Խոնարհ , = լւի (հանգո-դ) . — Անտես ,

կեօրէննէր . — Բոյր , բօթո . — Արձակել , արշարը լէրէր , բոյ

լէրէր :

ՊԱՑՈՒԷՐ. — Կերի ոտանաւորը պոց սորվեցէ՛ք եւ

բարձրաձայն արտասանեցէ՛ք :

17. ՀՐԱՀԱՆԳ


Ի՞նչ բանէ շինուած է .

Կարաղը , հացը , ալիւրը , պանիրը , թուղթը , կզմինարը ,

կաթսան , թաղարը , դրիչը , դիրքը , կօշիկը , հազուսորը ,

զրամը , աթոռը , կասկարան , զմեղին , սոսինձը , պայտը ,

ձիթալիւղը , քացախը , կերպասը :



26. ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Թղթալանառասան մեզ

Գրի համար աղէկ թուղթ ունի՞ք: — Շատ տեսակներ ունիմ. դուք ի՞նչ թուղթ կ'ուզէք: — Ճերմակ և գծաւոր. լաւ տեսակ ըլլայ: — Օրինակները տեսէ՛ք: Գունաւոր ալ կուզէ՞ք: — Այլեւայլ մեծութեամբ պահարաններ ալ տուէ՛ք: — Ահաւասիկ զանազան գոյներով պահարաններ: — Կ'աղաչեմ մեծ շիշ մը մեղան ալ տուէ՛ք, մանիշակազոյն, մէկ քանի հատ ալ աղէկ գրիչ: Կարկինի տուփ և ներկի համար վրձիններ ունի՞ք: — Այո՛, դպրոցական տետրակներ ալ կուզէ՞ք: — Կուզեմ, բայց լաւ կազմուած ըլլան: — Տպագրական թուղթ ալ ունի՞ք: — Ասոնք շատ սուղ են, միւս տեսակէն տուէ՛ք: Մէկ ժամէն ամէնքն ալ պատրաստեցէ՛ք:

ԲԱՌՆԵՐ. — Թղթալանառասան, Կեդրեան Կոնստանտնուպոլիս, Կոնստանտնուպոլիս. — Գծաւոր, ՆԱԿԱՆ. — Օրինակ, Կոնստանտնուպոլիս. — Այլ եւ այլ, ՏԻՆԱ ՏԻՆԱ (Տոն-Կոնստանտնուպոլիս). — Մանիշակազոյն, Կոնստանտնուպոլիս. — Պահարան, ՆԱԿԱՆ. — Զանազան, ՏԻՆԱ ՏԻՆԱ. — Կարկինի տուփ, Կոնստանտնուպոլիս. — Վրձին, ՏԻՆԱ ՏԻՆԱ. — Կազմուած, ՏԻՆԱ ՏԻՆԱ. — Տպագրական թուղթ, Կոնստանտնուպոլիս. — Պատրաստել, Կոնստանտնուպոլիս:

27. ԲԱՐԻ ՊՁՏԻԿ ՏՂԱՅ ՄԸ

Առտու մը շատ կանուխ հանդիպեցայ պղտիկ տղու մը որ գիւղէն կը դառնար, իր պղտիկ բազուկները բեռնաւորած չոր փայտերով:

Հարցուցի անոր՝ «Ո՞րկէ կուգաս, պղտիկ, այսքան կանուխ?»

— Անտառէն, պարոն, ուր փայտ ժողվեցի մայրիկիս համար:

— Դուն շատ յոգնած ըլլալու ես:

— Ո՞հ, ոչ, պարոն, ես արդէն զօրաւոր եմ, վեց տարու եմ, և յետոյ մայրիկս շատ կը նեղուի իմ պղտիկ եղբայրս և քոյրս խնամելով, և ես անոր կ'օգնեմ:

Գրկեցի զայն և ըսի. «Ահա ազնիւ տղայ մը որ կը սիրէ իր մայրը, ասիկա պարկեշտ մարդ մը պիտի ըլլայ»

Տղաքները պէտք է օղնեն իրենց ծնողաց, անոնց աշխատութիւններուն մէջ:

ՌԱՌՅԵՐ. — Բազուկ, քու. — Բեռնաւորած, էէ-+վնիշ. — Անտառ, քոն. — Յոգնած, երբ-ւնաշ. — Զօրաւոր, քո-վէրի. — Նեղուիլ, «էբւն-է. — Խնամել, դ-է-մ-է, քոյր-է-մ-է. — Օգնել, ե-բ-բ-է ե-բ-է+. — Գրկել, քո-մ-է-լ-մ-է. — Պարկեշտ, ն-մ-ա-լ-ւ. — Ծնողք, ե-դ-վէյն:

ՀԱՐՑԱՐԱՆ. — Պղտիկ տղան ո՞ւրկէ կուգար կտր: Որո՞ւ համար փայտ ժողված էր: Այս բնոր զինքը չէ՞ր յոգնեցուցած: Պղտիկ տղաքները ի՞նչ պէտք է ընեն իրենց ծնողաց:

18. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Կեսերուն տիւ ձայնաւոր գրեր դնելով բառեր կազմել եւ տալ նշանակութիւնը.

պ . ր	բ . ղ	պ . խ	փ . ղ	ս . ր	ք . ր	դ . ր	ս . խ
դ . ծ	բ . լ	խ . տ	շ . հ	դ . հ	հ . ր	դ . ս	ժ . ր
ծ . ծ	կ . ր	շ . տ	չ . ր	ղ . տ	տ . ր	փ . ղ	լ . ո

28. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏՂԱՅՈՑ ԼԱԻ ԵՒ ՅՈՌԻ ՅՍՏԿՈՒԹԻՒՆՔ

Ամէն դպրոցի մէջ երկու տեսակ աշակերտներ կը գտնուին : Անոնցմէ ոմանք կ'ըլլան հլու , բարի , քաղցր , ուշադիր , որոնք իրենց ուսուցիչներուն հետ մեծ յարգանքով կը վարուին և ընկերներուն հետ՝ մարդասիրութեամբ : Անոնք միշտ դոհ կ'ըլլան և ուրախ : Բայց կան նաև այն տեսակ տղաքներ որոնք անփոյթ , չար , կեղծաւոր , ծոյլ , անկիրթ , անհնազանդ , հպարտ են և իրենց ընկերներուն հետ խիստ կոշտութեամբ կը վարուին : Ի՞նչ զէջ յատկութիւններ են ասոնք : Բարի տղաքները պէտք է որ հեռու կենան այս տեսակ չար և յոռի ընկերներէ :

ԲԱՌԵՐ. — Յատկութիւն , Ինքն . — Հլու , Ինքուլ . — Ուշադիր , Կեղծաւոր . — Յարգանք , Երեք . — Վարուիլ , Էրեւնի . — Մարդասիրութիւն , Ինքնիք . — Դոհ , Էրեւն . — Անփոյթ , Էրեւն . — Կեղծաւոր , Էրեւն . — Անհնազանդ , Ինքուլ . — Հպարտ , Էրեւն . — Կոշտութիւն , Էրեւն :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Դպրոցականի մը լաւ յատկութիւնները որոնք են : Դէջ յատկութիւնները որոնք են : Բարի տղաքները ի՞նչ ընելու են :

19. ՀՐԱՀԱՆԴ

Հետեւեալ բառերուն մէջ գիր մը փոխելով նոր բառեր ժինել եւ օալ նշանակութիւնը .

Հաց , սոխ , ջուր , մայր , փայտ , փուռ , լեռ , խաղ , տուն , լոյս , ձուկ , ծառ , ծեր , սագ , հով , մուկ , գոյն , նոր , մոմ , բարի , մարդ , դաշտ , նուշ , սեր , մորթ , մաս , քանակ , հոր , քայլ , ոսկոր , թեւ , լուր :

ՕՐԻՆԱԿ. — Հաց — հաւ . Սոխ — սեխ . Ջուր — մուր :

29. ՉՈՒՆՎՈՒՄ (Շարունակութիւն)

ԵԶԱԿԻ

ՅՈՒՆԱԿԻ

Ո.	Մով	Տեցիզ	Մովեր	Տեցիզեր
Ս.	Մովու	Տեցիզից	Մովերու	Տեցիզերից
Տ.	Մովու	Տեցիզից	Մովերու	Տեցիզերից
Հ.	Մով	Տեցիզի	Մովեր	Տեցիզերի
Ք.	Մովէ	Տեցիզսեց	Մովերէ	Տեցիզերսեց
Գ.	Մովու	Տեցիզիլի	Մովերով	Տեցիզերիլի

Վ.Ա.Բ.Ժ. — Վերի օրինակին սլա հոլովեցէ՛ք հետեւեալ բառերը . կով , ձի , հով , հաւ , մանջ :

30. Խ Ր Ա Տ

Մի խնդրեր Ասա... մէ
 Ո՛չ փող , ո՛չ պատիւ ,
 Այլ քեզ կրթելու
 Խեղճ , շնորհք , սիրտ ազնիւ :
 Երբեք մի՛ պարծիր
 Թէ շատ գիտուն ես ,
 Որքան բան սորվիս
 Ա՛յն օգուտ է քեզ :

ԲԱՌՆԲ. — Խնդրել , իրեմէ . — Փող , գումար . — Պատիւ , իշխան . — կրթել , դաստիարակել . — Երբեք , երբեք . — Պարծենալ , եջնել . — Գիտուն , անբան . — Օգուտ , օգուտ :

ՊԱՏՈՒԷԲ. — Վերի ստանաւորը գոց սորվեցէ՛ք եւ բարձրաձայն արտասանեցէ՛ք :

30. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ինչ բանի կը գործածեն (պատասխանեցէ՛ք ամբողջ նախադասութիւններ կազմելով) .

Գրիչը , թուղթը , դաւաթը , սնակը , աթոռը , սանարը , կօշիկը , ձին , եզը , շունը , արօրը , սայլը , ածուխը , փայտը , պատասաքաղը , դպարը , ասեղը , շոգենաւը , թին , բամպակը , երկաթը , սակին , արծաթը , դերձանը , ուղար , ուրազը , աճառը , գորգը , կղմինարը , խնկամանը , ծխափայտը

ՕՐԻՆԱԿ. — Գրիչը կը գործածեն զիր գրիչու համար :

31. ԱՆՀՆԱԶԱՆԴ ՏՂՈՒՆ ՊԱՏԻԺԸ

Պաղտիկ ամէն օր դպրոց երթալու ատեն քարաշէն կամուրջէ մը կ'անցնէր : Մայրիկն անոր կ'ըսէր միշտ . « Տղան , կամուրջին պատէն վար մի ծռիր , գետին մէջ կ'իյնաս : » Բայց Պաղտիկ շատ կը փափաքէր պատին վրայէն գետը նայիլ , և կ'ըսէր . « Կարելի է գետին մէջ ձուկեր կը տեսնեմ : »

Օր մը Պաղտիկ ելաւ քարակոյտի մը վրայ , երկնցաւ և սկսաւ նայիլ : Բան մը չի տեսաւ , այլ ոտքը սահելով՝ գետին մէջ ինկաւ :

Բանի մը մարդիկ շուտ մը վազեցին և գետէն հանեցին Պաղտիկը , մարած և կիսամեռ վիճակի մէջ : Ծակատը քարի մը զարնուելով ծակած էր :

Այսպէս խեղճ Պաղտիկ իր պատիժը դտաւ և այնուհետև միտքը դրաւ մօրը պատուէրը պահել :

ԽՐԱՑ. — Պէտք է որ աղաք իրենց ծնողաց պատուէրները պահեն և հնազանդ ըլլան անոնց :

ԲԱՌՍԲ. — Քարաշէն , Կամուրջ , Կամուրջ , Կամուրջ . — Մորի , Եղբէր . — Փափաքիլ , Երբեք . — Կարելի է , Դեմք . — Քարակոյտ , Բռնեղբէր . — Սահիլ , Գոյմէ . — Մարած , Դոյւմբէ . — Կիսամեռ , Երբեք . — Մակած , Եղբէր :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Ստուգուի՞ր Պաղտիկին ի՞նչ կը պատուիրէր : Պաղտիկ պատուէրը պահեց : Ի՞նչ պատահեցաւ անոր : Այս բանը Պաղտիկին խրատ եղա՞ւ :

32. ՀՐԱՀԱՆԴ

Գրեցե՛ք երեք անուն

Մտի , հագուստի , խաղալիքի , պտուղի , ծաղիկի , թռչունի , ընտանի կենդանիի , վայրի կենդանիի , ձուկի , նուազարանի , կարասիի , ըմպելիքի , ուտելիքի , շէնքի , մարդու , կնոջ , սողունի , միջատի , արհեստաւորի :

ՕՐԻՆԱԿ. — Կաղնի , բալի , թթենի :

32. ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Պարտեզի մեջ

Թէ որ կուզէք քիչ մը պարտեզ իջնանք : Շատ հաճելի է ինձ երբ ժամանակս կ'անցնեմ ծառերուն և ծաղիկներուն մէջ : Մեր ծաղկապարտէզը զանազան ծաղիկներ ունի, սակայն շատ մասեր չունի : Շատ և զանազան գոյներով վարդեր ունինք : Ի՞նչ լաւ կը հոտին : Վարդերուն անուշահոտութիւնը ինձ գլխու ցաւ կը պատճառէ, սակայն մանուշակներու և շուշաններու հոտը շատ հաճելի է ինձ : Քիչ մը յառաջ եկէք և տեսէք սա մեխակները, յակինթները, շուշանները, կակաչները և արեւածաղիկները : Նայեցէք ո՞րքան բարձրացան թանթրուենիները : Հոս ծաղիկները խոտերուն մէջ խեղդուած են : Պարտիզպանը ուշադրութիւն չէ ըրած : Կարծեմ թէ այս ծաղիկը անթառամ է, սակայն միւսները սկսան թառամիլ :

ՈՍՈՍԲ. — Ծաղկապարտեզ, շէշ + դոհլէտի . — Մաս, քէլ . — Հոտիլ, քոքտի . — Անուշահոտութիւն, կիշէլ քոքո . — Ցաւ պատճառել, ուրը վերտի . — Շուշան, շոփոք շէշի . — Մեխակ, քոքնֆէլ . — Յակինթ, շիփոքիլ . — Կակաչ, լուի . — Արեւածաղիկ, ոյ շիշի . — Թանթրուենի, փիքի . — Խեղդուած, ոգլուլուլ . — Ուշադրութիւն, ոքիք . — Անթառամ, քոքոտի . — Սկսիլ, ուլուփ :

33. ՀՐԱՀԱՆԳ

Ըսե՛ք բէ հետեւեալներն ինչո՞վ իբարու կը նմանին .
 Զիւնն ու կաթը : Մեղրն ու շաքարը : Արեւն ու սպիկն :
 Բանանն ու գիշերը : Շողկնաւնն ու շողկեկառքը : Շողկնաւնն ու նաւակը : Փետուրն ու տերեւը : Քարն ու փայտը :

ՕՐԻՆԱԿ. — Զիւնն ու կաթը զոյնով իրարու կը նմանին . երկուքն ալ ճերմակ են :

33. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ

Երբ առաւօտուն քունէդ ելնես, անմիջապէս սենեակիդ պատուհանները բաց, որպէս զի օդը մաքրուի. որովհետեւ սենեակիդ օդը գիշերը շունչէդ ապականած է: Մեր շունչը միասակար է մեզի, կը հիւանդացնէ: Անկողինիդ մէջ գիշերը գլուխդ վերմակէն դուրս պահէ, մաքուր օդ չնշելու համար:

Առէն առաւօտ պաղ ջուրով լուսն երեսդ, վիզդ, ականջներդ, կուրծքդ և բազուկներդ: Երբ այսպէս լուացուիս զուարթութիւն և աշխոյժ կուգայ վրադ: Յետոյ նախաճաշդ ըրէ և զնա՛ աշխատութեանդ:

Առողջ ըլլալու համար պէտք է սիրել մաքրութիւնը և չափաւորութիւնը:

ՌԱՌՆԵՐ. — Քուն, սոյն. — Մաքրել, դիւրանել. — Շունչ, շնչէն. — Ապականած, թնամալ. — Վնասակար, շարժել. — Հիւանդացնել, հարգել. — Անկողին, կուրծք. — Վերմակ, երկուս. — Չուարթութիւն, շիւք, խիտ. — Աշխոյժ, շիւքիւն. — Նախաճաշ, գաւառ. — Չափաւոր, գործ:

33. ՀՐԱՀԱՆԳ

Հետեւեալ խօսքերը ամբողջացուցի՛ք կէտերուն տեղ յարմար բառեր դնելով:

Հացագործը . . . կը խմորէ: Կօշկակարը . . . կը կարէ: Շունը . . . կը պահպանէ: Գայլը . . . կ'ուտէ: Կատուն . . . կը բռնէ: Արևը . . . կը լուսաւորէ: Բժիշկը . . . կը դարմանէ: Եկեղեցին . . . տունն է: Մեղուները . . . կը շինեն: Ամառուան եղանակներն են . . . և . . . : Պաղովը . . . ստուղն է: Ճագարը երկայն . . . ունի: Քացախը . . . կը պատրաստեն: Տարին . . . օր ունի:

34. Ա Ռ Ա Ի Օ Տ

Գիշերն անցաւ : Արշալոյսն եկաւ . կը լուսնայ : Աքաղաղներն առտուան գալուստն արդէն աւետած են , և քունէ արթնցող թռչունները պատուհաններուն առջև կը ճռուողեն : Գիւղացիներն անկողիններէն կ'երնեն , արջառներուն կեր կուտան , եզերը կամ ձիերը կը լծեն ու իրենց դաշտային աշխատութեան կ'երթան :

Այս միջոցին արեւը լեռներուն ետեւէն բարձրացած է , անոր ճառագայթները տակաւին քնացող կենդանիները կ'արթնցնեն : Մեղուները ծաղիկներուն մէջ մեզր կը փնտռեն : Աղանինները արտերը կ'երթան իրենց նախաճաշիկ փնտռելու : Երէկ ինչ որ չոր էր , այսօր կրկին թարմացած է : Մարդիկ աշխոյժով կ'երթան իրենց գործին : Կենդանիներն ալ ուրախ են : Ամէն շնչաւոր արթնցած է , կը շարժի , կ'աշխատի :

Ո՛րքան հաճելի է առտուան զով օդը :

ՌԱՌՆԲ. — Արշալոյս , շփփ . — Գալուստ , կելլ . — Աւետել , հալ-դի-վերդ . — Ճռուողել , գալարըն կօրօկ . — Արջառ , ետի-շ , ինկ . — Կեր , եե՛ . — Լծել , գոյճփ , ի-գ-ճփ . — Գաշտային , գըրդ-տի . — Բարձրանալ , ել-տելվե՛ . — Ճառագայթ , շիլ . — Տակաւին , դ-հ . — Կրկին , դե՛ր-ը . թարմացած , դ-դիլե՛վլ . — Շնչաւոր , հանլ . — Շարժիլ , հ-ը-տի դ-դիլ :

ՀԱՐՅԱՐԱՆ. — Նկարագրեցէ՛ք առաւօտը :

34. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ըսե՛ք եւ գրեցե՛ք

Օրուան ժամերը , շաբթուան օրերը , տարուան ամիսները եւ եղանակները , գլխաւոր տօները :

35. ՀՈՆՈՎՈՒՄ (Շար.)

	ԵԶԱԿԻ		ՅՈՒՆԱԿԻ	
Ո.	Տուն	էվ	Տուներ	էվլեր
Ս.	Տան	էվին	Տուներու	էվլերին
Տ.	Տան	էվի	Տուներու	էվլերի
Հ.	Տուն	էվի	Տուներ	էվլերի
Բ.	Տունէ	էվսեց	Տուներէ	էվլերսեց
Գ.	Տունով	էվիվ	Տուներով	էվլերիվ

ՎԱՐԺ. — Վերի օրինակին պէս հարկեցէ՛ք .
Շուն , աշուն , ա՛նուն , ժողովուրդ , մանուկ :

ԾԱՆՕԹ. — Դասատուն կ'օգնէ աշակերտաց այս անուն-ներուն հարկման համար :

36. Ի Ր Ի Կ Ո Ւ Ն

Իրիկուն կ'ըլլայ = Արեւը մարը կը մտնէ : Արեւմուտքի կողմը գտնուող ամպերը վարդի պէս կը կարմրին արեւին վերջին ճառագայթներէն : Այս գեղեցիկ տեսարանը վերջալոյս կը կոչուի : Օրուան տաքութիւնը անցած է : Հիմայ զովիկ հով մը կը փչէ : Զուրին վրայ մէգ կը գոյանայ : Խոտերը շաղէն կը թրջուին : Մժգուկներ անհամար խումբերով օդին մէջ կը խաղան :

36. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ըսէ՛ք թէ ի՞նչ գործիքներ կը գործածեն հետեւեալ արհեստաւորները .

Դերձակ , որսորդ , լուացարար , հովիւ , երկաթագործ , արդկող , գծագրիչ , մասվաճառ , պարտիզպան , որմնադիր , հիւան , նուագածու , ձկնորս , կառապան , սղոցող , փայտահար , հնձող :

ՕՐԻՆԱԿ. — Դերձակը կը գործածէ ասեղ , մկրատ , մատնոց , քանակ , չափ եւ այլն :

Թռչնիկներ մացառներուն մէջէն իրենց վերջին երգը կ'երգեն : Մեղուններն իրենց փեթակը կը վերադառնան : Մշակները դաշտէն ու հօտերն արօտավայրէն տուն վերադարձած են : Ամէնքն ալ յոգնած են ու հանգիստի կը կարօտին : Բայց մարդիկ, ինչպէս նաև կենդանիներ անօթի են ու կ'սպասեն իրենց ընթրիքին : Տանտիկինը անօթիներուն համար կերակուր կը պատրաստէ, և խոտով բեռնաւորուած մշակներ ալ կ'երթան ախոռին բնակիչները կերակրելու : Գիշ մը վերջը ամէն ոք պիտի քնանայ : Բարին Աստուած ալ պիտի հսկէ ամէնուն վրայ :

ԲԱՆՍԻՐ. — Մարը մանկէլ, պարժտ . — Կարմիրիլ, գըլը-
 ժտ . — Տեսարան, ճանչըր . — Վերջալոյս, գըլժոյրըլըլը .
 — Կոչուիլ, տէնտէ . — Մէդ, տիժան . — Գոյանալ, հօրըլ օլ-
 ժտ . — Շաղ, լէյ . — Մժղուկ, սիլըի-իւտ . — Հօտ, գօյան
 սի-րի-սի . — Արօտավայր, տըր . — Կարօտիլ, ինտի-ժը օլ-
 ժտ . — Ընթրիք, գըլժոյր Ետէյի . — Տանտիկին, էլ գօրըլը . —
 Պատրաստել, հըլըլըլժտ . — Կերակրել, Ետտէ վըրտէ . — Ա-
 մէն ոք, հերտէ . — Հսկել, ժոգայեդ օլժտ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Նկարագրեցէ՛ք իրիկունը :

26. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Հեծեւեալ բառերուն ծայրը իկ, ակ, ուկ նուազական մասնիկները աւելցուցե՛ք եւ ըսե՛ք թէ ի՞նչ կ'ըլլայ անոնց իմաստը .

1. Հայր, բարձ, մայր, շուն, քիթ, մանուկ, թոչուն, ծափ :
2. Գետ, ծով, լիզու, տուն, անտառ, հիւղ, տետր, ձուր :
3. Ձագ, էջ, գէր, տաք, մարդ, սեւ, կարմիր :

ԾԱՆՕԹ. — Դասատուն նախ պէտք եղած բացատրու-
 թիւնները կուտայ նուազականներու մասին, եւ յետոյ կ'օգնէ
 աշակերտաց վերոյիշեալ հրահանգը ընելու համար :

37. ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Կերպասավաճառին հետ

Պարոն, ի՞նչ կը վաժարէք : Մի քանի կերպոս գնել
 կ'ուզեմ, սակայն նախ օրինակները տեսնեմ : Աստու
 չեմ ուզեր վասն զի տեսակներնին ստորին է : Դուք
 օրինակներուն մի նայիք, անոնք աղտոտած են, այլ
 գոյնը ընտրեցէ՛ք և ես լաւագոյն տեսակէն ապրանք
 կը հանեմ : Այս կապոյտ գոյնը հաստատուն չէ : Եթէ
 կ'ուզէք կանանչէն առէ՛ք որ երբէք չի գունատիր : Ես
 բաց գոյններ չեմ ուզեր, մթագոյն բաներ կ'ուզեմ :
 Սա մոխրագոյնը ի՞նչ գին ունի : Մէթրոյո՞վ կ'ուզէք
 թէ կանգունով : Ինչպէս որ սովորաբար կը ծախէք :
 Կանգունը եթէ 13 դրչի տամ բան մը չեմ շահիր :
 Շատ սուղ է, այնքան արժէք չունի : Աւելի վար գի-
 նով չեմ կրնար տալ, որովհետեւ կը մնասեմ : Ասիկա
 բամպակեայ կ'երեւի և ոչ բրդեայ : Կը սխալիք, ան-
 հոգ եղի՛ք շատ լաւ ապրանք է : Ձեր խօսքին վստահե-
 լով կը գնեմ :

ԲԱՌՆԲ. — Կերպասավաճառ, գր-մ-ը սորուն . — Նախ,
 եմբ . — Տեսակ, ճին . — Ստորին, շուրջ . — Ընտրել, շ-
 յըմբ . — Լաւագոյն, էն էյէ . — Ապրանք, մալ . — Հաստա-
 տուն, արանընդիւր . — Գունատիր, բնիկ տեղ . — Մոխրա-
 գոյն, գիւլ բնիկ . — Մթագոյն, գոյն բնիկ . — Սովորաբար,
 լիւրտիկ . — Արժէք, գըյոգ . — Վնասել, շուրջ երեւի . —
 Բամպակեայ, գ-մ-գորուն . — Բրդեայ, էնանդէն . — Սխալիլ,
 եւնըմբ . — Անհոգ եղի՛ք, տեղ-է երեւի . — Վստահիլ, է-
 շէյեղ երեւի :

27. ՀՐԱ ՀԱՆԳ

Հոլովեցի՛ք հետեւեալ բառերը .

Արա, քաղաք, որոտում, գեղեցիկութիւն, լեռ, սեղա-
նատուն :

35. ՅՈՐԵՆԻ ՀԱՍԿԵՐԸ

Օննիկ օր մը հօրը հետ դաշտն ելաւ : Իր հայրը հողագործ էր և կը նայէր թէ ցորենները հասունցե՞ր են : Օննիկ ըսաւ . « Հայրիկ, տես, ցորենի բուններ կան որ ծռած են և կան որ շիփշիտակ բարձր կը կենան , կ'երեւի թէ այն բուններն որ շիտակ չեն լաւ հասկեր բունին » :

Հայրը շուտ մը երկու հասկ կոտրեց և իր որդւոյն ցոյց տալով ըսաւ . « Նայէ՛, զաւակս , այս հասկն որ համեստութեամբ գլուխ կը ծռէր , ցորենի հատիկներով լեցուն է , և ընդհակառակն ան որ շիտակ կը կենար պարսպ է : Մարդիկ ալ այսպէս են . անոնք որ սոգէա են գոռոզութեամբ կը պարծին և բարձր կենալ կ'ուզեն , իսկ գիտուն մարդիկ համեստութեամբ կը զղուշանան պարծենալէ :

ԲԱՌՆԵՐ. — Հասկ , գլուխ . — Հողագործ , շիփշ : — Հասուննալ , եէրէշէտ , զլուխ . — Բուն , ֆիտն սոգը . — Շիփշիտակ , որորոջր . — Որդի , եղբոր . — Համեստութիւն , հանձնալիք . — Հատիկ , հարկ . — Գոռոզութիւն , փշիշիտակ . — Զղուշանալ , սոգընսոգ :

ԾԱՆՕԹ. — Շիփշիտակ , կրակոտ , կասկարմիր , այս տեսակ զանազան վարժութիւններ ընել տալ աշակերտաց եւ աղայարեւ անոնց նշանակութիւնը :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Օննիկ ի՞նչ կը հարցնէր հօրը . — Անիկա ի՞նչ պատասխան տուաւ . — Այս պատմութեան բարոյականը ի՞նչ է :

36. ՀՐԱՀԱՆԳ

Ի՞նչպէս կ'ըլլայ

Ծովուն ջուրը , լեռը , հօրը , կապարը , ասեղը , ձիւնը , բունը , վարդը , բամպակը , ասկիլին , երկինքը , շաքարը , քարը , գիշերը , ամառը , ձմեռը , քացախը , պղպեղը :

ՕՐԻՆՍԱԿ. — Ծովուն ջուրը աղի կ'ըլլայ :

39. ՄԱՄՈՒԿՆ ՈՒ ՇԵՐԱՄԸ

Օր մը մամուկը շերամին հետ խօսքի բռնուեցաւ .
 Մամուկն ըսաւ . « Ի՞նչ է այս իմ քաջածս մարդոց
 ձեռքէն , իմ տունս աղուօր կը շինեմ , և մարդիկ
 աւելը կ'առնեն և բոլոր շինածս կ'աւրեն , ի՞նչ խենթ
 ու անգութ են : Հապա դ՛ու , Շերամ , օր զղուելի միջատ
 մըն ես , դ՛ու միայն սիրելի ես անոնց , քու շինածդ
 խնամքով կը ժողվեն և կը պահեն , թէ և իմ շինածս
 աւելի հաստ է : »

Շերամը պատասխանեց . « Կ'աղաչեմ այդչափ մի՛
 բարկանար , ամէն մարդ գիտէ որ շատ ճարպիկ շինող
 ես , ամէն մարդ կը խոստովանի որ շատ նուրբ թելե-
 րով կը հիւսես ոստայնդ , բայց ինձ ըսէ՛ ի՞նչ օգուտ
 ունի , մինչդեռ իմ շինած թելերս ամէն տեղ օգտա-
 կար և յարգի են : »

ՔԱՆՍԵՐ. — Մամուկ , եօրէնձե՛ք պե՛տօ՛նէյէ . — Շերամ , է՛կե՛ք
 պե՛տօ՛նէյէ . — Սօսքի բռնուիլ , լա՛բըրըր . — Բո՛ւրո՛ւմ-ժ . — Աւել ,
 տե՛կէ՛րիէ . — Անգութ , Վերհո՛ւրդիչ . — Միջատ , պե՛տօ՛նէ . —
 Ո՛սամք , ի՛նչէ՛մ , տե՛կ-տ . — Բարկանալ , ի՛րըրլանժ . —
 Ճարպիկ , է՛կէ՛ր . — Սոստովանիլ , ի՛րիւր-ժ երդե՛ք . — Նուրբ ,
 ի՛նձե՛ք . — Ոստայն , եօրէնձե՛ք :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Ի՞նչպէս կենդանիներ են մամուկը եւ
 շերամը . — Մամուկը ինչո՞ւ կը դանդաղէր եւ ի՞նչ կ'ըսէր .
 — Շերամը ի՞նչ պատասխան տուաւ . — Ո՞վ իրաւունք ու-
 նէր . — Ի՞նչ է այս պատմութեան բարոյականը :

39. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Ի՞նչ բան կրնայ ըլլալ

Ճերմակ , սեւ , թափանցիկ , սուր , փութ , ծանր , կա-
 կուղ , կանանչ , լեղի , անուշ , փոքր , նեղ , երկայն . կա-
 պոյտ , աղի , տաք , պաղ , կլոր , պեղեցիկ , հեղուկ , կարծր ,
 թանձր , սահուն , խակ , հասուն , եռանկիրնաձև , քառա-
 կուսի , ուղիղ , սխալ , լուսաւոր , մութ , պայծառ , խոր ,
 ընդարձակ , անսահման , անհաճոյ , դաշնակաւոր , կպչուն ,
 զիւրավառ , անտեսանելի :

ՕՐԻՆԱԿ. — Ձիւնը , կաթը , շապիկը , ալիւրը ճերմակ են :

40. ՀՈԼՈՎՈՒՄ (Շար.)

ԵԶԱԿԻ

ՅՈՒՔՆԱԿԻ

Ո. Ամառ	Նազ	Ամառներ	Նազար
Ս. Ամառուան	Նազրն	Ամառներու	Նազարն
Տ. Ամառուան	Նազա	Ամառներու	Նազարա
Հ. Ամառ	Նազր	Ամառներ	Նազար
Բ. Ամառուրնէ	Նազրան	Ամառներէ	Նազարան
Գ. Ամառով	Նազրլա	Ամառներով	Նազարլա

ՎԱՐԺ. — Վերի օրինակին պէս հոլովեցէ՛ք .

Ձմեռ , երէկ , ցորեկ , դիշեր , հիմակ , իրիկուն , վաղը
եւ այլն :

41. Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

(Հաւկիթ)

Ճերմակ , պզտիկ մէկ տակառ
Մէջն ուտելիք օգտակար .
Տակառս թէև դուռ չունի
Բայց տուն մըն է թռչունի :

20. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Խճչ բաներու մասերը կը կազմեն հետեւեալները .

Գլուխ , տանիք , թաղ , ճիւղ , բարձ (գլխու) , բանալի ,
ժամ , մատ , ներքան , օր , սանդուղ , լողակ , էջ , վայրկեան ,
արմուկ , ղեկ , անիւ , պայտ , կտուց , ճանկ :

ՕՐԻՆԱԿ. — Գլուխը մարմնոյն մէկ մասն է :

42. Շ Ն Ի Կ Ը

Շնիկս իմ սիրուն
 Ի՞նչ աղուոր ես դուն ,
 Ի՞նչ գանգուր վարսեր՝
 Գլխէդ են կախուեր :
 Երբ ուրախ ըլլամ ,
 Ու խընդամ խաղամ ,
 Ինձի հետ դուն ալ
 Կը սիրես խաղալ :
 Իսկ երբ սաստեհն զիս ,
 Ու ցաւի հոգիս ,
 Դուն ալ ինձի պէս
 Արցունք կը թափես :

ՐԱՌԵՐ. — Գանգուր , գլխէդ : — Վարս , ուլ . — Սաստեղ , ուղարկուի :

ՊԱՅՈՒԷՐ. — Վերի ոտանաւորը դոց սորվեցէ՛ք եւ բարձրաձայն արտասանեցէ՛ք :

31. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Պատասխանել հետեւեալ հարցումներուն .

- Ի՞նչ կը տեսնէք երկնքին վրայ :
- Ի՞նչ կը տեսնէք ծովուն վրայ :
- Ի՞նչ կը տեսնէք պարտէզներուն մէջ :
- Ի՞նչ կը տեսնէք քաղաքին մէջ :
- Ի՞նչ կը տեսնէք զիւղին մէջ :
- Ի՞նչ կը տեսնէք եկեղեցիին մէջ :

ՕՐԻՆԱԿ. — Երկնքին վրայ կը տեսնեմ ամպ , արեգակ , լուսին , լուսաւորներ , կայծակ , ծիրանեգօտի :

43. ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Դպրոց

Ինչո՞ւ այսօր կ'աճապարէք : Դպրոց կ'երթամ, վանն զի հիմայ զանդակը պիտի զարնուի : Ժամը քանի՞ն կ'սկսին դասերը : Կարծեմ թէ տակաւին դասատուները եկած չեն : Անոնք մենէ առաջ կուգան : Քանի՞ ուսանող կայ դպրոցին մէջ : Հարիւր արտաքին և ութսուն զիշերօթիկ : Դպրոցը քանի՞ կարգ ունի : Մեր վարժարանը երկու նախապատրաստական և չորս բարձրագոյն կարգեր ունի : Տնօրէնը ո՞վ է : Հիմնադիրը տնօրէն ալ է : Տարեկան քննութիւննիրդ ե՞րբ է : Քանի՞ ամիս արձակուրդ ունիք : Վկայադիրները ե՞րբ կը արուին : Դպրոցը տարին քանի՞ շրջանաւարտ կ'արձակէ : Օրը քանի՞ ժամ դաս կ'աւանդուի : Յառաջդիմութիւն կը մաղթեմ :

ԲԱՆՍԵՐ. — Աճապարել, —ճէլէ երգե՛ք . — Չանգակ, շան . Տակաւին, որհո . — Ուսանող, շնչէրդ, իւլեղէ . — Արտաքին, Նիհարէ, կէնդէ-դիւ . — Դիշերօթիկ, լէյլէ, կէճէլէ : — Նախապատրաստական, իրորէ . — Բարձրագոյն, պուլ, ողտոյէտ . — Տնօրէն, իրորէ . — Հիմնադիր, ճուտէ . — Քննութիւն, իճդէհան . — Արձակուրդ, արիւլ . — Վկայադիր, շահարէրնօ . — Շրջանաւարտ, իւնդէհէ . — Դաս աւանդել, րերս վերօք . — Յառաջդիմութիւն, դերտէր . — Մաղթել, —բղ— երգե՛ք :

33. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Սորվեցե՛ք հետեւեալ կենդանեաց ձայները .

Ոչխարը կը մայէ : Էշը կը զոայ : Կատուն կը մլաւէ : Ձիւն կը խրխնջէ : Շունը կը հայէ : Խոզը կը խանջէ : Այծը կը սարպայէ : Թութակը կը թօթօլէ : Կովը կը բառայէ : Առիւծը կը մանչէ : Դալը կ'ոռնայ : Ծնճուկը կը ճճուէ : Աղաւնին կը մնչէ : Սոխակը կը գեղգեղէ : Օձը կը սուլէ :

44. Գ Ա Ր Ո Ւ Ն

Գարունը կը յաջորդէ ձմրան : Գարնան մէջ արեւը օրէ օր աւելի տաքութիւն կը սփռէ : Անիկա կանուխ կը ծագի և ուշ մարը կը մտնէ , անոր համար օրերը կ'երկննան և դիշերները կը կարճնան :

Ձիւնն ու սառոյցը կը հալին : Արեւուն ճառագայթները մինչև հողին մէջ թափանցելով ձմեռը քնացող բոյսերը կ'արթնցնեն : Ձիւնածաղիկը գարնան գալուստը կը ծանուցանէ : Զատկածաղիկը ու մանուշակն ալ իրենց սիրուն գլուխները հողէն դուրս կը հանեն :

Մառերն ու թուփերը կ'սկսին բողբոջներ , տերեւներ ու ծաղիկներ երեւան բերել : Մարգագետինները կանանչով կը ծածկուին :

Արտոյտը , արագիլը , սոխակը , ծիծեռնակն և ուրիշ գաղթող թռչուններ կը վերադառնան մեզի :

Ողնին իր ձմրան քունէն կ'արթննայ : Մեղունները կը թռչին մեզը հաւաքելու : Եւ թիթեռնիկները իրենց օդային պարը կը պարեն :

22. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԼՐԳՂ Կ'ըճԵԳ

Սոհանոցին մէջ , մառանին , սեղանատան , ննջասենեկին , հիւրանոցին , վաճառատան , դպրոցին , եկեղեցիին , հիւանդանոցին , դեղարանին , գրասենեակին , թատրոնին , լուսցարանին , ընթերցատան , պարահանդէսին , տպարանին , դատարանին :

ՕՐԻՆԱԿ. — Սոհանոցին մէջ խոհարարը զանազան կերակուրներ կ'եփէ :

Հովիւն իր հօտը արօտավայրը կ'առաջնորդէ : Երկ-
րագործն իր արտը կը մշակէ , Պարտիզպանը կը փորէ
պարտէզը . հոն կը ցանէ , կը տնկէ ծաղիկներ և ուրիշ
բոյսեր : Տղաքներ կը խաղան բաց օդին մէջ :

Տարուան չորս եղանակներուն մէջ ամենազեղեցիկն
է դարունը որ երեք ամիս կը տեւէ . այսինքն, Մարտ ,
Ապրիլ , Մայիս :

ԲԱՆՍԵՐ. — Գարուն , էլ Կ-հ-ր . — Յաջորդել , արե-
ւելալ , կելել , արեւելալ . — Սփռել , արեւելալ , արեւելալ .
— Մազիլ , արեւելալ . — Սառոյց , արեւ . — Հալիլ , երեւել . —
Թափանցել , էլ Կ-հ-ր . — Արթնցնել , արեւելալ . —
Ձրւնածաղիկ , Գ-ր Էլ Էլ . — Ձատկածաղիկ , Գ-ր Էլ Էլ .
— Բողոք , Ֆէլ Էլ . — Երեւան բերել , Գ-ր Էլ Էլ . —
Արտոյս , Էլ Էլ Էլ . — Գաղթող , Կ-հ-ր Էլ Էլ . — Ոգնի ,
Էլ Էլ Էլ . — Հա-աքել , Բ-հ-ր Էլ Էլ . — Թիթեռնիկ , Էլ Էլ Էլ . —
Պար , Գ-ր Էլ Էլ . — Առաջնորդել , Էլ Էլ Էլ . — Մշա-
կել , արեւելալ . — Փորել , Գ-ր Էլ Էլ . — Յանել , Էլ Էլ .
— Տնկել , Էլ Էլ Էլ . — Եղանակ , Էլ Էլ Էլ . — Ամենազեղեցիկ ,
Էլ Էլ Էլ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Նկարագրեցէ՛ք դարունը եւ ըսէ՛ք թէ
ինչե՛ր կ'ըլլան այս եղանակին մէջ . — Գանի՞ ամիս կը տեւէ
դարունը :

ԾԱՆՕԹ. — Ամենազեղեցիկ , ամենազեղ , ամենասիրուն ,
եւայն , դերագրական ձևերուն վրայ վարժութիւններ ընել
տալ աշակերտաց :

34. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Հետեւեալ բառերուն մեկ մեկ հումանիք գտէ՛ք .
Մեծ , պղտիկ , մութ , տկար , հանդարտ , անքատ ,
փայլիլ , մրրիկ , մակոյկ , երկչոտ , հաւաքել , թուր , ստոյգ ,
տիղմ , մաքրել , հագուստ , ըմպելիք , վառարան :

45. Ա Ռ Ա Մ Ն Ե Ր.

1. Ծուրութիւնն ու անգործութիւնը աղքատութեան դուռներն են :

2. Մարդս չի գիտցածը հարցնելու համար պէտք չէ ամաչէ :

3. Ամէն տեսակ վէճ և կռիւ վաղուան թո՛ղ , և շահով կ'ազատիս :

4. Տգիտութիւնը ամօթ չէ , տգէտ մնալն է ամօթ : Գիրք կարդա՛, ուսիր և տգէտ մի՛ մնար :

5. Բարի ընկեր մը մարդուս մեծ գանձ է :

6. Գէշ խօսքերը սուր դանակէն աւելի սիրտ կը ցաւցնեն :

7. Ով որ քիչով դո՛հ կ'ըլլայ , նա երջանիկ կը համարուի :

8. Զի ճանչցած մարդուդ հետ ընտանեբար մի՛ վարուիր :

9. Աւելորդ բան ծախու իսկոյրը շուտով պէտք եղածը կը վաճառէ :

10. Պատիւը բոլոր հարստութենէ մեծ է :

ՔԱՌԾԲ. — Առած , արդը Դո՛ւլ . — Անգործութիւն , իշ-
-էլէ՛ . — Վէճ , կռիւ , շէշ , քովէ . — Ուսանիլ , եօրէն-Դո՛ւլ .
— Գանձ , արհիւն . — Գո՛հ , Դժ-Դո՛ւլ . — Համարուիլ , ար-
-օլ-Դո՛ւլ , ար-Դո՛ւլ . — Ընտանեբար , Դե-Դո՛ւլ . — Աւելորդ ,
-ար-Դո՛ւլ . — Վաճառել , ար-Դո՛ւլ :

ԾԱՆՕԹ. — 1. Դասատուն պէտք եղած բացատրութիւն-
ները թող տայ այս առածներուն նկատմամբ :

2. Աշակերտները պէտք է ի բերան ուսանին այս առած-
ները :

25. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Իճչ բաներով կ'ընեն հետեւեալ գործողութիւնները .

Կնքել , խարազանել , սուլել , աճառել , աղել , ածիլել ,
կապել , սահիլ , աւելել , բերել , կտրել , հաւաքել , արդկել ,
կարել , գծադրել , կշռել , չափել , վառել , ծխել , տաքցնել ,
թրջել , հերկել , քաղել :

ՕՐԻՆՍԱԿ. — Կնիքով կը կնքեն :

46. Գ Ա Ր Ն Ա Ն Ե Ր Գ

Հովը կ'ըսէ մեղմօրէն
 « Գարուն եկած է նորէն : »
 Թաշուն ծաղիկ և ժիր առու
 կ'աւետեն այս լուրն իրաշու
 « Գարուն եկած է նորէն : »

Տես, նա թնչպէս պաշտին վրայ
 նոր հարօխ պէս կ'երերայ .

Դաշտ և անտառ, ձորեր, լեռներ
 Ուրախութեան պար են բռներ,
 « Գարուն եկած է նորէն : »

Ձորէն, սարէն, բլուրէն
 Բիւր ծաղիկներ կը բուրեն .
 Օհ, ընկերներ, մենք ալ երթանք,
 Միացընենք երգ ու մաղթանք,
 « Գարուն եկած է նորէն : »

ԲԱՌԵՐ. — Մեղմօրէն, ե-լ-ը-ն-ճ-ը-ք . — Առու, գետն առու . — Աւետել, հ-թ-ր-է լ-ե-ր-է-տ . — Ձոր ր-է-ր-է . — սար, ր-է-լ-է . — Բլուր, +ի-լ-ի-տ ր-ու-լ . — Բիւր, ը-ղ-է-ն (ա-յ-ը-ը-լ) . — Բուրել, ք-օ-ք-ու լ-ե-ր-է-տ . — Օ'ն, հ-յ-ր-է . — Միացնել, ր-է-ր-է-լ-ը-ք-է-ր-է-տ . — Մաղթանք, ր-ու-լ :

ՊԱՏՈՒԷՐ. — Վերի ոտանաւորը գոց սորվեցէ՛ք ևւ բարձրաձայն արտասանեցէ՛ք :

36. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Հետեւեալ բառերը արական են, իզականները գրեցե՛ք .

Հայր, եղբայր, մանչ, հօրեղբայր, կնքահայր, փեսայ, աներ, քեռի, իշխան, պարոն, պապ, ծառայ, վարժապետ, այր, դրացի, դերձակ, Արշակ, տազր :

ՕՐԻՆԱԼ. — Հայր — մայր, եղբայր — քոյր, ևւայն :

47. ՀՈՒՆՎՈՒՄ (Շար.)

	ԵԶԱԿԻ		ՅՈՔՆԱԿԻ	
Ո.	Հայր	Փեօեր	Հայրեր	Փեօերլեր
Ս.	Հօր	Փեօերիմ	Հայրերու	Փեօերլերիմ
Տ.	Հօր	Փեօերե	Հայրերու	Փեօերլերե
Հ.	Հայր	Փեօերի	Հայրեր	Փեօերլերի
Բ.	Հօրմէ	Փեօերեօն	Հայրերէ	Փեօերլերեօն
Գ.	Հօրմով	Փեօեր իլի	Հայրերով	Փեօերլեր իլի

Վ.Ա.ԲԺ. — Հայրին պէս հուովեցէ՛ք մայր, եղբայր եւ այլն :

48. ՀԱՆԵԼՈՒԿ

(Արոս.)

Չորս ոտք ունի, մէկ կոնակ,
 Բայց ոչ գլուխ, ոչ բերան,
 Վըրան նստիլ դուք կրնաք
 Թէև քալել չուզեր ան :

37. ՀՐԱՀԱՆԳ

Առաջին բառերը սեռական ընել եւ նոյն բառերով խօս-
 քեր կազմել .

Նաւ կայմերը . — Տուն ապակիները . — Երկինք լուսա-
 ւորները . — Աշակերտ պարտականութիւնները . — Վարժապետ
 պատուէրները . — Ծով ջուրը . — Օր ժամերը . — Զմեռ օդը .
 — Ամառ օրերը . — Լեռ գագաթը . — Ծառեր ճիւղերը . —
 Տղաք քունը . — Մարդիկ բնակարանները . — Ծնողք սէր . —
 Գետեր ջուրը . — Ծուլութիւն վախճանը :

ՕՐԻՆԱԿ. — Նաւուն կայմերը երկայն են :

49. ԸՆԿՈՅՁ ԵՒ ԴԴՈՒՄ

Ամառուան օր մը գիւղացի մը ընկուզենիի մը շուքին տակ կը հանգչէր : Վեր նայելով տեսաւ որ ծառը ընկոյզներով ծածկուած էր : Ընկուզենիին քով բուսած էր դդումի բարակ ցօղուն մը, որ ծառն ի վեր մագլցեր էր, և որմէ կախուած էին ահագին դդումներ : Գիւղացին քիթին տակէն խնդաց ու ըսաւ . «Շիտակը եթէ աշխարհս ես ստեղծած բլլայի, փոխանակ այս մեծ ծառին ասանկ պտուղներ և այս բարակ ցօղունին ասանկ խոշոր պտուղներ տալու, դդումը ընկուզենիին վրայ կը բուսցնէի և ընկոյզը դդումի ցօղունին վրայ : Այն միջոցին վերէն ընկոյզ մը իյնալով գիւղացիին քիթին զարկաւ և արիւնեց : Այն ատեն գիւղացին գոչեց . «Մեղայ Աստուած, որ ըրածիդ չի հաւանեցայ : Եթէ վերէն ինկածը դդում մը ըլլար, զլուխս պիտի ջախջախէր : »

ԲԱՌԵՐ. — Դդում, գդոգ . — Հանգչիլ, բեռե երգի . — Ծածկուած, եօրդեւիլ . — Մագլցել, իբժանմոգ . — Ահագին, շոյեդ ունիւտ . — Ստեղծել, եւրագմոգ . — Նոյն միջոցին, օ եմագի . — Արիւնել, գանագմոգ . — Գոչել, գոչըմոգ . — Մեղայ, դեօդե . — Հաւնիլ, ունիւտե . — Ջախջախել, ելիւտ, գըրմոգ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Գիւղացին ո՞ւր հանգչած էր . — Ի՞նչ տեսաւ և և ի՞նչ զիտողութիւն ըրաւ . — Ի՞նչ պատահեցաւ յետոյ . — Այս պատմութեան բարոյականը ի՞նչ է :

39. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Ի՞նչ հօլով եմ հետեւեալ բառերը .

Ծառերէն, տուներուն, գետը, առիւծներ, եղջիւրնէրէն, կաւիճով, ծիրանիի, բնութեան, Աստուծոյ, սիրոյ, քեզի, սրտէ, ծաղիկները, ձեռքով, գլխու, ձմեռ, հարցման, ալիւրի, օրուան, հօր, եղբօր, ուրախութեամբ :

50. Ա Մ Ա Ռ

Գարունէն ետքը կուգայ ամառը : Արեւը կանուխ կը ծագի և աւելի ուշ մարը կը մտնէ : Անոր տաքութիւնը երթալով կը սաստկանայ , մանաւանդ կէս օրուան պահուն :

Ամառը մեր սեղանը կը զարդարէ զանազան պտուղներով : Անիկա պարտէզին մէջ կը հասունցնէ կեռասները , սեխն ու ձմերուկը ևայլն : Ամրան ծաղիկներէն մանաւանդ վարդը , մեխակը մեզի ուրախութիւն կը պատճառեն : Թռչունները թխսելը լմնացած են , անոնք ժիրաժիր հոս հոն կը թռչտին իրենց ձագուկներուն կեր ճարելու համար :

Խոտը մարգագետնին վրայ օրէ օր կը բարձրանայ : Մշակն իր մանգաղը կը սրէ , զանիկա կը քաղէ , կը չորցնէ ու մարագը կը կրէ : Յորենին ու գարիին հասկերը կը դեղնին , հատիկները կը հասուննան , երկրագործն իր ծառաններուն հետ գալով զանոնք կը հնձէ :

Ամառը երեք ամիս կը տեւէ . Յունիս , Յուլիս , Օգոստոս :

ԱՄԱՌԸ. — Սաստկանալ , լեւելլելեմէ , արդժժ . — Մանաւանդ , պախտաս . — Զարդարել , արմարժ . — Թխսել , քօլջիյա օրնարժ . — Ժիրաժիր , շէվէ . — Թռչալ , եօրէ պէրէ սալմ . — Ծարել , դեպրէլ երէ . — Մանգաղ , օր . — Սրել , պէլեմ . — Մարագ , օր սալ .

ՀԱՐՑԱՐՄԱՆ. — Նկարագրեցէ՛ք ամառը . — Ըսէ՛ք թէ ինչեր կ'ըլլան սոյն եղանակին մէջ . — Ամառը քանի՞ ամիս կը տեւէ :

39. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Հոլովը նոյն պահելով յոնակիի փոխեցէ՛ք հետեւեալ բառերը .

Գիրքը , կապիկին , գրիչով , հոլովման , տան , հօր , եղբօր , սեղանէն , լուսով , սիրոյ , գեղեցկութենէ , հիւանդութեան , սեղանի , ոտք , ամառուան , ամառան , ձմեռ , փայտով , քրոջ :

51. Զ Ր ՈՒ Յ Ա Տ Ր ՈՒ Յ Ի Ի Ն

Բժիւկիսն հետ

Ի՞նչ ունիք տեսնեմ: Քիչ մը տկար կ'ըզամ կոր
 ինքզինքս: Ի՞նչ բանէ կը նեղուիք կոր: Դող կ'ըզամ
 կոր: Երբեմն ալ տեսդ կ'ունենամ: Կուրծքերնուդ ալ
 անհանգստութիւն կ'ըզամք: Ո՛չ, բայց ստամոքսս անհան-
 գիստ է բոլորովին ու կերածս ընաւ չեմ կրնար մար-
 սել: Կողերս այն աստիճան կը ցաւին որ շունչ չեմ
 կրնար առնել: Կերելի թէ շատ պաղ առեր էք: Քանի
 օրէ որ այդ վիճակը ունիք: Շարաթէ մը ի վեր: Բազ-
 կերակնիդ նայիմ անգամ մը: Լեզունիդ տեսնեմ:
 Անգամ մը հազացէք: Շունչ առէք: Վրանիդ մարելիք
 կուզամ, երբեմն: Սրտերնիդ կը խառնուի՞: Ախորժակ
 ունի՞ք: Հիմայ ձեզի դեղագիր մը պիտի գրեմ և այս
 դեղերով քիչ ատենէն պիտի ապաքինիք:

ՌԱՌՍԲ. — Տկար, գո՛ւրդե՛լ, հո՞րս. — Զգալ, հի՞ս
 քո՞ւր. — Սաստիկ, +ե՛կէն. — Երբեմն, դ՞ըլ. — Տեսդ,
 ը՞րբ. — Անհանգստութիւն, բ՛հորւղլէ՛ք. — Ստամոքս,
 հո՞րս. — Մարսել, հո՞ւր եք՞. — Կող, գո՞ւրդե՛լ. — Բազ-
 կերակ, նո՞ր. — Մարելիք, դ՞ըլ. — Խառնուի, դ՞ըլ
 անձ. — Ախորժակ, է՞լ. — Դեղագիր, բ՛հոր. — Ա-
 պաքինիլ, է՛ն օ՞ր:

40. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ըսե՛ք բէ ի՞նչպէս կրնայ ըլլալ

Աշակերտ մը, տուն մը, ծով մը, հագուստ մը, պար-
տէզ մը, երկինքը, դանակ մը:

ՕՐԻՆԱ. — Աշակերտ մը կրնայ ըլլալ աշխատասէր,
ծոյլ, յառաջադէմ, հնազանդ, բարի և այլն:

52. Մ Ե Ր Պ Է Տ Ք Ե Ր Ը

Երեք տեսակ պէտքեր ունինք. սնունդ, զգեստ
տուն :

Ամէն մարդ սնունդի պէտք ունի. առանց սնունդի
չենք կրնար ապրիլ :

Օրը չորս անգամ սնունդ կ'առնենք. առաւօտուն
նախաճաշ, կէս օրին՝ ճաշ, երեկոյին՝ նախընթրիք, գի-
շերը՝ ընթրիք :

Մեր սնունդներն են հաց, միս, հաւկիթ, իւղ
բանջարեղէն, մեղր, պանիր, շաքոյլա, պտուղներ
Մնունդ են նաև ջուրը, գինին, սուրճը և թէյը :

Զգեստներ ալ պէտք են մեզ : Առանց զգեստի
պիտի մտնիք և կամ տաքէն ու հովէն պիտի նեղուինք :

Տուն մըն ալ պէտք է մեզ բնակելու համար
Հոն կ'ապաստանինք ու հանգիստ կը վայելենք հովուն
արեւին, տաքին և ցուրտին դէմ :

ԲԱՌԵՐ. — Պէտք, ինչպէ՞ս. — Մնունդ, ելե՛ճե՛ք. —
Ապաստանիլ, «ըլը՛մ» :

ՀԱՐՏԱՐԱՆ. — Մարդ ի՞նչ բաներու պէտք ունի, ի՞նչ
բաներ սնունդ են : Օրուան չորս ճաշերուն մասնաւոր ա-
նունները տուէ՛ք : Տուն մը ի՞նչ մասեր կ'ունենայ :

41. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Գեճել հետեւեալ բառերուն ներհակը .

Թաց, բարի, մեծ, բարձր, տաք, մօտ, երկայն, գե-
ղեցիկ, ուշ, առտու, մուկ, ամառ, կուշտ, լեցուն, հա-
րուստ, ուրախ, ծանր, դեցել, նեղ, սուտ, խօսիլ, ցերեկ
բարակ, կարծր, կապել, լալ, ապրիլ, իյնալ, սկսիլ
գտնել :

ՕՐԻՆԱԿ. — Թաց — չոր. բարի — չար :

53. Մ Ա Ռ

Մառը տունկ մըն է, զոր Աստուած կը բուսցնէ
 երկրէն: Անիկա կը բաղկանայ արմատէ, բունէ, ցօ-
 ղունէ և պսակէ: Արմատը հողին մէջ կը գտնուի, և
 սնունդ կը զրկէ ծառին: Բունը ծառին մարմինն է,
 բոլորտիքը կեղեւով պատած: Պսակը կը բաղկանայ
 շատ մը ոստերէ և ճիւղերէ: Ճիւղերէն կը կախուին
 տերեւները, ծաղիկները ու պտուղները: Եղեւինը տե-
 րեւի տեղ կանանչ ասեղներ ունի:

Մառերը կը գտնուին պարտէզներու մէջ, ճամբա-
 ներուն եզերքները և անտառներու մէջ: Շատ մը ծա-
 ռեր պտուղ կուտան, ասոր համար պտղատու ծառեր
 կը կոչուին:

Մառերը մեզի օգտակար են իրենց փայտովը, զոր
 կը վառենք: Փայտը կը գործածուի շէնքեր, նաւեր,
 տան կարասիներ ու զանազան գործիքներ շինելու:

ԲԱՌՆԲ.— Տունկ, Նեպոդ. — Բաղկանալ, Էպոլեդ օլմէ.
 — Պսակ, ալմէն Էսոդ Բորֆը. — Կեղեւ, Գոպոլ. — Ոստ,
 ճիւղ, Գու. — Եղեւին, շմ. — Պտղատու, Դոյլէ վէրէն. —
 Շէնք, դին. — Տան կարասի, Էլ Էլմ. — Գործիք, Էլոդ:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Ըսէ՞ք թէ ծառ մը ինչ մասեր կ'ունենայ:
 Բանի՞ տեսակ ծառի անուն գիտէք: Պտղատու ծառերը
 որո՞նք են: Մառերը մեզի ինչ օգտակարութիւն ունին:

42. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Հետեւեալ հարցումներուն պատասխանեցէ՛ք.

Ի՞նչ է գրասեղանը, կօշիկը, առիւծը, շագանակը,
 ջուրը, գինին, սեղանը, պնակը, դգալը, նաւը, դարանը,
 ագարակը, դերձակը, դատաւորը, քահանան, դեղձը,
 շողգամը, արմաւենին, ընկուզենին, ոտքը, ձեռքը, մարդը:

ՕՐԻՆԱԿ. — Գրասեղանը դպրոցի առարկայ մըն է:

54. ՀՈԼՈՎՈՒՄ (Շարունակութիւն)

ԵԶԱԿԻ		ՅՈՒՆԱԿԻ
Ո. Աստուած	Ալլահ	} Զուհի }
Ս. Աստուծոյ	Ալլահըն	
Տ. Աստուծոյ	Ալլահա	
Հ. Աստուած	Ալլահը	
Բ. Աստուծմէ	Ալլահսան	
Գ. Աստուծմով	Ալլահըլա	

ՅԱՆՕԹ. — Հետեւեալ բառերուն հոլովումները սորվեցնել աշակերտաց .

Սկր , եզ , թոռ , դուռ , անբայ , ֆոյր , կիւն :

42. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Կետրուն տեղ յարմար բառեր դրե՛ք .

Արեւը . . . կը լուսաւորէ : Մայրը իր . . . կը դպուէ :
 Կրակը . . . կը հալեցնէ : Մազիկները . . . կը դարդարեն :
 Հրաբուլիսը . . . կ'արձակէ : Զուկերը . . . մէջ կ'ապրին :
 Հանքերը . . . մէջ կը գտնուին : Հորթը . . . ձագն է : Ոչ-
 խարին ձագին . . . կ'ըսեն : Արեւին շողերուն . . . կ'ըսեն :
 Զմեռը . . . կը տեղայ : Երկիրը կը դառնայ . . . շուրջը :
 Բժիշկը . . . կը դարմանէ : Շերամը . . . կը չինէ : Թռչունը
 . . . մէջ կը թռչի :

55. ՇԻՆԳ ԶԳԱՅԱՐԱՆՔ

Հինդ զգայարանք ունինք, որոնցմով կ'զգանք ամէն բան. Աստնք են տեսանելիք, շեշիք, հոտոտելիք, ճաշակելիք և շօշարիելիք :

Տեսանելիքը երկու աչքերն են. անոնցմով կը տեսնենք ամէն բան մեր բոլորտիքը :

Աչքին մասերն են սառնենին, ծիածանը, բիբը. Աչքը կը գոցեն երկու արտեւաններ. ասոնց եզերքը մազեր կան որք թարթիչ կը կոչուին :

Լսելիքը երկու ականջներն են. անոնցմով կը լսենք ամէն ձայն, խօսք, երգ :

44. ՀՐԱ ՀԱՆԳ

Ի՞նչ կ'ըսեն

Աշխատութիւնը սիրողին, բան չգիտցողին, համբերութիւն չունեցողին, խօսք մտիկ չընողին, յանցանք գործողին, Աստուծմէ չվախցողին, աղէկութիւն ուղողին, գէշութիւն ուղողին, պարտքը ճանչցողին, պարտք ունեցողին, ձի հեծնողին, պատկեր գծողին, շատ լեզուներ գիտցողին, հաշիւ գիտցողին, նուազ ածողին, ուշադրութիւն չընողին, հոգ չընողին, հիւանդ պահողին, կրօնքը սիրողին, կարդալ սիրողին, կառք քաշողին :

ՕՐԻՆՍԱԿ.— Աշխատութիւնը սիրողին աշխատասէր կ'ըսեն :

Ականջին վրանը միայն դուրսէն կը տեսնուի, բայց ձայնը ականջին ծակէն ներս երթալով է որ կրնանք լսել:

Հոտոտելիքը քիթն է. Գիթին երկու ծակերը ունեցեր կ'ըսուին: Ճաշակելիքը բերանն է. անով կ'զգանք համերը, նաև կերակուր կ'ուտենք, կը խօսինք:

Բերնին մասերն են երկու շուրթներ, ակուաներէ ձեւացեալ երկու ծամելիք, լեզու և քիմք:

Համը կ'զգան լեզուն և քիմքը:

Շօշափելիքը ձեռքն է. անով կ'զգանք առարկայի մը տաք կամ պաղ, թաց կամ չոր, կարծր կամ կակուղ, ողորկ կամ դերփուկ ըլլալը: Ձեռքը շօշափելէ զատ ունելու թեան ալ կը դործածենք. անով կը բռնենք ինչ որ ուզենք: Ձեռքին մասերն են մատները:

ԲԱՌԵՐ. — Զգայարանք, հիւս. — Տեսանելիք, կէօրժէ հիւս. — Լսելիք, էշէրժէ հիւս. — Հոտոտելիք, Գօգլւմօգ հիւս. — Ճաշակելիք, Դոդւմօգ հիւս. — Շօշափելիք, Եօգլւմօգ հիւս. — Բոլորաիք, էլւրօ. — Սառնեհի, կէօդէն ղեյալը. — Բիք, կէօլ ղեդէյի. — Արտեւան, կէօլ Գօգլւմօգ. — Թարթիչ, Կիլէի. — Վրան ականջի, Գօլւմօգ ղեյալը. — Ռունդ պոօրուն ղեյի. — Շուրթ, Դոդւմօգ. — Ձեւացեալ, ղեյի մլմլ, Եօգլւմօգ. — Ծամելիք, Կիլէյիճէի մլմլ, ղեյի. — Գիմք, Դոդւմօգ. — Ողորկ, ղեյի. — Դերփուկ, Գօլւմօգ, էլւմլ. — Ունելու թիւն, էլւմօգ հասիսի:

ՀԱՐՏԱՐԱՆ. — Ըսէ՛ք թէ քանի՞ զգայարանք ունինք: Ի՞նչ է իւրաքանչիւր զգայարանքին անունը: Ի՞նչ մասեր ունին և ի՞նչ բանի կը դործածուին:

56. ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Այցելութիւն

Դուռը կը զարնուի : Մէկը դուռը կը զարնէ : Դրան լանդակն է, նայեցէ՛ք ո՞վ է : Գնան դուռը բաց : Ո՞վ կալ : Բարի եկաք : Հրամեցէ՛ք : Բարի տեսանք : Նըստեցէ՛ք, կ'աղաչեմ : Պարօնին աթոռ մը տուէ՛ք : Անտարակոյս այսօր հոս պիտի մնաք միասին ճաշելու : Եւմ կրնար կենալ : Շնորհակալ եմ, ժամանակս չի ներեր, գործ ունիմ : Պէտք է որ իսկոյն մեկնիմ : Շատ տիպեալ եմ երթալու : Ինչո՞ւ այդչափ կը փութաք : Մնաք բարեալ : Երթաք բարեալ : Կրկին տեսութիւն : Բարեալ ալ երբեմն մեզի հրամեցէ՛ք : Ամենայն գոհուիմ եմ :

ԲԱՆՍԵՐ. — Այցելութիւն, շէյ-բէր. — Բարի եկաք, շէյ-բէր. — Հրամեցէ՛ք, պարտաւոր. — Բարի տեսանք, շէյ-բէր. — Անտարակոյս, շէյ-բէր. — Միասին, պարտաւոր. — Ժամանակս չի ներեր, ինչո՞ւ այդչափ փութաք. — Մնաք բարեալ, հոգեւոր. — Երթաք բարեալ, պարտաւոր. — Կրկին տեսութիւն, շէյ-բէր. — Գոհուիմ եմ, պարտաւոր :

45. ՀՐԱՀԱՆԳ

Հետեւեալ բառերով վարի օրինակից պէս խօսքեր տրուի :

Մայր, ուսուցիչ, դպրոց, դաս, ամառ, գիրք, ձի, ետ, արտ, լեռ, ծառ, աւազան, կրկինք, ծաղիկ :

ՕՐԻՆԱԿ. — Մայրս բարի է :

57. Ա Շ Ո Ւ Ն

Արեւն աշնան մէջ այնչափ չի բարձրանար որչափ ամառան մէջ : Գիշերները կ'երկննան, ցորեկները կը կարճընան և օդը ցրտանալ կ'սկսի :

Մառերուն տերեւները կը դեղնին ու կամաց կամաց գետին կը թափին : Մարգագետիններուն խոտը շատոնց հնձուած է : Տանձ, խնձոր, սերկելիլ և ուրիշ պտուղներ ալ բոլորովին հասունցած ըլլալով՝ մարդիկ զանոնք կը ժողովեն : Մարդիկ մեծ ուրախութեամբ կը կատարեն այգեկուլթքը : Երկրագործը հունտեր կը ցանէ յաջորդ տարուան համար :

Արագիլները, ծիծեռնակները, սոխակները ցուրտին չգիմանալով՝ մեզ կը թողուն ու տաք երկիրներ կ'երթան : Բայց ճնճղուկներն մեզմէ բաժնուիլ չեն ուզեր :

46. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Հեծեւեալ խօսքերուն մէջ գիծերուն տեղ տեղագիր բառերուն ներհակը դրե՛ք .

Թէ՛ հարուստը և թէ՛ — , թէ՛ զօրաւորը և թէ՛ — պիտի մեռնին օր մը : Բարի տղաքները պէտք է հեռու ըլլան — ընկերներէ : Ան որ ամեն ինչ գիտեմ կ'ըսէ — չգիտէ : Ան միտն ո՛չ խօսիլ գիտէ և ո՛չ — : Անձրեւը կը տեղայ թէ՛ արդարին և թէ՛ — արտին վրայ : Մոռցի՛ր ինչ որ տուած ես և — ինչ որ ընդունած ես : Մարդ պարտի աշխատիլ իր երիտասարդութեան ատեն որ իրաւունք ունենայ հանգչելու իր — ատեն : Հին բարեկամը միշտ — դանձ մըն է : Այն որ անշոտողը կը գնէ , օր մը — պիտի ծախէ :

Պարտէզներն իրենց դեղեցկութիւնը կորսնցուցած են : Դաշտերն ամայացած են , և անտառներուն մէջ խոր լռութիւն մը կը տիրէ : Դուրսը ալ մեծ ուրախութիւն մնացած չէ : Աշնան հովերը մեղի կ'ըսեն թէ ժամանակ է ձմրան համար փայտ , ածուխ , տաքուկ հանդերձներ և տեսակ տեսակ պաշար պատրաստելու :
 Աշնան ամիսներն են՝ Սեպտեմբեր , Հոկտեմբեր , Նոյեմբեր :

ԲԱՍՆԵՐ. — Աշուն , սն պահար . — Տրտանալ , սողոմագ . — Դեղնիլ , սարմագ . — Հնձուած , պէլէլիլ . — Հասունցած , եկրիլիլ . — Կատարել , իճրա երօդ , եմիմագ . — Այգեկութք , պու պողոմու . — Դիմանալ , արանմագ . — Բաժնուիլ , սըլլմագ . — Կորսնցունել , ղայլ երօդ . — Խոր , արբիլ . — Տիրել , հիւտի երօդ . — Հանդերձ , բուպ . — Պաշար , լիլուիմագ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Նկարագրեցէ՛ք աշունը , և ըսէ՛ք թէ ինչէ՛ր կ'ըլլան այս եղանակին մէջ : Աշնան ամիսներն որո՞նք են :

47. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Սերտոդ բառը բացառական ընելով խօսքեր կազմեցէ՛ք .

Ծառին պտուղները . մարդուն օձիքը . տունին պատուհանը . նուագին ձայնը . մեղուին մեղրը . արեւին տաքութիւնը . ծառին դադաթը . տունին սանդուղները . փողոցին մէջ . ծովուն վրայ . կանթեղին լոյսը . երախային թեւը . ծառին ճիւղը . պարտէզին պատը . դաւաթին ջուրը :

ՕՐԻՆԱԿ. — Ծառին պտուղներէն ճաշակեցի :

58. ՀՈՒՆՆԵՐԻ ՄԻՍՏՐՈՒՄ ԾՅՂՈՎ

Ս. Գ. Ն կամ Ը

ԵԶԱԿԻ

ՅՈՒՐՆԱԿԻ

Ո. Պարտէզս	Պաննեմ	Պարտէզներս	Պաննեկերիմ
Ս. Պարտէզիս	Պաննեմիմ	Պարտէզներուս	Պաննեկերիմիմ
Տ. Պարտէզիս	Պաննեմե	Պարտէզներուս	Պաննեկերիմե
Հ. Պարտէզս	Պաննեմի	Պարտէզներս	Պաննեկերիմի
Բ. Պարտէզէս	Պաննեմսեմ	Պարտէզներէս	Պաննեկերիմսեմ
Գ. Պարտէզովս	Պաննեմիլե	Պարտէզներովս	Պաննեկերիմիլե

ԾԱՆՕԹ. — Դասատունն դ կ ն դիմորոշ յօդերով ալ պարտեզ բառը հոլովել կը սորվեցնէ աշակերտաց :

ՎԱՐԺ. — Ս. դ. ն գիրերով հոլովեցէ՛ք հետեւեալ բառերը :

Հայր , ժառ , տուն , բարկութիւն , նալ :

59. Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

(ԽՅՃՈՐ)

Այտեր ունի կարմրուկ ,
 Բայց մի կարծեր զայն մանուկ .
 Զարդ է գարնան , ամառան
 Աշնան կ'երթայ նա մառան :

48. Հ Ր Ա Հ Ա Ն Գ.

Ինչո՞վ կ'ընենք հետեւեալ գործողութիւնները .

Սղոցել , կտրել , կտրել , աւելել , խնկարկել , թրջել , խարազանել , կտպել , նաւարկել , այրել , փորել , գծել , հագնիլ , հերկել , դամել , ծածկել , որսալ , օրել , ներկել , լուսաւորել :

ՕՐԻՆԱԿ. — Սղոցով կը սղոցեն :

60. ԵՐԿՈՒ ՏԱԿԱՌՆԵՐ

Օր մը երկու տակառ բարձր տեղէ մը վար զլորել
 կ'սան : Մէկը գինիով լեցուն էր , իսկ միւսը դատարկ
 էր : Լեցուն տակառը հանդարտ հանդարտ գլորելով
 ըր քայէր , իսկ դատարկը կը ցատքբաժէր ճամբուն վրայ
 և ահագին աղմուկ ու փոշի կը հանէր :

Այսպէս է նաև խելքով լեցուն զլուխը որ լուռ ու
 մունջ կ'աշխատի , կ'ուսանի , իմաստուն կ'ըլլայ և ապ-
 ելու համար դժուարութիւն չի քաշեր : մինչդեռ ան-
 խելքը՝ դատարկ տակառին պէս միայն աղմուկ կը հանէ,
 և երբ մեծնայ բանի մը օդտակար չըլլալով ապրուստ
 ի կրնար ճարել :

ԲԱՌԵՐ. — Տակառ , թել . — Գլորիլ , եւ-լու-ն-մ-գ . —
 Դատարկ , ուշ . — Հանդարտ , ուղիս . — Ցատքբաժել , «ըլ-
 ք-մ-գ . — Աղմուկ , ք-դըրդ . — Փոշի , ուշ . — Լուռ ու մունջ ,
 ուս . — Իմաստուն , -լի՛ս , -գըլլ . — Դժուարութիւն , զըր-
 ք-մ-գ . — Մինչդեռ անխելքը , «գըլլ-լ-ի . — Ապրուստ , կե-
 լ-ի-մ-գ . — Ճարել , դ-դ-ը-ի-ի ե-դ-ի-ի :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Պատմեցէ՛ք երկու տակառներուն պատ-
 ութիւնը : Ըսէ՛ք թէ ինչի՞ նմանցուցած են այս տակառները :
 Այս պատմութենէն ի՞նչ բան կը հետեւցնէք :

49. ՀՐԱ ՀԱՆԳ

Ըսե՛ք բէ

Ի՞նչ կը բուսնի հողէն : Ի՞նչ կ'ընեն եկեղեցիին մէջ :
 Ի՞նչ կ'ընեն կան ծովին մէջ : Ի՞նչ կը քաղեն այգիէն : Ի՞նչ կը տե-
 յայ երկիրքէն : Ի՞նչ կը հնձեն մանգաղով : Ի՞նչ կը բռնեն
 լուկանով : Ի՞նչով կը տաքնանք : Ի՞նչ բաներով կը ճամբոր-
 ւենք : Ի՞նչ բաներով կը շարժին մեքենաները :

61. ԱՌԻԻԾՆ ՈՒ ՄՈՒԿԸ

Օր մը անտառին մէջ քնացեր էր առիւծը : Քանի մը մուկեր սկսան խաղալ և ատեն ատեն առիւծին վրայ ելնելով կը վազվզէին : Առիւծն անոնց ձայնէն արթնցաւ : Մուկերը փախան . մինակ մէկ հատը չի կրցաւ փախչիլ և առիւծին թաթին տակն ինկաւ :

Առիւծն այդ մուկն պիտի սպաննէր , բայց սա այնչափ աղաչեց որ առիւծը ազատ թողուց զայն . Այն ատեն երախտադէտ մուկը ըսաւ . « Ազնիւ առիւծ , կը յուսամ որ օրին մէկը առիթ մը պիտի ունենամ այդ բարութեանդ փոխարէնը հատուցանելու : »

Առիւծը խնդաց և չի հաւատաց որ ասանկ պզտիկ կենդանի մը պիտի կարենայ իրեն օգտակար ըլլալ :

Ետտ ժամանակ չանցաւ առիւծը հաստ չուանով շինուած ցանցի մը մէջ ինկաւ : Քանի մը որսորդներ այս

50. Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ.

Ուղղեցե՛ք հետեւեալ խօսքերը .

Երբ անօթի ըլլամ ջուր կը խմեմ , եւ երբ ծարաւ ըլլամ հաց կ'ուտեմ : Պանիրը խաղողէն կը շինեն և գինին՝ կաթէն : Զմեռը օդը տաք է , իսկ ամառը՝ ցուրտ : Վարժապետը կը պատժէ աշխատասէր տղան և կը վարձատրէ ծոյլը : Մարդիկ գիշերը կ'աշխատին և ցորեկը կը քնանան : Արեւը արեւմուտքէն կը ծագի և արեւելքէն մարը կը մտնէ : Երբ անկողինս մտնեմ հագուստներս կը հագնիմ : Առաւօտները տուն կը վերադառնամ իսկ գիշերները շուկայ կ'երթամ : Քնանալուն պէս պառկեցաւ : Պայծառ և լուսաւոր երկինքը մարդոց վրայ տխրութիւն կը սփռէ :

ցանցը սփռեր էին անտառին մէջ : Առիւծը պարապ տեղը աշխատեցաւ ցանցէն դուրս ելնելու և սկսաւ զատղաբար մռնչել :

Պշտիկ մուկն անոր մռնչիւնը լսեց և շուտով օգնութեան վազեց : Մուկն սկսաւ իր սուր ակօսանքովը ցանցը կրծել, և երկար ատեն աշխատելէ ետք՝ յաջողեցաւ շուանը կտրել և առիւծն ազատել :

Բարոյական . — Գիտցէք որ ամէնէն տկար բարեկամ մը իսկ կրնայ օր մը մեզ օգտակար ըլլալ :

ՐԱՌԵՐ . — Վազվղել , գօշուշմփ . — Թաթ , փնչ . — Սպաննել , եօտիւրփէ . — Երախտագէտ , փնէրոր . — Յուսալ , սմմփ . — Առիթ , ֆըրոր . — Փոխարէն , փըշըշ . — Հատուցանել , պօրճուս վէրփէ . — Հաւատալ , քնմմփ . — Յանց , որուփ . — Սփռել , երփէ . — Կատղաբար , փորփորփ . — Օգնութիւն , երփ . — Սուր , փնչ . — Կրծել , փիւրփէ . — Յաջողիլ , փփփփփ օլմփ . — Ազատել , փորփորփ :

ՀԱՐՑԱՐԱՆ . — Մուկերը ի՞նչ կ'ընէին երբ առիւծը քնացած էր : Այն ատեն ի՞նչ պատահեցաւ : Բռնուած մուկը ի՞նչ ըսաւ առիւծին : Յետոյ ի՞նչ պատահեցաւ առիւծին : Մուկը ի՞նչ ըրաւ այն ատեն : Այս պատմութեան բարոյականը ի՞նչ է :

51. ՀՐԱՀԱՆԳ

ՈՒՐ կը բնակին

Գիւղացիները , լեռնցիները , քաղաքացիները , կղզեցիները , Գաղղիացիները , Գերմանացիները , Ռուսերը , Ռումանացիները , Հնդիկները , Անգղիացիները , Չինացիները , Արաբները , Պարսիկները , Ամերիկացիները , Յոյները , Նգիպտացիները , Կովկասցիները :

Ահա՛ ձմեռն եկաւ : Անիկա ամրան եղանակէն բռնաբար լորովին աարբեր է : Օդը ցուրտ է : Երկինքն ամպերով ծածկուած է և անձրեւի տեղ ձիւն կը տեղայ :

Ծառերն իրենց կանանչ հագուստները կորսնցուցած ըլլալով՝ ցրտէն կը դողան : Դուրսը սլ ծաղիկ չեն տեսնուիր . թռչուններն այլեւս չեն երգեր . ամէն կողմ ամայութիւն կը տիրէ :

Դաղթող թռչուններն արդէն գացած են . մեղմ մօտ կը մնան միայն ագռաւը , ճնճղուկը և ուրիշ քանի մը թռչուններ : Այս խեղճերը մեծ նեղութիւն պիտի կրեն ամբողջ ձմեռը , եթէ բարի մարդիկ իրենց սեղանէն աւելցած փշրանքներով չի կերակրեն զանոնք : Ընտանի կենդանիներն աւելի երջանիկ են իրենց տարուկ ախոռներուն մէջ : Անոնք ժամանակին կը ստանան իրենց կերն ու ջուրը :

Ձմրան մէջ արեւը ուշ կը ծագի և կանուխ մարը կը մտնէ : Անոր համար օրերը կարճ են ու դիշերները երկայն :

Ձմրան ամիսներն են՝ Դեկտեմբեր , Յունուար , Փետրուար :

ՐԱՌԾՐ. — Եղանակ , Դեկտեմբեր . — Տարբեր , դաշի . — Դողալ , դեբեբեմեմ . — Ամայութիւն , եւլուլուլ . — Նեղութիւն կրել , շրլուֆ լէմեմ . — Սեղան , սֆր . — Փշրանք , սֆրեմ ֆրլուլ . — Կերակրել , եմեմ լէմեմ . — Ընտանի , լուլուլ . — Կեր , եմեմ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Նկարագրեցէ՛ք ձմեռը և ըսէ՛ք թէ ինչեր կ'ըլլան այս եղանակին մէջ : Որո՞նք են ձմրան ամիսները :

63. ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Մտավածան, քիչ մը միս կուտամք ինծի: Ի՞նչ միս կուզէք: Ո՞ր կողմէն կուզէք որ տամ: Այս կտորը կուզէ՞ք: Ճարպոտ ըլլայ թէ առանց ճարպի: Ոչխարի միս կուզեմ: Բայց պէտք է որ արու ըլլայ: Գառնուկի միս չեմ ուզեր: Հորթի միսէն տուէ՞ք: Այծի միսը տակաւին չուտուիր: Կուրծքի կողմէն կտրեցէ՞ք: Վիզէն չեմ ուզեր: Ի՞նչ մըն ալ ազդրին կողմէն տուէ՞ք: Այդ մասը շատ սսկրոտ է. խորոված շինելու յարմար չէ: Տեսնեմ քաթ՝ օխա կը կշռէ: Օխան քանի՞ ղրշէն պիտի հաշուենք: Շատ սուղ կը պահանջէք կոր, այդչափ չեմ վճարեր: Ոսկորները կտրեցէ՞ք և այնպէս տուէ՞ք:

64. Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

(Ձիւն)

Շաքարի պէս ճերմակ է
Դաշտի խոտին վերմակ է.
Չի նմանիր թռչունի,
Կրնայ թռչիլ թեւ չունի:

ԲԱՌՆԲՐ. — Ճարպոտ, ԵՂԷ. — Արու, երէտ. — Հորթ, ԳՈՆՆ. — Ազդր, ԿՈՒՐ. — Ոսկրոտ, ԻԿԻԿԻ. — Խորոված, ԻԿՊՊ, Հաշուել, Կիսոպ երէտ. — Պահանջել, ԻԿԵԿԵ:

65. ՀՐԱՀԱՆԳ

Պատասխանեցե՛ք հետեւեալ հարցումներուն եւ գրեցե՛ք ձեր տեսակիս մեզ.

Որո՞նք են տարուան չորս եղանակները: Որո՞նք են դարնան, ամառուան, աշնան և ձմրան ամիսները: Որո՞նք են շարթուան օրերը: Կրնա՞ք մի քանի տօներու անուններ գրուցել:

65. ԱՅԾՆ ՈՒ ԱՂՈՒԷՍԸ

Աղուէս մը ինկած էր ցամքած ջրհորի մը մէջ, ուրկէ չէր կրնար դուրս ելնել։ Այժմ մը որ հոնկէ կ'անցնէր, կանգ առաւ և ջրհորին մէջ նայելով, տեսաւ աղուէսն և հարցուց անոր. « Ինչո՞ւ իջեր ես այս տեղը : » — Զովանալու համար, պատասխանեց խորամանկ կենդանին, դուն ալ եկնոր, խմէ՛, եթէ կ'ուզես, պաղ և անուշ ջուր կայ։ — Այժմ որ ծարաւ էր և արեւուն ջերմութենէն շատ կը նեղուէր, իսկոյն ջրհորին մէջ նետուեցաւ, առանց երկար բարակ քննութիւն կատարելու։

Աղուէս աղբարն անմիջապէս այժին եղջիւրներուն վրայ կոխելով յաշողեցաւ ջրհորէն դուրս ելնել, և ըսաւ. « Այժուկ աղբար, կոտոշներդ մեծցնելու տեղ, խելքդ երկարէ : »

ՌԱՌԵՐ. — Աղուէս, դէպք. — Ցամքած, գորտմուշ. — Ջրհոր, գոյո. — Զովանալ, « երէն կ'էր : » — Խորամանկ, գորտմուշ. — Մարաւ, սոսմաճը. — Զերմութիւն, « ճմգութ. — Քննութիւն, դահլիճադ, « քրտադ արտադ. — Եղջիւր, պոյնու. — Յաշողիլ, մոսփփմտ օլմտ, դաշա ղեմտ. — Կոտոշ, պոյնու :

ՀՄՐՑԱՐԱՆ. — Աղուէսին ինչ պատահած էր : Ո՞վ անցաւ անկէ և ինչ ըսաւ աղուէսին : Աղուէսը ինչ պատասխանեց : Այժը ինչ ըրաւ յետոյ : Աղուէսը ինչպէս ջրհորէն դուրս ելաւ և վերջը ինչ ըսաւ այժին : Այս պատմութենէն ինչ կը հետեւցնէք :

53. Հ Ր Ա Հ Ա Ն Դ

Կեսերունց տեղ ցախորդ բառին իգականը գրեցի՛ք.
 Հայր և . . . : Բեռի և . . . : Աշակերտ և . . . : Փեսայ
 և . . . : Սպասաւոր և . . . : Դերասան և . . . : Աներ և . . . :
 Մանչ և . . . : Այր և . . . : Եղբայր և . . . : Վարժապետ և . . . :
 Տիգրան և . . . : Վարդ և . . . : Տեր և . . . : Աքաղաղ և . . . :
 Հաւ (մեծ հայր) և . . . :

66. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

Ա. դիմք Ես

ԵԶԱԿԻ

ՅՈՒՆԱԿԻ

Ո. Ես	Պեց	Մենք	Պիզ
Ս. Իմ, իմին	Պեցիմ	Մեր, մերին	Պիզիմ
Տ. Ինձ, ինձի	Պացա	Մեզ, մեզի	Պիզի
Հ. Ձիս	Պեցի	Ձմեզ	Պիզի
Ք. Ինձմէ ինէ	Պեցեցեց	Մեզմէ, մենէ	Պիզեցեց
Դ. Ինձմով	Պեցիմ իլի	Մեզմով	Պիզիմ իլի

67. ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿԸ

Հըսկէ, հրեշտակ, իմ զարթումիս,
 Այնպէս ըսաւ քանի որ Տէր.
 Մահճիս մօտիկ պահպանէ զիս
 Երբոր նընջեմ ամէն գիշեր:
 Գութ ունեցիր անձիս անզօր,
 Ու մի թողուր զիս մինաւոր:
 Խօսէ ճամբան ինձ շարունակ,
 Եւ ունկընդրած պահուս քեզ լուռ,
 Որպէս զի վար չիյնամ մինակ,
 Բարի հրեշտակ, ձեռքդ ինձի տուր:

ՌԱՌՄԲ. — Հսկել, մահ-ճիւղ տրտէտ. — Հրեշտակ, Դէլէտ.
 — զարթնում, աշտըշ. — Մահիճ, ետրտ. — ննջել,
 յննջ. — Գութ, Դրհմտր: — Անզօր, քուճիտիշ. —
 Մինաւոր, ելլըշ. — Շարունակ, աշտ. — Ունկընդրել,
 քիշիտիտ:

ՊԱՏՈՒԷՐ. — Վերի ոտանաւորը գոց սորվեցէ՛ք և
 արձրածայն արտասանեցէ՛ք:

68. ԶՈՒՐԸ, ԿՐԱԿԸ, ՀԱՄԲԱԻԸ

Օրմը Զուրը, Կրակը և Համբաւը միասին ճամբորդելով որոշեցին թէ Բնչպէս պիտի կրնային զիրար գտնել երբ մէկզմէկ կորսնցնէին :

Կրակը կ'ըսէ. « Զիս պիտի գտնէք ուր որ ծուխ տեսնէք : » Զուրը կ'ըսէ. « Ուր որ ճախճախուտ տեղեր տեսնէք զիս անոնց մէջ պիտի գտնէք : » « Եւ քեզ, կ'ըսեն Համբաւին, ո՞ւր պիտի գտնենք : »

« Երբ մարդ անգամ մը զիս կորսնցուց, կը պատասխանէ ան, ս'լ բնաւ չի գտներ : »

ԲԱՌԵՐ. — Համբաւ, շփոթեց, ճամբորդել, ելնուի երէտ. — Որոշել, բարբ քրտ. — Մուխ, տխուր. — ճախճախուտ, գրգռուի :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Պատմեցէ՛ք այս առակը : Ըսէ՛ք թէ Բնչ բարոյական կը հետեւի ասկէ :

84. ՀՐԱ. ՀԱՆԳ

Հետեւեալ խօսքերը վարի օրինակին պէս ամբողջացուցի՛ք .

Բժիշկը . . . : Խաղամուրը . . . : Հացը . . . : Գինին . . . :
Տանձը . . . : Զիւնը . . . : Աքաղաղը . . . : Հաւը . . . : Վաճառականը . . . : Մշակը . . . : Զուկերը . . . : Հացագործը . . . :
Դպրոցականը . . . : Կօշկակարը . . . : Լուսինը . . . :
Արեւը . . . : Հովիւը . . . : Վարդապետը . . . : Քահանան . . . :
Դասատուն . . . : Մայրը . . . : Ընտանի կենդանիները . . . :

ՕՐԻՆԱԿ. — Բժիշկը հիւանդներ կը դարմանէ : Խաղամուրը դրամը զուր տեղը կը կորսնցնէ : Հացը մեզի սնունդ կուտայ :

69. ԳԱՅԼԵՆ ՈՒ ԷՇԸ

Գայլը օր մը գիրուկ էշ մը գտաւ, և կ'ուզէր ուտել զայն: Էջն ըսաւ անոր. «Աստուած քու ձեռքդ ձգեց զիս, եւ անշուշտ պիտի ուտես զիս, բայց կ'ազաչեմ որ նախ բարիք մ'ընես ինձ: Ուրքս գամ մը մխուած է և ցաւէն սաստիկ կը տանջուիմ: Աստուծոյ սիրոյն համար նախ հանէ զայն, և ապա կեր զիս:»

Գայլը իշուն այս խօսքին հաւատարմով անոր ետին անցաւ որ գամը հանէ: Բայց էջն իր բոլոր ուժովը կից մը տուաւ, և անոր կզակը ջախջախեց, ու փախաւ: Գայլը նստած կուլար ու կ'ըսէր ինքնիրեն. «Արժանի եմ այս պատժոյն, վասն զի ես մսագործ էի, ո՞վ ըսաւ որ պայտարութիւն ընեմ:»

ՌԱՌԵՐ. — Գիրուկ, «Է՛շ» . — Անշուշտ, շեղանկ . — Նախ, Է՛շ . — Գամ, շէն . — Մխուած, պարտաւոր . — Ապա, «ձեռք» . — Կից, դեմք . — Կզակ, շէն . — Արժանի, արժանի . — Պատիժ, տուած . — Պայտարութիւն, անարարութիւն:

ՀԱՐՑԱՐԱՆ. — Գայլը ի՞նչ գտաւ օր մը, եւ ի՞նչ կ'ուզէր ընել. — Էջը ի՞նչ ըսաւ գայլին. — Գայլը իշուն ըսածը ըրա՞ւ. — Վերջը ի՞նչ պատահեցաւ. — Գայլը ի՞նչ կ'ըսէր ինքնիրեն:

55. ՀՐԱ ՀԱՆ Գ

Հորովեցի՛ք հետեւեալ բառերը .

Կայծակ, կոճակ, գրիչ, սեղան, կաղամար, առիւծ, թաղում, Աստուած, մայր, Յակոբ, տուն, տարի, ամիս, շաքար, գրասեղան, մատիտ, նարինջ, խնձոր, տանձենի, թռչուն, թիւ, գլուխ, մարդ, կին, տէր, աղջիկ:

70. ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Հաստատել եւ ժխտել

1. Այո՛. Անտարակոյս : Բնականաբար : Հաւատացէք , այնպէս է : Ճշմարիտ կ'ըսեմ : Կ'երդնում որ ճշմարիտ է ըսածս : Ձեր խօսքին հաւատք կ'ընծայեմ : Այս լուրը վտահելի աղբիւրէ մը լսած եմ : Կը պնդեմ թէ իրաւ է եղածը : Բնաւ չեմ կասկածիր որ ըսածդ ճշմարիտ չըլլայ : Այդ բանին երբեք տարակոյս չի կայ : Վստահ կրնաք ըլլալ ըսածիս :

2. Ի՞նչ կ'ըսէք , անկարելի է ըսածնիդ : Այդ բանին չեմ կրնար հաւատալ : Երբեք ստոյգ չի կրնար ըլլալ ըսածնիդ : Կը կասկածիմ այդ բանին վրայ : Հաւատացէք որ սուտ է : Երբեք վտահելի չէ այդ մարդը : Այդ բանը տարակոյսի տակ է : Բողոքովին անհիմն է այդ զրոյցը : Ըսածիդ բողոքովին հակառակը ըլլալ կը կարծեմ : Ինչո՞ւ կը պնդէք , սխալ է այդ համոզումնիդ : Ըսածնուդ հիմնովին կը հակառակիմ :

ԾԱՆՕԹ . — Դասատուն վերի հաստատական և ժխտական խօսքերուն մասին պէտք եղած բացատրութիւնները օրինակներու վրայ տալով , կ'ուսուցանէ զայս աշակերտաց , տանկերէնէ հայերէն և հայերէնէ տանկերէն վարժութիւններ ընել տալով հանդերձ :

56. ՀՐԱ ՀԱՆԳ

Ձանազանեցե՛ք հետեւեալ բառերուն մեջէն հագնելիքներ , ուտելիքներ եւ զարմանքներ .

Հայելի , նարինջ , սեղան , բաճկոն , տափատ , անկողին , գորգ , վերարկու , ֆէս , միս , կարկանդակ , խորոված , գիշերհագուստ , ձեռնոց , կօշիկ , վարագոյր , բաղմոց , մածուն , ապուր , կանթեղ , սնտուկ , փողկապ , գուլպայ , շապիկ , աթոռ , թիկնաթոռ , ջերմոց , խաւիժ , ձուածեղ , պանիր :

71. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ (Շար.)

Բ. դեմք, Դուն

ԵԶԱԿԻ

ՅՈՒՆԱԿԻ

Ո. Դուն	Սեճ	Դուք	Սիգ
Ս. Բու, քուկին	Սեճիճ	Ձեր, ձերին	Սիգիճ
Տ. Բեղ, քեզի	Սանա	Ձեզ, ձեզի	Սիգի
Հ. Ձքեզ	Սեճի	Ձձեզ	Սիգի
Բ. Բեղմէ, քենէ	Սեճեճ	Ձեղմէ, ձենէ	Սիգեճ
Գ. Բեղմով	Սեճիճ իլի	Ձեղմով	Սիգիճ իլի

72. Հ Ա Ն Ե Լ ՈՒ Կ

(Մեղր)

Մշակներ են մեզի դրացի,
Այխատասէր ու խելացի.
Գաղցրիկ պաշար տուն կը բերեն
Դաշտի սիրուն ծաղիկներէն:

57. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ի՞նչ կը կոչուի

Լեռ մը որ բոց կ'արձակէ : Ճամաքի տարածութիւն մը որ ջուրով չըջապատեալ է : Զուրի տարածութիւն մը որ ցամաքով չըջապատեալ է : Յարդով և չոր ճիւղերով ծածկուած տուն մը : Առաւօտեան ճաշը : Իրիկուան ճաշը : Ճորենը քաղելու ժամանակը : Խաղող քաղելու ժամանակը : Արեւուն ծագած տեղը : Արեւուն մարը մտած տեղը : Մոլու մեծ տարածութիւն մը : Ոչխարներու բազմութիւնը : Մառերուն շատ զտնուած տեղը : Գեանին մէջ փորուած տեղ մը : Գեանէն ելած անուխը :

73. ԱՁ ԶԵՌՔՆ ՈՒ ԶԱԽԸ

Օր մը աջ ձեռքն ըսաւ ձախին . « Դուն աւելորդ բեռ մըն ես մարդուն համար . աւելի աղէկ էր որ բնաւ գոյութիւն չունենայիր : Ամէն բանի մէջ ես մինակ կը ծառայեմ անոր : Եթէ աշխատիլ ուզէ, ես կը գրեմ, կը կարեմ, կը ցանեմ, կը հնձեմ . եթէ անօթենայ, ես կը կշտացնեմ զինքը . իսկ դուն ինչ կ'ընես : » « Յանցանքը իմս չէ, պատասխանեց ձախ ձեռքը, եթէ քեզ չափ գործունեայ չեմ . եթէ մարդիկ զիս ալ գործածէին քեզ նման, թերեւս ես ալ քու ըրած գործերդ կատարէի, սակայն պէտք չէ ուրանաս որ, եթէ ես չըլլամ, շատ դժուարութիւն պիտի կրես առանձինն, որովհետեւ ամէն բանի մէջ կարօտ ես ինձ : Ուստի անիրաւ մի ըլլար ինձ դէմ : »

ԲՍԱԹԵՐ. — Աւելորդ, — րդէյէ . — Գոյութիւն, — ւորւէ . — Գործունեայ, — ինչ-պէ . — Կատարել, — իճր- էր-է . — Ուրանալ, — Ինչ-պէ էր-է . — Կարօտ, — Դ-հր-ճ . — Անիրաւ, — հ-գ-ը :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Պատմեցէ՛ք աջ ու ձախ ձեռքին մէջ եղած խօսակցութիւնը . — Այս պատմութենէն ինչ բարոյական կը հետեւի :

58. ՀՐԱ ՀԱՆԳ

Հետեւեալներն կենդանի, բոյս, բէ հանգի յառաջ եկած են :

Քացախ, սեղան, բալ, պատուաստ, սատափ, մետաքս, բուրդ, բամպակ, մոմ, գինի, շոգոլա, կիր, ծխախոտ, մարգարիտ, թուղթ, մազ, պղպեղ, թիթեղ, շաքար, պարան, ջուրթակի լար, պանիր, աղամանդ, խէժ, փղոսկր, կաշի :

74. ԿԵՆԴԱՆԵԱՑ ԵՒ ԱՆԿԵՆԴԱՆ ԲԱՆԵՐՈՒ ԽՈՒՄԵՐԸ

Ինչպէս շատ մը կենդանիներու, նոյնպէս ալ անկենդան բաներու խումբերը տարբեր անուններ ունին. օրինակի համար, անասուններու խումբերը կը կոչուին ջոկ, ոչխարներու խումբը՝ հօժ, այծերու խումբը՝ նախիր, գայլերու և շուներու խումբերը՝ նրաւնակ, ձուկերու խումբը՝ վճառ, թռչուններու խումբը՝ նրաւ, մեղուններու խումբը՝ զարւ, պար, ագռաւներու խումբը՝ ջոշիր, կռուակներու խումբը՝ զարւ, ծաղիկներու խումբը՝ հոշոյ, խոտերու բարդը՝ դէզ, յարդին գէղը՝ շնդ և այլն :

75. Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

(Ժամացոյց)

Կրնա՞ք ըսել, թէ ի՞նչ է նա
Որ ձեռք չունի, զարնել կրնայ,
Առանց ոտքի կրնայ գոնէ
Գիչ մը քալել, բայց միշտ հոն է :

59. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ամբողջացնել հետեւեալ խօսքերը, կետրուն սեղ ժողովիր բառերուն ներհակը դնելով .

Հարուստ կը գնէ աւելորդը, իսկ . . . զուրկ է կարեւորէն : Երբ մարդ անգամ մը սուտ խօսի, ա՛լ չեն հաւատարմանոր երբ նոյն իսկ . . . խօսի : Կուշ մարդը չի հասկնար . . . վիճակէն : Լաւ տղաքներ պէտք չէ որ . . . ընկերներ ունենան : Սիրեցե՛ք աշխատութիւնը և . . . ծուլութիւնը : Նիհար մարդիկ աւելի զօրաւոր կը լինին քան թէ . . . մարդիկ : Նայեցէ՛ք որ ծերերուն օրհնութիւնը ընդունիք, և ոչ թէ . . . : Բարիները արհայտութիւն պիտի վայելեն, իսկ չարերը . . . պիտի երթան :

76. Շ Ղ Թ Ա Յ

Թէպէտև Գրիգոր գող չէ, բայց գողէն վար չի մնար, ինչու որ ձեռքը անցածը կը պահէ :

Օր մը դարբինի մը խանութին առջեւէն անցաւ աստեն, դրան առջև, սալայատակին վրայ, գեղեցիկ շղթայ մը տեսաւ : Գրիգոր չորս կողմը նայեցաւ թէ արդեօք զինքը դիտող մը կայ . յետոյ կամաց մը ծռեցաւ ու շղթան բռնեց, բայց անմիջապէս ձգեց զայն և պոռալ սկսաւ :

Շղթան կասկարմիր էր, և խեղճ տղուն ձեռքերն այրեր էին : Դարբինը որ զայն դիտամաք թողած էր փողոցը՝ որպէս զի պաղի, անմիջապէս վազեց Գրիգորին քով եկաւ և ըսաւ անոր . « Թող աս քեզի խրատ ըլլայ . երբ ուրիշին մէկ բանին դայչել ուզես, այս շղթան միաքդ բեր : »

ՐԱՍԻՅԸ. — Թէպէտև, Վեդ. — Դարբին, Նեմկէ. — Սալայատակ, Գալբը. — Շղթայ, Ղեմկէ. — Արդեօք, Գալ. — Դիտող, Կեղեցիկ. — Անմիջապէս, Կեմ. — Կասկարմիր, Գրեգոր. — Դիտամաք, Գալ. — Խրատ, Գալ. — Գալ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Ի՞նչ տեսակ տղայ էր Գրիգոր : — Ի՞նչ պատահեցաւ օր մը իրեն : — Ի՞նչ ո՞ւ համար ձեռքերը այրեցան : — Այն պահուն ո՞վ վրայ հասաւ, և ի՞նչ ըսաւ իրեն : — Ի՞նչ է այս պատմութեան բարոյականը :

60. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ի՞նչ կը կոչուի

Ճորենը քաղելու դործողութիւնը . այգիները կթելը . առաւօտեան կերակուրը . կէս օրուան կերակուրը . իրիկուան կերակուրը . ընթրիքէն առաջ կերուած կերակուրը . եօթն օրուան տեւողութիւնը . երեսուն օրը . երեք ամիսը . տասն երկու ամիսը . հարիւր տարին :

77. ՍՏԱԽՕՍԻՆ ՊԱՏԻԺԸ

Փորրիկ հովիւ մըն էր Միհրան ,
 Որ ամէն օր դաշտին վրրան
 Արածելու կ'երթար առտուն
 Հօտն իր գիւղին ոչխարներուն :
 Օր մը նեղուած հօն միս մինակ
 Ըսաւ . « Աղուոր խաղ մը խաղանք : »
 Եւ ըսկըսաւ պոռալ ուժով .
 « Գայլ կայ, գայլ կայ, հասէք շուտով : »
 Գիւղացիներ եկան հասան ,
 Ոչ գայլ գըտան , ոչ ալ գաղան :
 Քահ քահ խընդաց անկիրթ տըղան .
 Ըսաւ անոնց . « Կատակ էր ան : »
 Գայլեր եկան օր մը իրաւ ,
 Մարդ իր ձայնին մըտիկ չըրաւ .
 Մէկը չեղաւ իրեն պաշտպան .
 Կըտոր կըտոր եղաւ Միհրան :

ՐԱՐՈՅԱԿԱՆ . — Երբ մարդ անգամ մը սուտ խօսի , այլ
 ևս ոչ մէկը անոր կը հաւատայ :

ՐԱՌԵՐ . — Ստախօս , եւլանճը . — Արածել , օթլորմէ .
 — Միսմինակ , ե-ի-եւլընը . — Գաղան , ճան-վըր . — Անկիրթ ,
 դերդիյե-իլ . — Կատակ , շ-գ . — Պաշտպան , հ-մի , մ-հ-ճ-
 շ- ե-ի-ն :

- ՊԱՅՈՒԷՐ . — 1. Վերի ոտանաւորը գոց սորվեցէ՛ք և
 բարձրաձայն արտասանեցէ՛ք :
 2. Սոյն ոտանաւորին իմաստը արձակ պատմեցէ՛ք :

78. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ (Շար.)

Գ. դիւք, Ինք, Ան

Ինք

	ԵԶԱԿԻ		ՅՈՒՆԱԿԻ
Ո.	Ինք	Քենսիսի	Իրենք
Ս.	Իր, իրեն	Քենսիսիցից	Իրենց
Տ.	Իրեն	Քենսիսիցե	Իրենց
Հ.	Զինք	Քենսիսիցի	Զիրենք
Բ.	Իրմէ	Քենսիսիցեցեց	Իրենցմէ
Գ.	Իրմով	Քենսիսի իլի	Իրենցմով

Ան

Ո.	Ան, Անիկա	Օ	Անոնք	Օնլար
Ս.	Անոր	Օնուց	Անոնց	Օնլարցն
Տ.	Անոր	Օնա	Անոնց	Օնլարա
Հ.	Զան, զանիկա	Օնու	Զանոնք	Օնլարը
Բ.	Անկէ	Օնաց	Անոնցմէ	Օնլարացն
Գ.	Անով	Օնուց ըլա	Անոնցմով	Օնլար ըլա

ԾԱՆՕԹ. — Ան ին պէս կը հոլովուին աւ և աւ դերա-
նուաները :

81. ՀՐԱ. ՀԱՆԳ

Գտնել հետեւեալ բառերուն թիւը եւ հոլովը .

Քու, զիս, անոր, անով, ինձմէ, քեզ, զքեզ, իրեն, իրմով, անոնք, անոնցմով, ինծի, իմ, ես, մեր, զմեզ, մեզմով, ինձմով, քեզմով, իրենցմով, անոնցմէ, ասով, ասով, ատկէ, ատոնցմով, ատոնք, ասոնք, ասկէ, անկէ, զանիկա, զինք, անիկա, զանոնք, անոնց, իրենց, զիրենք :

79. Մ Ի Ի Ք Ե Ա Լ Է Ս Է

Սէմիզ գաղար պահալը տըր : Կիւլէր եա զըր-
 ըզը , եա պէյազ օլուր : Սէրվէդիմիս չօգ տուր , Ֆա-
 ւաթ Ֆայտէլի տէյիւ : Պու գալէմլէր հիչ էյի տէյիւ
 սիրլէր : Բիւչիւք հէմչիրէմիզ հասդա տըր : էյէր մէմ-
 ուն իսէն , չօգ զէնկինսին : Պու կիւն քէյֆիմ եօզ
 սուր : Պէն օնտան տահա պէօյիւյիւմ : Ուսլու օլու-
 ուզ քի սիզի սէվսինլէր : Տայմա ուսլու վէ դէր-
 պիյէլի օլունուզ : Կէզինմէտէն կէլիյօրուզ : Գարնըմըզ
 սճըգտը , պիզէ եէյէճէք վէրինիզ : Դէչէքքիւր էտէրիմ
 սօսդոււմ , պու էլիլիյինիզի ունուգմայաճաղըմ : Իչինիզի
 պիդիրտինիզ մի : Կէլինիզ հէփ պէրապէր էվէ կիտէ-
 իմ : Սիզի կէօրտիւյիմ իչիւն չօգ մէմոււն օլտոււմ :

ՊԱՅՈՒՆԷՐ. — Վերի տաճկերէն խօսքերը հայերէնի թարգ-
 մանեցէ՛ք :

62. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Այս թիւերը թուանօաննիւրով գրեցե՛ք .

Մէկ , հինգ , եօթը , ութը , քսան , քսանըչորս , քսանը-
 նը , երեսուն , երեսուն երկու , երեսունըութը , քառասունը-
 մէկ , քառասունըհինգ , քառասունըինը , յիսուներկու , յի-
 սունըչորս , յիսունըվեց , յիսունըինը , իննսունըչորս , իննսու-
 նըեօթը , հարիւրմէկ , հարիւրչորս , հարիւր յիսունըհինգ , եր-
 կու հարիւր երկու , երեք հազար չորս հարիւր քսանըմէկ :

80. ԱԳՌԱԻԸ ԵՒ ԿՈՒԺԸ

Ագռաւը շատ ծարաւի էր . վազեց կուժի մը քոր ջուր խմէ : Իրաւ կուժին մէջ ջուր կար , բայց այնքան քիչ էր որ շատ աշխատելէ վերջ հազիւ կրցար կտուցին ծայրը ջուրին հասցնել :

« Յուսահատելու չէ ըսաւ ինքնիրեն , հնարք գտնեմ : » Ագռաւը մանր քար մը առաւ և կուժին մտնետեց . հատ մը եւս . հատ մըն ալ ետեւէն : Քարերը ջուրին տակը կ'երթային , իսկ ջուրը վեր կ'ելէր : Հալ չեղաւ շատ քար ձգելու , աշխատութիւնը պարտաւ չի գնաց , և սկսաւ հանգիստ խմել ջուրը : Թէ որ այս խելքը չընէր , ջուրին հասնելիք չունէր :

ԲԱՌՆԵՐ. — Ագռաւ , գորշ . — կուժ , տեղէ . — հաղի անճոգ . — Հնարք , ստորէ , ել . — Մանր , սփոգ . — Եւս , արհ . — Հարկ , լուր . — Հանգիստ , բահոգ :

ՀԱՐՑԱՐՄԱՆ. — Ագռաւը ի՞նչ ընել կ'ուզէր . — Ասոր համար ի՞նչ հնարք բանեցուց : — Թէ որ այս հնարքը չի բանեցընէր , պիտի կրնա՞ր ծարաւը անցնել : — Այս պատմութեան ի՞նչ բան կրնաք հետեւցնել :

63. ՀՐԱ ՀԱՆԳ

Կեօնուն սեղ յարմար բառեր դրե՛ք .

. . . կառքը կը քաշեն : . . . ծաղիկներուն հիւթով կ'ապրի : . . . կենդանեաց իշխանն է : . . . Որդի Աստուծոյ է : . . . ծաղիկներուն թագուհին է : . . . ձմրաբերեք ամիսներն են : . . . կը շինեն մեղրը : . . . կը բուսցնէ բոյսերը : . . . անտառներու երգիչն է : . . . Թուրքիոյ մայրաքաղաքն է : . . . Աստուծոյ տունն է : . . . ձմրան պտուղներն են :

81. ՇՈՒՆԸ ԵՒ ԻՐ ՏԷՐԸ

Երիտասարդ մը կ'ուզէր իր շունը գետը նետել և
 սեղգել : Պզտիկ նաւակ մը կը մտնէ , շունն ալ հետը
 առնէ և ավուռնքէն կը հեռանայ : Երբոր հոսանքին
 էջտեղը կը հասնի , շունը կը բռնէ և յանկարծ գետը
 նետէ : Խեղճ շունը ջրին տակը կ'երթայ , կը կոր-
 ուի . քիչ մը ետքը երեսը կ'ելնէ և յուսահատութեամբ
 ոլոր ճիգը կը թափէ որ նաւակին հասնի : Բայց ամէն
 նմգամուն որ նաւակին կը մտնենար , իր տէրը թիա-
 սով կը հրէր : Այս կռիւր՝ շան ու տիրոջ մէջ՝ այսպէս
 ըշարունակուէր երբոր տէրը , համբերութիւնը հատ-
 ելով , երկու ձեռքով թիակը կը բռնէ և շան գլխուն
 ըզարնէ , բայց նոյն միջոցին ոտքը կը սահի ու ինքն
 ը գետը կ'իյնայ : Այն ատեն տեսարանը կը փոխուի :
 Աւատարիմ շունը գետին տակը կ'երթայ , իր տէրը
 բռնէ և գետեզրը կը բերէ , թէև քիչ մնաց որ հո-
 անքը զինքը պիտի տանէր :

Այսպէս շունը հաւատարմութեան օրինակ մը կու-
 այ իր տիրոջ :

ԲԱՌԵՐ. — Երիտասարդ , Գեա , շայ . —
 սեղգել , Գոյժ-Գ . — Նաւակ , Գոյժ . — Աւուռնք , Գեճիչ Կե-
 րը . — Հեռանալ , Գոյժ Կեճիչ . — Հոսանք , Գեճիչ . —
 անկարծ , Գեճիչ Կեճիչ . — Կորսուիլ , Գոյժ Կեճիչ . — Ճիգ ,
 Գոյժ . — Թիակ , Կեճիչ . — Շարունակել , Գեճիչ Կեճիչ . —
 համբերութիւն , Գոյժ . — Սահիլ , Գոյժ-Գ . — Տեսարան , Գեճի-
 չ . — Հաւատարիմ , Գոյժ . — Գետեզր , շայ Կեճիչ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Երիտասարդը ի՞նչ ըրաւ իր շունը : —
 ունը ջուրին մէջ ի՞նչ կ'ընէր : — Տէրը ի՞նչպէս ջուրը ին-
 աւ : — Այն ատեն ի՞նչ պատահեցաւ : — Շունին այս ըրածը
 նշպէս բան է :

82. ՓՈՒԱԴԱՐՁ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ո.	—	—	—
Ս.	Մէկզմէկու	Իրարու	Պիրպիրիցից
Տ.	Մէկզմէկու	Իրարու	Պիրպիրիցե
Հ.	Մէկզմէկ	Իրար , զիրար	Պիրպիրիցի
Բ.	Մէկզմէկէ	Իրարմէ	Պիրպիրիցեցե
Գ.	Մէկզմէկով	Իրարմով	Պիրպիրի իլէ

ԾԱՆՕԹ. — Փոխադարձ դերանունները ուղղական հոլով չունին , որովհետեւ ենթակայ չեն ըլլար :

83. Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

(Աղօրիք)

Որքան ջուր տան , որքան ցորեն
 Կը խմէ , կ'ուտէ , կ'ուզէ նորէն .
 Զի քընանար , անդադար նա
 Կը խմէ , կ'ուտէ և կը դառնայ :

ՔԱՌԵՐ. — Անդադար , արդիւնաւոր :

84. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ուղղեցե՛ք հետեւեալ խօսքերը .

Կատուն կը հաչէ , շունը կը մլաւէ : Դանակով ապուր կ'ուտեն : Գրիչով կար կը կարեն : Զուրը կ'ուտեն , հացը կը խմեն : Աչքով կը լսեն , ձեռքով կը քալեն , իսկ ահանջով կը տեսնեն : Շոգենաւր առագաստով կ'երթայ և նաւակը անիււով : Խելօք տղան կը պատժուի , իսկ անառակը կը վարձատրուի : Պատառաքաղով ապուր կը խմեն : Զուրը պնակին մէջ կը դնեն , իսկ կերակուրը դաւաթին մէջ : Զմեռը մարդիկ ամարանոց կ'երթան : Աղը անուշ է , Շաքարը թթու է : Հորը դոյլին մէջ ինկաւ :

84. ՅԱՄՐԱԲԱՐ ԱՃԱՊԱՐԷ

Երեկոյ մը կառապան մը որ իր կառքը վաճառքով
 բեռցած էր, սոսկալի արագութեամբ կը քշէր զայն,
 որ ժամ յառաջ քաղաք հասնի: Ճամբուն վրայ մար-
 դու մը քովէն անցած ատեն, հարցուց անոր թէ արդ-
 օք կրնա՞ր քաղաքին դուռները գոցուելէ յառաջ քա-
 ղաք ժամանել: Ճամբորդը որ կառապանին պէս դէպի
 քաղաք կ'երթար, պատասխանեց. «Այո՛, եթէ աւելի
 կամաց վարես կառքը:»

Կառապանը այս պատասխանին վրայ ինքնիրենը
 զսաւ. «Այս մարդը յիմար մը ըլլալու է:» և զարկաւ
 սարազանը ձիերուն և շարունակեց իր ընթացքը միեւ-
 ղոյն արագութեամբ: Բայց քիչ մը վերջը յանկարծ
 կառքին անիւներէն մին կոտրելով՝ կառքը մէկ կողմին
 լրայ ինկաւ և մէջի վաճառքները գետին թափեցան:

Երբ կառապանը այս վիճակին մէջ ինչ ընելիքը կը
 մտածէր, քիչ մը առաջ տեսած մարդը հասաւ, և

85. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Կետեռուն տեղ երկու յարմար բառ դրե՛մ.

- . . կարծր են : . . . ժրաջան են : . . . փայլուն են :
- . . բարակ են : . . . սուղ են : . . . աշխատասէր են:
- . . հունտ են : . . . նեղ են : . . . պայծառ են :
- . . ըոյս են : . . . լայն են : . . . լեղի են :
- . . թուփ են : . . . շիտակ են : . . . թափանցիկ են:
- . . սե են : . . . անգոյն են : . . . պաղ են :
- . . հեղուկ են: . . . թանձր են : . . . ծանր են :
- . . կալուն են: . . . անուշահոտ են: . . . գնդաձև են :

գտնելով զայն այդ վիճակին մէջ, ըսաւ անոր. « Տե-
սա՛ր թէ իրաւունք ունէի: Ես հիմա ոտքով քաղաք
պիտի հասնիմ, բայց դուն չորս ձիերովդ այսօր չի պիտի
կրնաս հասնիլ: »

Բարոյական. — Շատ անապարողը ոչ մէկ բանի
կրնայ հասնիլ:

ԲԱՌԵՐ. — Յամբարար, ե-վ-շ-մ. — Աճապարել, -ճէլ-
էր-ճէ. — Կառապան, -բ-դ-ճը. — Վաճառք, էշ-մ, հ-ւ. —
Արագութիւն, շ-է-դ-է-լ-է. — Ժամանել, էէր-էշ-է. — Ճամ-
բորդ, է-ւ-ճը. — Վարել, -է-բ-է. — Յիմար, ր-է-լ. — Խա-
րազան, ք-հ-լը. — Ընթացք, կէր-էլ. — Միեւնոյն, -յնը. —
Անիւ, ր-է-է-բ-է. — Իրաւունք, հ-է:

ՀԱՐՑԱՐԱՆ. — Կառապանը ի՞նչպէս կը ճամբորդէր:
Որո՞ւ պատահեցաւ ճամբուն վրայ և ի՞նչ հարցուց անոր:
Մարդը ի՞նչ պատասխանեց: Կառապանը մարդուն պատաս-
խանին վրայ ի՞նչ մտածեց և ի՞նչ ըսաւ: Յետոյ ի՞նչ պատա-
հեցաւ: Ճամբորդը երկրորդ անգամ կառապանին պատահե-
լուն ի՞նչ ըսաւ անոր: Իրաւունք ունէ՞ր: Այս պատմութենէն
ի՞նչ կը հետեւի:

66. Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ

Հետեւեալ բառերով վարի օրինակից պէս խօսքեր շի-
նեցե՛ք.

Հարստութիւն, տգեղութիւն, մեծութիւն, աղքատու-
թիւն, բարկութիւն, ծուլութիւն, մեծամտութիւն, ագա-
հութիւն, ժուժկալութիւն, հաւատարմութիւն, ուղղութիւն,
երկչոտութիւն, բարեկեցութիւն, ընկերասիրութիւն, յուսա-
հատութիւն, լրջութիւն:

ՕՐԻՆԱԿ. — Հարստութիւն ունեցողը հարուստ կը կոչ-
ուի:

85. ԴՈՒՆ ԻՆՉ ՈՒՆԻՍ

Խղունջն ունի իր խըցիկ ,
 Թռչունն իր բոյն գեղեցիկ ,
 Մեղուն ունի իր փեթակ ,
 Կատուն ունի իր մուշտակ .
 Դճուն ինչ ունիս պիտանի ,
 Ըսէ՛ , նայիմ , պատանի :

— Հագուստ ունիմ ու կօշիկ ,
 Եւ ծընողներ անուշիկ .
 Սիրտ մը ունիմ մանաւանդ
 Հօրքս , մօրքս հընազանդ .
 Ունիմ նաև ես ուսման
 Եռանդ ու սէր անսահման :

ԲԱՌՆԵՐ. — Խղունջ , թռչունիչ . — Խցիկ , թռչ-
 Մուշտակ , փեթ . — Պիտանի , լաւբլի . — Պատանի , կնի-
 Չնոթ . — Մանաւանդ , պիտանի . — Հնազանդ , մեղք . —
 Եռանդ , շարժ . — Անսահման , սահման :

ՊԱՅՈՒՆԵՐ. — Վերի ոտանաւորը գոց սորվեցէ՛ք և բարձ-
 րաձայն արտասանեցէ՛ք :

87. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Հետեւեալ բառերուն տառափոխութիւնը ուղղեցէ՛ք .

Խելածի , համարցակ , լէզու , անքուֆ , չուր , ծէրու-
 ֆիւն , ախլիկ , հիւանթ , բունչ , բաղլիլ , փարեւէր , բոք-
 րիկ , առագիւնի , աղգատ , հաւկիդ , հանթիւմանութիւն ,
 քորք , ցեռք , քլուխ :

86. ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ա. Դեմք

ԵԶԱԿԻ		ՅՈՒՐՆԱԿԻ	
Ո. Իմս , իմինս	Պեցիմքի	Իմիններս	Պեցիմքիլեր
Ս. Իմինիս	Պեցիմքիցից	Իմիններուս	Պեցիմքիլերից
Տ. Իմինիս	Պեցիմքիցե	Իմիններուս	Պեցիմքիլերե
Հ. Իմս , իմինս	Պեցիմքիցի	Իմիններս	Պեցիմքիլերի
Բ. Իմինէս	Պեցիմքիցեց	Իմիններէս	Պեցիմքիլերեց
Գ. Իմինովս	Պեցիմքի իլե	Իմիններովս	Պեցիմքիլեր իլե
Ո. Մերը , մերինը	Պիզիմքի	Մերինները	Պիզիմքիլեր
Ս. Մերինին	Պիզիմքիցից	Մերիններուն	Պիզիմքիլերից
Տ. Մերինին	Պիզիմքիցե	Մերիններուն	Պիզիմքիլերե
Հ. Մերը , մերինը	Պիզիմքիցի	Մերինները	Պիզիմքիլերի
Բ. Մերինէն	Պիզիմքիցեց	Մերիններէն	Պիզիմքիլերեց
Գ. Մերինովը	Պիզիմքի իլե	Մերիններովը	Պիզիմքիլեր իլե

Բ. Դեմք

Ո. Քուկդ , քուկինդ }	Սեցիցի	Քուկիններդ	Սեցիցիլեր
Ս. Քուկինիդ	Սեցիցիցից	Քուկիններուդ	Սեցիցիլերից
Տ. Քուկինիդ	Սեցիցիցե	Քուկիններուդ	Սեցիցիլերե
Հ. Քուկդ , քուկինդ }	Սեցիցիցի	Քուկիններդ	Սեցիցիլերի
Բ. Քուկինէդ	Սեցիցիցեց	Քուկիններէդ	Սեցիցիլերեց
Գ. Քուկինովդ	Սեցիցի իլե	Քուկիններովդ	Սեցիցիլեր իլե
Ո. Չերը , ձերինը	Սիզիցի	Չերինները	Սիզիցիլեր
Ս. Չերինին	Սիզիցիցից	Չերիններուն	Սիզիցիլերից
Տ. Չերինին	Սիզիցիցե	Չերիններուն	Սիզիցիլերե
Հ. Չերը , ձերինը	Սիզիցիցի	Չերինները	Սիզիցիլերի
Բ. Չերինէն	Սիզիցիցեց	Չերիններէն	Սիզիցիլերեց
Գ. Չերինովը	Սիզիցի իլե	Չերիններովը	Սիզիցիլեր իլե

Գ. Դեմք.

ԵԶԱԿԻ		ՅՈՒՆԱԿԻ	
Պ. Իրը , Իրենը	Օնուցֆի	Իրենները	Օնուցֆիլեր
Ս. Իրենին	Օնուցֆիցից	Իրեններուն	Օնուցֆիլերից
Տ. Իրենին]	Օնուցֆիցե	Իրեններուն	Օնուցֆիլերե
Զ. Իրը , Իրենը	Օնուցֆիցի	Իրենները	Օնուցֆիլերի
Յ. Իրենէն	Օնուցֆիցսեց	Իրեններէն	Օնուցֆիլերսեց
Թ. Իրենուրը	Օնուցֆի իլի	Իրեններուրը	Օնուցֆիլեր իլի
Պ. Իրենցը , Իրենցինը)	Օնլարցֆի	Իրենցինները	Օնլարցֆիլեր
Ս. Իրենցինին	Օնլարցֆիցից	Իրենցիններուն	Օնլարցֆիլերից
Տ. Իրենցինին]	Օնլարցֆիցե	Իրենցիններուն	Օնլարցֆիլերե
Զ. Իրենցը , Իրենցինը)	Օնլարցֆիցի	Իրենցինները	Օնլարցֆիլերի
Յ. Իրենցինէն	Օնլարցֆիցսեց	Իրենցիններէն	Օնլարցֆիլերսեց
Թ. Իրենցինուրը	Օնլարցֆի իլի	Իրենցիններուրը	Օնլարցֆիլեր իլի

ԾԱՆՕԹ. — Այս ստացական դերանուններուն վրայ լանաղան վարժութիւններ ընել տալ աշակերտաց , հայերէնէ ռաճկերէն և փոխադարձաբար :

69. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Յարմար ստացականներ դրե՛ք կէսերուն ճեղ .

Բարի հայր մը կը սիրէ . . . դաւակները , բայց չի սիրեր . . . թերութիւնները : Պատուեցէ՛ք . . . ծնողքը , եթէ կ'ուզէք որ . . . կեանքը երկարատև ըլլայ : Յիսուս առականուոր կը խօսէր . . . աշակերտներուն : Մենք մաքուր կը պահենք . . . տետրակները : Սարդը կ'ապրի . . . ոտտայնով : Երկու ջնիս ալ նոր կօշիկներ ունինք , բայց . . . աւելի նոր են : Երանի՛ այն աշակերտներուն որ . . . բարի վարքովը սիրելի են . . . ուսուցիչներուն :

87. Մ Ի Ի Ք Ե Ա Լ Է Մ Է .

Կիւնէշին սըճագլըղը իւզիւմէրի եէդիշտիրի : Էս-
 կիճի էսկի բուպալար սագար : Դէնպէլէր պիր կիւն
 փէշիման օլաճագլար տըր : Աղաճլարըն եափրագլարը
 սօն պահարտա սարարըր : Սայիլլէրէ Ֆէնալըգ էտէրէք
 սէվինմէ : Նիշին արգատաշլարընըղա թագլըլըղա վա-
 րընմայօրսուճուզ : Հէփսինիզ գարտաշլարըզ, պիրպիրի-
 նիզ իլէ մուհապպէդիէ դօնուշուճուզ : Այըն ըլըղը կի-
 ճէլէրի պիզի գէնվիր իտէր : Ինսան քէնտի ազլըլըլա
 տիւնեանըն վահշի հայլանլարընը զապթ էտէպիլիր :
 Սիզի չօգտան պէրի կէօրմէտիյիմ իչիւն փէք արզու-
 լէմիշիմ : Ալիմ վէ ագըլըլը ատամլար ասլա աճ գալ-
- որդը . . . : Հացափաճառը . . . : Դատաւորը . . . : Լուսինը . . . :
- նձրեւը . . . : Ձիւնը . . . : Ջուրը . . . : Կոլը . . . : Մոլը . . . :

121. Շ Ո Ւ Ն Ը

Շունը հաւատարիմ կենդանի մըն է։ Անիկա իր տիրոջ ամէն խօսքին և ակնարկին կը հնազանդի։ Երբ տէրը զանիկա ձեծելու ալ ըսայ, ան դարձեալ հաւատարիմ կը մնայ, և անկէ չի զատուիր։ Անիկա քիչերատեն տունը կը պահէ դողերէն։ Շունը հովիւներուն և որսորդներուն ալ մեծ ծառայութիւն կ'ընէ։ Անիկա՝ բլուրին վրայ կամ ձորին մէջ և կամ թուփերուն տակ ցրուած ոչխարները մէկտեղ կը հաւաքէ։ չի թողուր որ անոնք մոլորին ու կորսուին։ Անիկա կը վազէ ու հեռուն ինկած որսը իր որսորդ տիրոջը կը բերէ։ Կան շուներ որ իրենք ալ կրնան որսալ, ինչպէս քարակները, որ բարակ մարմին ունին և խիստ արագ վազելով կրնան որսալ նապաստակներ, ճագարներ։

Հաւատարիմ շունը միշտ արժանի է մեր սիրոյն և խնամքին։

ՌԱՌԵՐ. — Հաւատարիմ, — Կէտ, — Ակնարկ, Կեռնալուրէրէ. — Մեծել, Կեռնալուրէրէ. — Զատուիլ, — Կեռնալուրէրէ. — Գող, Ելբուր. — Հովիւ, Կեռնալուրէրէ. — Մառայութիւն, Ելբուր. — Բլուր, Կեռնալուրէրէ. — Հաւաքել, Ելբուր. — Մոլորիլ, Ելբուր. — Ծագար, — Կեռնալուրէրէ :

ՅԵ. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ինչ կը կոչուի

Մաղիկներէ շինուած փունջ մը. ծաղկախոտէ աւրուած դէմք մը. ծառերուն ծաղիկ բանալը. մարդ մը որ ծաղիկ կը ծախէ. եկեղեցական տօն մը որ Զատիկէն ութ օր առաջ կը տօնուի. գեղեցիկ գրի տեսակ մը. դպրոցներու մէջ փոքր տղայոց սրահ մը. ծաղիկներու ամանը. ծաղիկ քաղողը. հասկ հաւաքողը :

ՕՐԻՆԱԿ. — Մաղիկներէ շինուած փունջ մը կը կոչուի ծաղկեփունջ :

122. Գ. ԼԵՈՐԴՈՒՅՑԻՆ . — (ԿԱՐԴԱԼ)

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

Եզ.

Կը կարդամ

Կը կարդաս

Կը կարդայ

Յոք.

Կը կարդանք

Կը կարդաք

Կը կարդան

Անցեալ անկասար

Կը կարդայի

Կը կարդայիր

Կը կարդար

Կը կարդայինք

Կը կարդայիք

Կը կարդային

Անցեալ կասարեալ

Կարդացի

Կարդացիր

Կարդաց

Կարդացինք

Կարդացիք

Կարդացին

Բացարձակ ապառնի

Պիտի կարդամ

Պիտի կարդաս

Պիտի կարդայ

Պիտի կարդանք

Պիտի կարդաք

Պիտի կարդան

Անկասար ապառնի

Պիտի կարդայի

Պիտի կարդայիր

Պիտի կարդար

Պիտի կարդայինք

Պիտի կարդայիք

Պիտի կարդային

ՀՐԱՄԱՅՈՒԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եզ.

Յոք

Կարդա՛

Կարդա՛նք
Կարդացէ՛ք

ՍՏՈՐԱԳԱՍՏԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

Կարդամ
Կարդաս
Կարդայ

Կարդանք
Կարդաք
Կարդան

Անկասար

Կարդայի
Կարդայիբ
Կարդար

Կարդայինք
Կարդայիք
Կարդային

ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿ

Աներեւոյթ

Կարդալ

Ներկայ ընդունելութիւն

Կարդացող

Անցեալ ընդունելութիւն

Կարդացած , կարդացեր

Ապառնի ընդունելութիւն

Կարդալու , կարդալիք

Վ.Ա.ԲԺ. — Կարդալ բային պէս խոնարհեցէ՛ք ինդալ պոռալ , հազալ , շոդալ , շուալ , մամալ , թնդալ , ցնծալ :

123. Շ Ա Ք Ա Ր Ը

Մեզի անծանօթ բոյս մը չէ ճակնդեղը : Անիկա
ունի կարճ ցողուն մը և հակթաձև տերեւներ , որոնք
երկայն կոթեր ունին : Բայց այս բոյսին ամենակարե-
ւոր մասը անոր արմատն է , կլոր , մսուտ և գեղնա-
գոյն : Այս արմատէն է որ կը հանեն շաքարը :

Երբ ճակնդեղները հասնին , զանոնք հողին տակէն
կը հանեն և անոնց ցողուններն ու տերեւները կտրե-
րելով՝ կրկին հողին մէջ կը թաղեն : Չմրան մէջ անոնք
հողին տակէն հանուելով կը տարուին մասնաւոր գոր-
ծարաններու մէջ , ուր բազմաթիւ գործաւորներ կը
լուան զանոնք և ճզմելով՝ մեծ ամաններու մէջ լարայի
կը վերածեն : Այս լարան իր մէջ կը պարունակէ քաղցր
հոյզ մը , զոր քամելով՝ մեծ կաթսաներու մէջ կ'եփեն
մինչև որ շաքարի փոխուի :

98. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Հեփեալ բառերու ծայր , ըս յարմարութեան , բար ,
պիս , օրհն մասնիկները աւելցնելով ավականներ օրհնեցե՛ք եւ
ճուե՛ք անոնց նօսնակութիւնը .

այր , անկեղծ , ճշմարիտ , մայր , առատ , լուրջ , թե-
թեւ , վայելուչ , անգութ , քոյր , լախ , եղբայր , ընտանի ,
գաղտնի , ազնիւ , իմաստուն , աղքատ :

ԾԱՆՕԹ . — Ուսուցիչը քերականական բառերու նշանա-
կութիւնը և սահմանը հետզհետէ պէտք է տայ աշակերտաց :
Առ այս Տօնէլեան Քերականութեան Ա. մասը ի ձեռին ու-
նենալ կը յանձնարարենք ուսուցչաց :

Տաք երկիրներու մէջ տեսակ մը եղէգ ալ կայ որ չորս-հինգ կանգուն բարձրութիւն կ'ունենայ: Անոր ցողունը հիւթալից ծուծով մը լեցուն է: Այս ծուծէն ալ շաքար կը հանեն, և ասոր համար այն տունկը շաքարեղէգ կը կոչուի:

ԲԱՌԾԻ. — Անծանօթ, դէլէ-եւ, Ռեւըմ-մըշ. — Ճակնգեղ, փանօր. — Հաւկթածե, Խոտորնո դէլէօ. — Ամենակարեւոր, Էն Եհեմիյեդի. — Դեղնագոյն, օրը բեւիւ. — Թաղել, Կեօմի. — Հանուիլ, լեք-բըւմ-գ. — Տարուիլ, Կեդե-բեւիւ. — Մասնաւոր, Խոտու. — Գործարան, Ֆուրէթ. — Բաղամթիւ, լեք. — Ճղմիլ, Էլի. — Պարունակել, հովի օլմի. — Հոյզ, Էօշ. — Քամիլ, օւքմի. — Եղէգ, Գմըշ. — Բարձրութիւն, Եի-տեւիլ. — Հիւթալից, Էօլի. — Ծուծ, Էիլ. — Շաքարեղէգ, շեիք Գմըշ:

ՀԱՐՑԱԲԱՆ. — Ինչ տեսակ բան է շաքարը: Անիկա ինչ համ ունի: Ինչ բանէ կը հանեն: Ինչ է ճակնգեղը: Անոր ո՞ր մասէն կը հանեն շաքարը և ի՞նչպէս: Ինչ է շաքարեղէգը և ինչո՞ւ համար այդպէս կը կոչուի: Շաքարը ինչ բաներու կը գործածեն:

ՅՅ. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Հետեւեալ խօսքերը յոյճակի բրե՛ք.

Թռչունը կը թռչի: Գիւղացին գիւղ վերադարձաւ: Քահանան մեռելը թաղեց: Ճարտարագետը գեղեցիկ տուն մը շինեց: Պատուհանը բաց էր: Յանցաւորը կը պատժուի: Մըջիւնը հատիկ կը կրէ: Մառը ծաղկեցաւ, պտուղ տուաւ: Արջը պտուղ կ'ուտէ: Աշակերտը նոր քերականութիւն գնեց: Արդարն երկինքը պիտի ժողանգէ:

ՕՐԻՆԱԿ. — Թռչունները կը թռչին:

124. ՊԶՏԻԿ ԳՈՐԾԱՒՈՐԻՆ ԵՐԳԸ

Քամին սաստիկ կը փռչէ,
Բայց այդ տըղուն հոգը չէ .
Միշտ աշխատիլ դու կրնաս,
Զիւն և քամի ի՞նչ վընաս :
 Գործ ցուցընեն ինձի թող,
 Ես աշխատանք չեմ ատող .
 Աշխատութիւնս է օրհնած
 Երբ շահիմ մօրս օրուան հաց :
Ո՛չ, ես մայրիկս չեմ թողոր
Ոչ անօթի, ոչ տըխուր .
Զանք և քրտինք անհամար
Պիտի թափեմ մօրս համար :
 Մայր, արեւուդ ես զուրբան,
 Քեզ կը զոհեմ ամէն բան .
 Երջանկացիւր, մայրիկ դուն,
 Դրախտի փոխեմ ես մեր տուն :

ԲԱՆՈՒՅՐ. — Քամի, եւլ, բէ-չիւ-բ . — Վնաս, շը-բ . — Ատող, սիվէյի . — Օրհնած, մ-գ-դ-դ-էս . — Շահիլ, բ-լ-ն-մ-գ . — Տխուր, տ-դ-բ-լ . — Անհամար, ս-յ-ը-ը-լ . — Զոհել, ֆ-ե-դ-է-դ-է-դ . — Երջանկանալ, մ-դ-լ-ն-օ-լ-մ-գ . — Դրախտ, ճ-ի-ն-է-դ :

ՊԱՅՈՒՆԻՐ. — Գոց սորվեցէ՛ք վերի ոտանաւորը և բարձ-րաձայն արտասանեցէ՛ք :

125. ԱՅԳԻ, ԽԱՂՈՂ, ԳԻՆԻ, ՔԱՑԱԽ

Խաղողը որթին պտուղն է : Սա ամէնէն համեղ և յարգի պտուղներէն մէկն է : Խաղողին որթերը կը անկեն այգիին մէջ : Այգիին մէջ շատ տեսակ աշխատութիւններ կան : Այգեպանը կ'աշխատի հոն , կը խնամէ որթերը , կը քաղէ խաղողները և կը վաճառէ :

Խաղողէն կը պատրաստեն գինին : Հնձանի մէջ կը լեցնեն խաղողները և կը ճմլեն , որպէս զի ջուրերը քամուին , յետոյ կը թողուն օգին գիմացը , որպէս զի խմորում ըլլայ : Խաղողին անուշ հիւթը ֆաղցու կ'ըսուի : Քաղցուն քանի մը օր օգին գիմաց մնալով ալքովի համ կ'առնէ , գինիի կը փոխուի :

Գինին յարգի ըմպելիք մըն է : Երբ գինին ալ օգին գիմացը թողունք մի քանի օր , կ'ըլլայ քացախ :

ԲԱՌ-ԵՐ. — Այգի , պու — Որթ , սոմ . — Յարգի , էւյ-
ձէրէ . — Այգեպան , պուճը . — Խնամել , հոգայեց օլմօ . —
Վաճառել , սոդմօ . — Պատրաստել , հալըլմօ . — Հնձան ,
էլէճէ հոմն . — Ճմլել , էլձէ . — Խմորում . — Խմոր օլ-
մօ . — Հիւթ , էու . — Քաղցու , շէր . — Ալքօլ , էփէրո :

ՀԱՐՑԱՐԱՆ . — Ըսէ՛ք թէ ի՞նչ տեսակ տունկ է որթը :
Ի՞նչ է այգին : Ի՞նչեր կը շինուին խաղողէն և ի՞նչպէս :

100. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Ամբողջ խօսքերով հետեւեալ հարցումներուն պատասխանեցե՛ք .

Նաւապետը ի՞նչ կ'ընէ : Դատաւորը : Սեղանաւորը :
Բրժուար : Ժամագործը : Այգեգործը : Պարտիզպանը : Ծղնա-
ւորը : Վաճառակահանը : Մշակը : Ծամբորդը : Տպագրիչը :
Մաքսաւորը : Խաղախորդը : Ատաղձագործը : Գիշերապահը :

126. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՆՄԱՆԱԶԱՅՆ ԲԱՌԵՐՈՒ

ՍԵՐ և ՍԷՐ . — Սերը կը պատրաստեն կաթով և կ'ուտուի Մայր մը իր զաւակաց վրայ մեծ սէր ունի :
 ԴԻԱԿ և ԹԻԱԿ . — Երբ մարդ մեռնի , մարմինը այլեւս դիակ մը կ'ըլլայ :
 Նաւակները ծովուն վրայ թիակով կը քալեն :

ԲՈՒՌ և ՓՈՒՌ . — Պատերը կը ծեփեն բուռով :
 Հացագործը հացը փուռին մէջ կ'եփէ :
 ԹԵՒ և ԴԵՒ . — Մարդս երկու թեւ ունի :
 Դեւը օձի կերպարանք առնելով խաբեց Ադամ և Եւան :

ԴԱՆԱԿ և ԹԱՆԱԿ . — Դանակ և պատառաքաղ հարկաւոր են ճաշելու համար :
 Դիր գլխու համար պէտք է թուղթ , գրիչ , թանաք :

ՀՈՅԼ և ՅՈՅԼ . — Աստուած ցանեց երկինքին վրայ լուսաւորներու հոյլը :
 Այն աշակերտը որ չաշխատիր , իրաւամբ կը կոչուի յոյլ :

ԾԱՆՕԹ . — Դասատուն ուրիշ նմանաձայն բառեր գտնելով՝ անոնց նշանակութիւնը կը բացատրէ աշակերտաց՝ օրինակներով :

101. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Գիծեբուն տեղ յարմար կենդանիներու անուցներ դրե'ք .
 — կը վրնջէ : — կը զուայ : — կը պոռոչայ : — կը բառայէ : — կը մայէ : — կը հաջէ : — կը մլաւէ : — կը կռկրայ : — կը ճլուրլայ : — կ'ոռնայ : — կը մռնչէ : — կը սուլէ : — կը բզզայ : — կը ճոճուայ :

127. Ա Խ Ս Ո Ի Ի Յ Ա

Շէյլէր վար քի օգգայ ըլա սադըմազ, դանէ, ար-
 ջըն, էօրէք վէ քիլէ իլէ սադըլըր : Չարըլարտա էգի,
 փէյնիրի, իւզիւմի օգգայըլա սադարլար . Ֆադաթ եու-
 մուրթայը, ճէվիզի, փաթլիճանը վէ խըյարը դանէ իլէ
 վէրիրլէր : Չուխայը, խասայը, պասմայը, աոդարը,
 շէրիաի էօլլմէք իչիւն մէգրօ վէ էնտազէ գուլլանըլար .
 Կազ եաղընը, շարասը, սիւտիւ վէ պաչկա մասի
 շէյլէրի էօրէք իլէ վէրիրլէր : Պիր օգգա տէօրդ եիւզ
 տիրհէմ տիր : Պիր էնտազէ սէքիզ ըուպ տըր : Պիր
 դըուշ գըրդ փարա տըր : Արփայը վէ պուղտայը քիլէ
 իլէ էօրէրլէր : Պիր տիւքեանճըտան ախս ու իթա էտէնէ
 միւշէրի տէրլէր :

ԾԱՆՕԹ. — Դասատուն կրնայ աւելի ընդլայնել այս դասը
 և աշակերտաց բացատրել գործածական կշիռներու, չափե-
 րու և դրամներու միութիւնն և անոնց մասունքն :

102. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Կեսերուն տեղ յարմար բառեր դրե՛մ .

Ձին . . . կ'ուտէ : Շունը . . . կը պահպանէ, Հովիւը . . .
 կ'արածէ : Օրէնքը . . . կը պատժէ : Մայրը . . . կը խնամէ : Կա-
 տուն . . . կը բռնէ : Բոյրս . . . կը հիւսէ : Աստուած . . . կը
 սիրէ : Աղուէսը . . . կը խեղդէ : Քարակոփը . . . կը տաշէ :
 Սուրհանդակը . . . կը տանի : Քահանան . . . կը մկրտէ : Պայտարն
 . . . կը պայտէ : Լուսարարը . . . կը վառէ : Երկաթագործը
 . . . կը ծեծէ : Աշակերտը . . . կը կարգայ : Բժիշկը . . . կը գրէ :

128. Թ Ո Ղ Ո Ւ Լ

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

ԵԶԱԿԻ

ՑՈՒՆԱԿԻ

Կը թողում
Կը թողուս
Կը թողու

Կը թողունք
Կը թողուք
Կը թողուն

Անցեալ անկասար

Կը թողուի
Կը թողուիր
Կը թողուր

Կը թողուինք
Կը թողուիք
Կը թողուին

Անցեալ կասարեալ

Թողուցի
Թողուցիր
Թողուց

Թողուցինք
Թողուցիք
Թողուցին

Բացարձակ ապառնի

Պիտի թողում
Պիտի թողուս
Պիտի թողու

Պիտի թողունք
Պիտի թողուք
Պիտի թողուն

Անկասար ապառնի

Պիտի թողուի
Պիտի թողուիր
Պիտի թողուր

Պիտի թողուինք
Պիտի թողուիք
Պիտի թողուին

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եզ.	Յոք.
—	Թողո՛ւնք
Թո՛ղ	Թողուցէ՛ք

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ

Թողում	Թողունք
Թողուս	Թողուք
Թողու	Թողուն

ԱՆԿԱՏԱՐ

Թողուի	Թողուինք
Թողուիր	Թողուիք
Թողուր	Թողուին

ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿ

ԱՆԵՐԵԼՈՅՔ

Թողուլ

ՆԵՐԿԱՅ ընդունելութիւն

Թողող

Անցեալ ընդունելութիւն

Թողած , Թողեր

Ապառնի ընդունելութիւն

Թողու , Թողելիք

ԾԱՆՕԹ. — Ուր Վերջաւորող Քայերէն միայն քողուչ
 և զքունուչ բայերը ամբողջութեամբ կը խոնարհուին աշ-
 խարհարարի մէջ :

ՊԱՅՈՒԷՐ. — Զքունուչ բայն ալ խոնարհեցէ՛ք :

129. Թ Ո Ւ Ղ Թ Ը

Երբ մենք գրեւ, գծագրեւ կամ կարգալ ուղենք՝
 թերթ, տետր և գիրք կը գործածենք, որոնք բոլորը
 թուղթէ շինուած են: Հին ատենները մարդիկ քարի,
 փայտի, կենդանիի մորթի և ծառի տերեւներու վրայ
 լը գրէին: Ամէն գոյնէ թուղթ կրնայ գտնուիլ,
 մշակէս. ճերմակ, սև, կարմիր, կանանչ, դեղին, կա-
 ղոյտ, սկեգոյն, արծաթագոյն և այլն:

Թուղթը յարդէ, փայտի սղոցուքէ և քուրչերէ կը
 փնուի: Այն մարդը, որ տունէ տուն պտտելով քուր-
 չեր կը հաւաքէ, քրչաքաղ կը կոչուի: Ան իր ժողոված
 քուրչերը թուղթի գործարանը կը տանի, ուր այդ
 քուրչերը զատուելով և մաքրուելով կը լեցուն ջրով
 եցուն տաշաերու մէջ: Յետոյ մասնաւոր գործիքներով
 սիստ փոքր կտորներու բաժնուելով ճերմակ և թանձր
 սպուրի կը վերածուին: Այս ապուրը թաղիքներու վրայ
 տարածելով կը չորցնեն և վերջէն ալ զլաններու միջո-
 ցով ճնշելով կը շինեն թուղթը:

ԲԱՌԵՐ.— Գծագրեւ, բեւե՛՛ լըլմե՛՛. — Թերթ, լ-
 մե՛՛. — Մորթ, րե՛՛րէ. — Ոսկեգոյն, ուրու՛՛ բե՛՛կէ. —
 Արծաթագոյն, կե՛՛ր-ը բե՛՛կէ. — Սղոցուք, րե՛՛րէրէ րու՛՛լը.—
 Գրչաքաղ, գու՛՛լը-ճը. — Ջատեւ, ու-
 ճը-մե՛՛. — Տաշտ, րե՛՛րէ. — Թանձր, գոյ՛՛. — Թաղիք,
 կե՛՛րէ. — Տարածել, ե-յմե՛՛. — Գլան, սե՛՛կէրէ. — Ծնշել,
 լըլմե՛՛:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Ի՞նչ բանի կը գործածեն թուղթը: Հին
 ատենները թուղթի տեղ ի՞նչ կը գործածէին: Ի՞նչ բանէ կը
 փնուի թուղթը և ի՞նչպէս:

130. Մ Ի Ջ Ա Տ Ն Ե Ր

Միջատները փոքրիկ կենդանիներ են . Ասոնք նեղ մէջք մը ունին , որ գրեթէ կտրուածի պէս կ'երեւի : Սոյն պատճառաւ միջատն կ'ըսուին : Ասոնց գլխուն վրայ կան բերանը , աչքերը , և լանջքին վրայ՝ վեց ոտքեր : Ոմանք երկու կամ չորս թեւեր ալ կ'ունենան : Որովայններնուն վրայ բան մը չիկայ :

Ճանճ , մեղու , մտեղ , մրջիւն , թիթեռնիկ , լու , մլուկ , ոջիլ , մարախ , ցեց , փոսուռայ , պիծակ , որթալուիճ միջատ են , ու դեռ շատ տեսակ միջատներ ալ կ'ըլլան : Ասոնցմէ խիստ շատերը ֆլատակար են : Ոմանք մեզ կը նեղեն մեզմէ արիւն ծծելով , ոմանք մեր զգեստները ու կարասիները կը ծակծկեն , կ'աւրեն , ոմանք ալ մեր մշակած բոյսերուն կը ֆլատեն :

Օգտակար միջատներ ալ կան , ինչպէս . ընտանի մեղուն որ մեզր ու մեզրամոմ կը շինէ : Շերամը որ մետաքս կը շինէ :

ԲԱՌՆԵՐ. — Գրեթէ , -անի . — Լանջք , կետ . — Որովայն , Կորէ . — Լու , փերէ . — Մլուկ , Գորտ գորտ . — Ոջիլ , գետ . — Մարախ , չիտիլ . — Ծեց , կէ-վ . — Փոսուռայ , Գորտ գորտի . — Պիծակ , ելիտ Կորտ . — Որթալուիճ , ֆլուտի . — Վնասակար , Կորտի . — Մծեւ , Կորտ . — Մակծկել , Կորտ Կորտ Կորտ . — Աւրել , Կորտ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Միջատները ի՞նչ տեսակ կենդանիներ են և ի՞նչ ձեւ ունին : Մի քանի միջատի անուններ ըսէ՛ք : Ասոնք օգտակար են թէ ֆլատակար : Ի՞նչ տեսակ ֆլատներ կրնան հասցնել մեզի : Օգտակար միջատներէն որո՞նք գիտէ՛ք :

131. ԱՐԱԳԻԼԸ

Արագիլը գեղեցիկ թռչուն մըն է : Անոր զգեստը ու ճերմակ է . ոտքերն և կտուցը կարմիր են : Անիկա բարի և խելացի նայուածքով մը կը դիտէ իր զրկ կողմը : Իր երկայն սրունգները անգործ չի թռուր . երբեմն մարգագետնին բարձր խոտերուն մէջէն քայլէ . երբեմն եղէգներու և ճահիճներու մէջէն կ'երթայ : Անոր երկայն վիզն ու երկայն կտուցը իր տրոժին աղէկ կուգան : Անիկա ջուրին կամ ջրախառն լիզմին մէջէն կ'որսայ գորտը : Թուփերուն մէջէն կ'որսայ մողեսը . և իր ծակին մէջ՝ մուկը : Մուկ մը կամ որտ մը մէկ անգամէն կլլել անոր համար դժուար տրոժ մը չէ : Բայց մեծ օձ մը անոր բաւական նեղուն թիւն կը պատճառէ . ինչու որ օձը կրնայ անոր վզին համթութիլ ու զանիկա խեղդել :

Արագիլը կրնայ ուտել նաև ճանճեր ու ամէն տեսակ ճճիներ : Եւ ճիշդ ասոր համար անիկա օգտակար թռչուն մըն է : Անիկա խռիւներով և փուշերով կը շինէ իր բոյնը բարձր տան մը , կամ եկեղեցիի տանիքին ,

102. ՀՐԱՀԱՆԳ

Հետեւեալ բառերէն մէյ մեկ բայ օրնել եւ գրել Սահմանակալն Անրկայ , ապտոնի եւ հրամայակալն եղանակները .

Զարմանք , պատիւ , զրպարտութիւն , սոսկում , գործ , ռոտ , քուն , սէր , որոտում , խոստում , գեղեցիկ , հնարք , սուք , կռիւ , ներկ , գէր , հանգիտտ , պտոյտ , աշխատութիւն , փայլ , նոր , մտածութիւն :

կամ աշտարակի մը վրայ : Օգոստոս ամսուան մէջ անիկա մեզմէ հեռանալով կ'երթայ տաք երկիրներ , իսկ դարնան հետ կը վերադառնայ իր բոյնը : Արագիւն ընկերասէր և աննախանձ թռչուն մըն է : Անիկա իր գեղեցիկ մարմինին մեծութեանը և բոյնին բարձրութեանը վրայ երբէք չի հալարտանար . այլ ընդհակառակը սիրով թոյլ կուտայ որ փոքրիկ ճնճողուկներ գալով իր բոյնին մէջ իրենց համար բունիկներ շինեն :

ԲԱՌԵՐ. — Նայուածք , պփռլ . — Անգործ , էշէշ . — Ծահիճ , պփռլիւք . — Զրախառն , սոյլու քրքրիւք . — Տիղմ , շմոք . — Որսալ , սլամփ . — Մողէս , Էրդէնէլիք . — Բաւական , էփէյի . — Փաթթուիլ , սրլամփ : — Խեղդել , պոլմփ . — Ծճի , Էրդէնէլ . — Ծիշդ , դոմ . — Խոիւ , շուլուլ . — Փուշ , դիլի . — Տանիք , դոմ . — Աշտարակ , քոլի . — Ընկերասէր , սրփոլուլ . — Աննախանձ , քոլի . — Թոյլ տալ , պլլամփ . — Բունիկ , Էրդէնէլ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Արագիւր ի՞նչ տեսակ թռչուն է : Անիկա ի՞նչ կ'ընէ և ի՞նչ կուտէ : Մեզի ի՞նչ օգտակարութիւն ունի : Իր բոյնը ո՞ր տեղուանք կը շինէ : Զմեռները ո՞ր կ'երթայ անիկա : Ե՞րբ կը վերադառնայ : Ի՞նչ բնաւորութիւններ ունի :

104. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Հետեւեալ բայերուն զոյականը գտէ՛ք .

Գողնալ — դրել — տնկել — սիրել — մտածել — այցելել — համբուրել — ծեծել — գրկել — խօսիլ — շնչել — քալել — նեղել — մորթել — ծխել — շահիլ — ցաւիլ — պատիլ — որսալ — զբօսնուլ — նայիլ — հողալ — բարկանալ :

132. ԲԱՐԻՆ ԱՍՏՈՒԱԾ

Գիտե՞ս, քանի՞ լուսաւոր կայ
Երկնից կապոյտ կամարին վրայ .
Կրնաս համրել դու այն ամպեր
Որ կ'արշաւեն ցորեկ, գիշեր .
— Բարին Աստուած այդ ամենուն
Գիտէ թիւը, նաև անուն .

Կրնաս համրել, ո՞վ պատանեակ
Մեղուներուն անթիւ բանակ .
Գիտե՞ս, քանի՞ ձուկեր ջրերին
Ձուլիկ ծոցը սիրով կ'ապրին .
— Բարին Աստուած այդ ամենուն
Գիտէ թիւը, նաև անուն .

Գիտե՞ս արդեօք, երկրի վըրայ
Քանի՞ աղջիկ, քանի՞ մանչ կայ,
Քանի՞ թռչուն և թիթեռնիկ,
Որ կը վարեն կեանք երջանիկ .
— Տէրն ասոնց հեաքեղ ալ, որդիս .
Կը հոգայ. զինք սիրել պարտիս .

ՌԱՌԵՐ. — Կամար, +եօք. — Պատանեակ, կէնճ օղւն. —
անակ, օրդ. — Մոց, փոյն. — Կեանք վարել, եօթ-ը սե-ը-
+. — Տէր, Ալլահ .

ՊԱՏՈՒԷՐ. — Վերի ոտանաւորը գոց սարվեցէ՛ք և բարձ-
ւձայն արտասանեցէ՛ք :

133. Մ Ի Ի Ք Ե Ա Լ Է Մ Է

Հօճա պիղիմ իշին չալըչըր, լաքին քէնտի կէշին մէսի իշին տէ չալըչըր: Պիրպիրիմիզտէն էօղիւրիւ եալան սէօյլէմէյէլիմ, վէ իֆօդերա էգմէյէլիմ: Մէքդէ պին իշի գէմիզ տիր, լաքին տըչարըսը քիրլի տիր: Եալան սէօղ իլէ կէրչէք սէօղ արասընտա չօգ ֆարգ վար տըր: Յակօբ տօղրու եազաը՞ մը վազիֆէսինի էվէդ, օնուն եազաըղը աօղրու իտի, լաքին պէն եազամատըմ: Օ տէրս ալտը՞մը: Խայըր, տահա ալմատը ֆադաթ ալաճագ տըր: Հօճանըն գարչըսընտա օթուրույօր: Պու տէրսիմի պիլիր իտիմ, էկէր օպիրինէտէ պունուն գատար պիլսէմ, չօգ էյի օլուր: Էկէր շէյթանտան ուզագ գաչարսան, Այլահա եազըն օլուրսուն: Պիւգիւն ինսանլար կիւլէրլէր, սէօյլէրլէր: Ճիւմլէսինէտէ ինսան տէրլէր: Ֆադաթ օնլար տա ճինս ճինս օլուրլար էրքէք ատամ պաչգա, գարը պաչգա տըր: Ատամ ատամտան ֆարգլը տըր:

ՊԱՅՈՒԷՐ. — Վերի տաճկերէն խօսքերը հայերէնի թարգմանեցէ՛ք:

105. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Պասասխանեցե՛ք հետեւեալ հարցումներուն .

Ի՞նչ տեսակ տեղ է եկեղեցին, և ի՞նչ բանէ շինուած կ'ըլլայ ընդհանրապէս: Փօքր և փայտաշէն եկեղեցիին ի՞նչ կ'ըսեն: Որո՞նք են եկեղեցիի մը մասերը: Եկեղեցիին մէջ ի՞նչ բաներ կը գտնուին: Հոն ի՞նչ արարօղութիւններ կը կատարուին: Որո՞նք են եկեղեցիին պաշտօնեաները: Ո՞ր ատեններ կոչնակ կը զարնեն: Ի՞նչ բաներ կը կարդացուին հոն: Դպիրները ո՞ւր կը կենան: Ժողովուրդն ուր կը կենայ ինչո՞ւ համար եկեղեցի կ'երթանք:

134. Ո Ի Ն Ե Ն Ա Լ

ՍԱՀՄԱՆՆԱԿԱՆ ԵՂԱՆՈՎ

Ներկայ

Եզ.

Ունիմ
Ունիս
Ունի

Յոք.

Ունինք
Ունիք
Ունին

Անցեալ անկատար

Ունէի
Ունէիր
Ունէր

Ունէինք
Ունէիք
Ունէին

Անցեալ կատարեալ

Ունեցայ
Ունեցար
Ունեցաւ

Ունեցանք
Ունեցաք
Ունեցան

Բացարձակ ապառնի

Պիտի ունենամ
Պիտի ունենաս
Պիտի ունենայ

Պիտի ունենանք
Պիտի ունենաք
Պիտի ունենան

Անկատար ապառնի

Պիտի ունենայի
Պիտի ունենայիր
Պիտի ունենար

Պիտի ունենայինք
Պիտի ունենայիք
Պիտի ունենային

ՀՐԱՄԱՅՈՒՆ ԵՂԱՆԱԿ

Եզ.	Յոգ.
— —	Ունեկնա՛նք
Ունեցի՛ր	Ունեցէ՛ք

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

Ունեկնամ	Ունեկնանք
Ունեկնաս	Ունեկնաք
Ունեկնայ	Ունեկնան

Անկասար

Ունեկնայի	Ունեկնայինք
Ունեկնայիք	Ունեկնայիք
Ունեկնար	Ունեկնային

ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿ

Աներեւոյթ

Ունեկնալ

Ներկայ ընդունելութիւն

Ունեցող

Անցեալ ընդունելութիւն

Ունեցած , ունեցեր

Ապառնի ընդունելութիւն

Ունեկնալու , ունեկնալիք

135. ԲԱՅԵՐՈՒՆ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՁԵԻՐ

Բայի մը գործողութիւնը բացասելու, այսինքն ժխտելու
ամար կը գործածուին մի՛ է չ բառերն որոնք բայէն առաջ
ը դրուին :

ՕՐԻՆՍԱԿ. — Սիրէ՛—մի՛ սիրեր, սիրեցէ՛ք—մի՛ սիրէք
Սիրեցի—չսիրեցի, պիտի սիրեմ, չպիտի
սիրեմ

Մի՛ բացասականը հրահայականի յատուկ է, իսկ չ բա-
սականը սահմանական ներկայէն ու անկասարեւ զատ ամէն
ամանակի համար կը գործածուի :

Սահմանական ներկան ու անկասարը հետեւեալ կերպով
ացասական կ'ըլլան :

կը գրեմ—չեմ գրեր, կը գրէի—չէի գրեր :

կ'ուտեմ—չեմ ուտեր, կ'ուտէի—չէի ուտեր :

ԾԱՆՕԹ. — Դասատուն պէտք եղած բացատրութիւն-
երը կուտայ բացասական ձեւին նկատմամբ (Տե՛ս Տօնէլեան
երականութիւն) :

ՊԱՑՈՒԷՐ. — Հետեւեալ բայերը բացասականի վերա-
եցէ՛ք և խոնարհեցէ՛ք վարի օրինակին պէս խառն կերպով .
Սիրել, սերսել, բռնել, գործել, փայել, ճկել :

ՕՐԻՆՍԱԿ. — Ձեմ սիրեր, չէի սերտեր, չբռներ, չհնք
ործեր, չէք բալեր, չեն տնկեր :

106. Հ Ր Ա Հ Ա Ն Դ

Գտնել հետեւեալ բայերուն ներկայ, անցեալ եւ ապառնի
նդունելութիւնները :

Քալել, սերտել, ղրկել, կարգալ, թողուլ, լողալ,
օտիլ, բռնել, արտասանել, հոգալ, հալիլ, լսել, քնանալ,
օրանալ, բարկանալ, պարծիլ, հաղնիլ, խորհիլ, բերել,
ամնիլ, գրել, սիրել, կայնիլ, մաշիլ, մուրալ, փրկել,
գլխել, պարել :

136. ԱՄՊԵՐԸ ԵՒ ԱՆՁՐԵՒԸ

Ամառուան գեղեցիկ օր մը երկինքը կապոյտ է .
 Հետեւեալ օրը երկինքին վրայ պզտիկ ճերմակ ամպեր
 կ'երեւան : Յետոյ ա՛լ աւելի մեծ ու սեւ ամպեր հո-
 րիզոնը կը մթնցնեն : Քիչ վերջը անոնք կը տարածուին
 և այլեւս երկինքին կապոյտը չերեւար : Այն ատեն կ'ը-
 սենք . « Անձրեւ պիտի գայ : »

Անձրեւը կամաց կամաց կսկսի . Յանկարծ զօրա-
 ւոր լոյս մը մեղ կը լուսաւորէ : Սոսկալի որոտում մը
 երկիրը կը թնդացնէ : Կայծակն է : Անձրեւը կը շատ-
 նայ և հեղեղներ կը կազմէ . երբեմն ալ կարկուտով
 խառն կը տեղայ : Փոթորիկ մըն է : Անձրեւը , կայ-
 ծակը , սրտումը կը շարունակեն : Քառորդ մը վերջը
 ծիրանի գօտի մը կը տեսնուի , և օդը կը սկսի կամաց
 կամաց գեղեցկանալ :

Անձրեւն օգտակար է : Ան բոյսերը կը կենդանա-
 ցնէ և կը սնուցանէ , ինչպէս նաև աղբիւրներուն ջուր
 կը հայթայթէ : Բայց ոչ ոք կը սիրէ կարկուտը որ
 կ'աւրէ պարտէզները , արտերը և դաշտերը :

ԲԱՌՍԻ. — Հետեւեալ օր , երբե՛նի ինն . — Հորիզոն ,
 — ֆոնտ . — Մթնցնել , գործել էր . — Սոսկալի , րեհլէրէն .
 — Որոտում , իտի ինքնէն . — Թնդացնել , ինքնէրէն . —
 Կայծակ , շիշէն . — Հեղեղ , տեղ . — Կազմել , դռնէնէրէն .
 — Կարկուտ , սուր . — Խառն , գործել . — Միրանիգօտի ,
 — լայնի . — Կենդանացնել , հայտ վերէն , ճնշար . —
 Մնուցանել , դնել . — Աղբիւր , լէն . — Հայթայթել ,
 դրոշմել էր . — Ոչ ոք , հէն ինն :

ՀԱՐՑՍԱՐՍ. — Փոթորիկը նկարագրեցէ՛ք : Կարկուտը
 ի՞նչ է : Անձրեւը ի՞նչ օգտակարութիւն ունի : Կարկուտը ի՞նչ
 վնասներ կուտայ :

137. ԱԳԱՀԻՆ ԿԱՊԻԿԸ

Ատենով խիստ ագահ հարուստ մը կար։ Անիկա
որ մը աժան գնով կապիկ մը գնեց, յուսալով որ
կրնայ աւելի սուղ ծախել զայն ուրիշի մը։

Օր մը երբ այս ագահը դուրս ելեր էր, կապիկը
տեսաւ որ քովի տան դրացին՝ փողոցէն անցնող աղ-
քատի մը քսան փարանոց մը նետեց պատուհանէն։
Անմիջապէս գնաց տիրոջը սնտուկը բացաւ, և սկսաւ
մէջը գտնուած դրամները, ոսկի և արծաթ, ամէնքն
ալ մի առ մի պատուհանէն վար նետել։

Շատ մարդիկ վազեցին, կրցածնուն չափ ժողվեցին
և դացին։

Սնտուկը գրեթէ պարպուեր էր, երբ ագահը փո-
ղոցէն եկաւ և սոսկումով տեսաւ եղածը։

«Ո՛հ անիծեալ կենդանի» կը պոռար հեռուէն՝
կապիկին վրայ վազելով։

107. ՀՐԱՀԱՆԳ

Կետրուն տեղ պատշաճ բայեր դրե՛մ.

Երէկ մինչեւ երեկոյ անձրեւ . . . : Եղբայրս հիմա տուն
. . . : Մուրացկանը մենէ ողորմութիւն . . . : Յովհաննէս
Մկրտիչ Յորդանան գետին մէջ Յիսուսը . . . : Յիսուս Ս.
կոյս Մարիամէն . . . : Յովսէփին եղբայրները զանի օտար
վաճառականներու . . . : Մշակները ցորենը . . . մանգաղով :
Ղուսարարը եկեղեցւոյ ջահերը . . . : Վաղը ես գիւղ . . . :
Վարժապետը յանցաւոր տղաքը . . . :

Բայց դրացին դարձաւ ագահին և ըսաւ. «Մի բարկանար, բարեկամ, իրաւ է որ կապիկիդ պէս ստակը պատուհանէն նետելը խենդութիւն է, բայց քեզի պէս սնտուկին մէջ դիզելն ալ խելացութիւն չէ» :

ԲԱՌԵՐ.— Աժան, — հոգ. — Մի առ մի, դէբեր դէբեր. — Անիծեալ, Դէլան. — Խենդութիւն, Դիվանէն. — Դիզել, Ելլմտ. — Խելացութիւն, — Կըսուէ :

ՀԱՐՑԱՐԱՆ.— Ագահ ինչ ըսել է : Ագահ հարուստը ինչո՞ւ գնած էր կապիկը : Կապիկը ինչ ըրաւ երբ օր մը տունը առանձին մնաց : Ինչո՞ւ համար այսպէս ըրաւ : Երբոր տէրը տուն դարձաւ ինչ ըսաւ կապիկին : Այն ատեն դրացին ինչ զրուցեց ագահին : Աղէկ բան է ագահ ըլլալը :

108. Հ Ր Ա Հ Ա Ն Դ

Հետեւեալ խօսքերուն մեզ գտնուած բայերուն ժամանակները որոշեցեք.

Հովիւը ոչխարները կ'արածէ դաշտին մէջ : Ոչխարները խոտ կ'ուտեն : Հովը կը փոյթ : Մաղիկները կը բուրեն : Մանուկ եղելութիւնը յայտնեց : Յակոբ դաշտին մէջ վազեց, պոռաց, խաղաց, յոգնեցաւ, ֆրճեցաւ, յետոյ պաղ ջուր խմեց, տուն գնաց և հիւանդացաւ, հիմա պատկած է : Ոճրագործը պիտի պատճուի : Դասատուն վաղը պիտի գայ : Մենք ալ դաս պիտի առնենք : Մշակը ցորենը ցանեց. ցորենները բուսան. երկրագործը հնձեց զանոնք. որայ կապեց. կալ ըրաւ. ցորենը յարդէն գտեց և ջաղացպանին յանձնեց, որ ալիւր շինէ : Երէկ թէ որ օդը աղէկ ըլլար, դուրս պիտի երթինք ձեզի գալու համար :

138. ԷՇՈՒՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Օրին մէկը էջ մը աղ բեռցած կ'երթար : Առուակի մը հանդիպելով՝ ստիպուեցաւ մէջէն անցնիլ, ու երբ դիմացի եղբրքը հասաւ, տեսաւ որ բեռը բոլորովին թեթեւցեր է, որովհետեւ աղը ջուրին մէջ հալեր և դրեթէ հատեր էր : Կը կարծուի թէ էշերը խելք չունին, բայց մեր իշուկը ասիկա չմոռցաւ, և ուրիշ անգամ մը, երբ բուրդ բեռցած կը քայլեր, խորհեցաւ որ շրջակաները լին մը կար, և ճամբան քիչ մը երկարելով՝ կրնար անկէ անցնիլ, ու քրտնելով, յոգնելով վազեց, ուրքով գլխով ջուրին մէջ խորասուզուեցաւ : Միայն չէր խորհեր թէ աղն ու բուրդը միեւնոյն բանը չէին . աղը ջուրէն կը հալի, բայց բուրդը ջուրը ծծելով աւելի կը ծանրանայ : Խեղճը երբ ջուրէն դուրս ելաւ, բեռը այնքան ծանրացած էր որ չէր կրնար քայլել :

ԲԱՆՍԵՐ. — Տրամաբանութիւն, հանելէ . — Բեռնալ, ելեւթէտ . — Ստիպուիլ, յեճողուր օլմօ . — Թեթեւնալ, հօֆֆօլնտ . — Հալիլ, երէտ . — Կարծուիլ, շանն օլանմօ . — Իշուկ, տեւտեւտ . — Բուրդ, ելան . — Խորհիլ, տեւտեւտ . — Շրջակայ, ճիւղ . — Խորասուզիլ, իննե պոլմօ . — Խանրանալ, պըրլանմօ . — Խեղճ, շվալ :

ՀԱՐՑԱԲԱՆ. — Ի՞նչ պատահեցաւ որ մը էշուն, երբ աղ բեռցած կ'երթար : Ի՞նչպէս բեռը թեթեւցաւ : Էջը ասիկա մոռցաւ : Ի՞նչ ըրաւ ուրիշ անգամ մը երբ բուրդ բեռցած էր : Վերջը ի՞նչ պատահեցաւ : Այս պատմութենէն ի՞նչ կը հետեւեցնէք էշուն նկատմամբ :

ՊԱՅՈՒՒՆԵՐ. — Վերի տանկերէն դասը հայերէնի թարգմանեցէ՛ք :

139. Ա Դ

Ադ պէօյիւք վէ կիւզէլ պիր հայվան տըր : Օնուն պօյու ինսանըն պօյու գատար եիւքսէք օլուր : Պօյնու էյրի տիր վէ ուզուն գըլլար ըլա տօլու : Պաշը ուզունճա տըր վէ կէօզլէրի փարլագ : Օ գուլագլարընը տիլէտիկի թարաֆա սալլատապիլիր : Այագլարընը իւզէրինտէ սէրդ պիր դըրնաղը վար տըր : Գույրուզու ուզուն տըր : Ադլարըն պազըսը սիեահ, պազըսը պէյագ վէ սայիրլէրի գըրմըզը վէ պէնէքլի օլուր :

Ադ եուլաֆ, եէյիլ օդ, արփա, սաման վէ գուրու օդ եէր : Օնու արապայա գօշարլար, վէ պինմէք իչին տախի գուլլանըրլար : Ադլար չօճուգլար կիպի պիրպիրի իլէ եարըշա չըգարլար : Զօգ գօշան աղըն գըլմէդի փէք պէօյիւք տիր : Ինսանլար օնու եուլար իլէ զապթ իտէրլէր : Խայըն աղլար դէքմէ վուրուրլար : օնլարըն եագընընա կիդմէք դէհլիքէլի տիր :

109. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Հեհեհեալ խօսեեր բացասական բրհ'ք :

Հովը սաստիկ կը փչէ : Մանուկը ժպտեցաւ : Մառերը ծաղիկ բացեր են : Վաղը պտտելու պիտի երթամ : Հոս եկէ՛ք : Քովս նստեցէ՛ք : Ինչո՞ւ առջեւդ կը նայիս : Այս պատանին կը սիրե՞ս : Այս տարի առատ ձիւն տեղաց : Մառին քար նստեցէ՛ք : Տնօրէննիս երէկ ախուր էր : Այս դիւղին մէջ շատ տուններ կան : Իրիկուան պատմածս լաւ կը յիշե՞ս : Կերակուրէն անմիջապէս վերջը կը պառկիմ : Երբեմն շատ աշխատիլ կը սիրէի : Քիչ մը առաջ դուք կը խօսէիք :

140. ԼՈՒՍԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Գիշերը տան մէջ լոյ, յառաջ բերելու համար կը վառեն սթէարամոմը։ Սթէարամոմը ճերմակ մոմ մըն է զոր կը շինեն ոչխարին և եղին ճարպէն։ Հանուած սթէարինով։ Մէջէն բամպակէ պատրոյգ մը անցած է։ Վառած մոմը ճրագ կ'ըսուի։

Քարիւղը տեսակ մը խորունկ հորերէ կը հանեն։ այս հորերը նաւքահոր կ'ըսուին։ յետոյ կը զտեն զայն ու թիթեղեայ սնտուկներու մէջ դնելով կը զրկեն ամէն տեղ։ Կանթեղի մէջ բամպակէ պատրոյգը քարիւղով թրջելէ վերջ կը վառեն։ Քարիւղի կանթեղը աւելի լոյս կուտայ քան թէ սթէարամոմը։

Լուսատու կազը հանքածուխէն կը հանեն և ծորակի մը ծայրը առանց պատրոյգի կը վառի։ Բայց այս կազը կը դործածեն փողոցները լուսաւորելու։

ՌԱՌՆԵՐ. — Լուսաւորութիւն, դէմք. — Սթէարամոմ, էֆֆրմալէր Տոմո. — Ճարպ, դոն եղը. — Սթէարին, սիէրն. — Պատրոյգ, ֆիդէլ. — Ճրագ, էման Տոմ. — Քարիւղ, կոլ եղը. — Նաւթահոր, Նեֆթ ֆոյուսոն. — Ջտել, գոֆֆլէ եր. — Թիթեղեայ, դէմէտէրն. — Լուսատու, բլեֆ մերն. — Ծորակ, Տոմլէֆ։

ՀԱՐՑԱՐԱՆ. — Լուսաւորութեան համար ի՞նչ բաներ կը գործածեն։ Ի՞նչ բանէ կը շինեն սթէարամոմը։ Քարիւղը ո՞րկէ կ'եղնէ և ի՞նչպէս կը փոխադրեն։ Քարիւղը ի՞նչպէս կը վառի։ Լուսատու կազը ի՞նչ է, ի՞նչպէս կը վառի և ի՞նչ բանի համար կը գործածեն։

141. Ն Ա Ի Ա Ս Տ Ի Ն

Նաւաստի մը կը մեկնէր
 Դէպ ի հեռու երկիրներ :
 « Կ'երթաս , ըսաւ մէկն իրեն ,
 Բայց չե՞ս վախնար ծովերէն :
 Հայրդ ու մեծ հայրդ ալ գացին ,
 Եւ զո՞հ եղան արկածին : »
 — « Իսկ քուկին հայրդ ո՞ւր մեռաւ : »
 — « Իր անկողնին մէջ հարկաւ : »
 — « Ուրեմն այնտեղ դուն ի՞նչպէս
 Ամէն գիշեր կը նընջես : »

ՌԱՌՅԲ. — Նաւաստի , կէֆէ . — Մեկնիլ , կէֆէ . —
 Զո՞հ , բորդան . — Ննջել , աշուճա՞ :

ՊԱՅՈՒԷՐ. — Վերի ոտանաւորը գոց սորվեցէ՛ք և բարձ-
 րաձայն արտասանեցէ՛ք :

110. Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Հեհեւեալ բացասական խօսիւորը հաստատականի վերա-
 ծեցե՛ք .

Ձեռքերդ ետիդ մի՛ տանիր : Ինծի հետ չպիտի խօսիս :
 Ինչո՞ւ չես լուր : Յանցանքդ չեմ ուզեր ներել : Այս կերա-
 կուրէն մի՛ ուտէք : Ձեմ թողուր որ մեկնիս : Մի՛ քնանար :
 Ձե՞ս ուզեր որ այս գիրքը քեզի տամ : Գլուխս չցաւիր կոր :
 Աչքերս լաւ չեն տեսներ կոր : Հոս մի՛ նստիք : Ձեզի հետ
 չպիտի տեսնուիմ : Հոս պիտի չի գայիր : Ձեզի բնաւ տեսած
 չէի : Դէմքդ չէ աւրուած : Այս նամակը իրեն չիտալու համար
 չկեցայ : Խօսքս իրեն չպիտի ուղղէի : Ձինքը հարցաքննել
 չէ՞ք ուզեր : Այս մարդիկ այս առտու հոս չպիտի գային :

142. Կ Ր Ն Ա Լ

ՍԱՀԾԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

Եզ.

Կրնամ

Կրնաս

Կրնայ

Յոք.

Կրնանք

Կրնաք

Կրնան

Անցեալ անկասար

Կրնայի

Կրնայիք

Կրնար

Կրնայինք

Կրնայիք

Կրնային

Անցեալ կասարեալ

Կրցայ

Կրցար

Կրցաւ

Կրցանք

Կրցաք

Կրցան

Բացարձակ ապառնի

Պիտի կրնամ

Պիտի կրնաս

Պիտի կրնայ

Պիտի կրնանք

Պիտի կրնաք

Պիտի կրնան

Անկասար ապառնի

Պիտի կրնայի

Պիտի կրնայիք

Պիտի կրնար

Պիտի կրնայինք

Պիտի կրնայիք

Պիտի կրնային

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եզ.

Յոք.

Կրցի՛ր

Կրնա՛նք

Կրցէ՛ք

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

Կրնամ

Կրնանք

Կրնաս

Կրնաք

Կրնայ

Կանան

Անկատար

Կրնայի

Կրնայինք

Կրնայիք

Կրնայիք

Կրնար

Կրնային

ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿ

Անհրեւոյթ

Կրնալ

Ներկայ ընդունելութիւն

Կրցող

Անցեալ ընդունելութիւն

Կրցած , կրցեր

Ապառնի ընդունելութիւն

Կրնալու , կրնալիք

ՎԱՐԺ. — Խոնարհեցէ՛ք կրնայ բային բացատարան ձեւն

143. ԴԺԳՈՂ ԿԿՈՒՆ

Երբ բարին Աստուած թռչունները ստեղծեց, անոնց մէն մէկուն մէյմէկ բնակարան ցուցուց. արագիլին՝ անիքը, բադին՝ ջուրը, արտոյտին՝ արաքը, ծիծեռնաին՝ տունը, և ուրիշ խումբ մը թռչուններու՝ անտառին առերը: Ամէն մէկն իր բնակարանէն գոհ էր. մինակ կուն գոհ չէր. Տանիքն անոր համար շատ հովասուն էր, ջուրը՝ շատ թաց, արաքը՝ շատ կարծր, տունը՝ ստ լռիկ ու անտառին ծառերը՝ շատ բարձր: Եւ Արաինն այս բանին վրայ զայրանալով ըսաւ. «Ուրեմն ուն ինքզ քեզի տեղ մը գտի՛ր»: Եւ անկէ ի վեր կուն տեղէ տեղ, ու երկրէ երկիր կը թափառի ու հակաւին տեղ մը չէ գտած, ուր մէկ ամառէ աւելի մնալ ուզէ: Անիկա ամէն գիշեր տարբեր ծառի մը վրայ կը քնանայ. իւր հաւկիթներէն մէկը հոս մէկը հոն յաճէ, ու ինք կը թողու կ'երթայ: Անիկա իր ձագերը թխտելու հոգը ուրիշին կը թողու, հետեւաբար իր ձագերը չճանչնար և անոնք ալ զինքը չեն ճանչնար:

ՌԱՌԵՐ. — Դժգոհ, իշխան, օւ՜շտն. — Կկու, իշխանի. — Բնակարան, հետեւն. — Արտոյտ, լայն բուռն. — Գոհ, հոգն. — Հովասուն, բեռնակիր. — Կարծր, սեղ. — Արաք, արաք, Ալլահ. — Զայրանալ, իշխանի. — Թափառիլ, տեղէ տեղ իջնել. — Տարբեր, տարբեր. — Հոգ, լուրջ:

ՀԱՐՑԱՐԱՆ. — Կկուն ինչ տեսակ թռչուն է: Անիկա ինչո՞ւ բնակարան չունի: Ի՞նչպէս կ'ապրի անիկա և ի՞նչպէս կը թխտէ:

144. ԱՌԱՄՆԵՐ

1. Բերանը սրտին աւելցուքէն կը խօսի :
2. Աղքատին ողորմողը Աստուծոյ փոխ կուտայ :
3. Ընտիր գիրքը ընտիր բարեկամ է :
4. Սափորը ջուրի ճամբան կը կոտորի :
5. Քնացող կատուն մուկ չի կրնար բռնել :
6. Չգիտնալն ամօթ չէ, չսորվիլն է ամօթ :
7. Շատ լսէ, քիչ խօսէ :
8. Առաջ աշխատինք, ետքը զբօսնունք :
9. Աշխատասէրը անօթի չմնար :
10. Չար ընկերները բարի վարքը կ'ապականեն :

ԲԱՌՆԵՐ. — Առած, որդի Դեւէ. — Աւելցուք, որդի չէ. — Փոխ տալ, ետէնն լէրեւ. — Ընտիր, էյէ. — Սափոր, Դեւէ. — Ապականել, դժգոհ :

ԾԱՆՈԹ. — Դասատուն պէտք է աշակերտաց բացատրէ վերի առածները մէյմէկ օրինակ մէջ բերելով :

111. ՀՐԱ ՀԱՆԳ

Հետեւեալ արմատ բառերէն մէյմէկ բայ օրհնեցի՛ք.

Սէր, գող, սուտ, լուռ, կոյր, խուլ, միտք, շէնք, լոյս, մութ, քայլ, ցաւ, գիր, հոգ, խնամք, սանտր, կարմիր, դեղին, ջուր, անձրեւ, տող, հիւմ, գիծ, գումար, գեղչ, բաժին, քուն, դարմանք, ծածկոց, հոտ, տէր, բեռ, փայլ, գործ, շարժ, պայտ :

ՕՐԻՆԱԿ. — Սէր, սիրել : Գող, գողնալ, եւլն :

145. ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

Աշակերտները հետեւեալ անկանոն բայերը պէտք է խոսրհեն դասատուին օգնութեամբ .

Բերել, դնել, զարնել, ընել, ըսել, ջեւնել, նայիլ, առիլ, գալ, տալ, երբալ, իյնալ, մնալ :

Մ.Ա.Ն.ՕԹ. — Պէտք է մի քանի դասեր յատկացնել վերի անկանոն բայերուն խոնարհման համար . (Տե՛ս Տօնէլեանի Բեւեականութեան Ա. գիրքը) :

146. Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

(Քարեախօսակ)

Մէջտեղը քար, եզերքը փայտ
Կրնան ըսել թէ ի՞նչ է այդ :

119. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Ամբողջ խօսքերով պատասխանեցէ՛ք հետեւեալ հարցումերուն .

Ի՞նչ գոյն ունի երկինքը : Յորեկ ատեն ինչե՞ր կը տեսուին երկնքին վրայ : Նկարագրեցէ՛ք արեւը : Ամպերը ի՞նչ ըսին կ'ըլլան : Ամպերէն ի՞նչ յառաջ կուգայ : Արեւ եղած ատեն եթէ անձրեւ գայ, ի՞նչ կը տեսնուի երկնքին երեսը : Երբկուան արեւը ո՞ր կողմ կը գտնուի : Գիշերը ի՞նչու համար մութ կ'ըլլայ : Լուսաւորները ի՞նչ բաներու կրնանք մանցնել : Լուսինը ի՞նչ բանի կը նմանի : Գաղթող թռչունները որո՞նք են : Օգտակար եւ վնասակար միջատները որո՞նք են : Դաշտի մէջ ի՞նչ տեսակ աշխատութիւններ կ'ըլլան :

147. ՇՈՒԱՅԼՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԳԱՀՈՒԹԻՒՆ

Երկու աղուէս գիշերանց հաւնոց մը մտան։ Աք
 զաղը, հաւերն ու վառեակները խեղդեցին և յե
 փորերնին կշտացնել սկսան։ Անոնցմէ մին որ երիտ
 սարգ և կրակոտ էր, կ'ուզէր ամէնն ալ ուտել։ Մի
 որ ծեր ու ագահ էր, կ'ուզէր հետեւեալ օրուան պ
 հել։ Ծերը կ'ըսէր. « Զաւանկս, ծնելէս ի վեր շատ բ
 ներ տեսայ. բոլոր ունեցածնիս մէկ օրուան մէջ չո
 տնք. բաղդերնիս բանեցաւ, գանձ մը գտանք, պէ
 է խնայել զայն»։ Երիտասարգը պատասխանեց. « Քան
 որ հոս եմ, կ'ուզեմ ամէնն ալ ուտել և ութ օրու
 համար կշտանալ, վասն զի մէյ մըն ալ հոս չեն
 կրնար վերադառնալ, հաւերուն տէրը վրէժ լուծելը
 համար մեզ կը սպաննէ»։

Այս խօսակցութենէն ետքը իւրաքանչիւրն իր ու
 զածն ըրաւ։ Երիտասարդն այնչափ կերաւ որ ճաթ ե
 ցաւ ու հազիւ կրցաւ իր որջը երթալով մեռնիլ։ Ծերը
 որ խնայողութեամբ ապրիլը խելացութիւն կը համար

118. ՀՐԱՀԱՆԳ

Հետեւեալ բառերուն հակաճիւղները գտէ՛ք, եւ անոնցմով
 մէյ մէկ խօսք շինեցէ՛ք.

Առտու, ցորեկ, արեւ, երկինք, ծով, ամառ, հոգի,
 կեանք, գագաթ, լիճ, սատանայ, հայր, քոյր, լեռ,
 դժոխք, երիտասարդ, աշխատութիւն, արշալոյս, կէս գի
 շեր, մութ, առողջ։

ՕՐԻՆԱԿ. — Առտու — իրիկուն (իրիկունը ամէն մարդ
 իր աշխատութենէն տուն կը վերադառնայ և կը հանգչի)։

բէր, հետեւեալ օրը նորէն հաւնոց վերագառնալով
բռնուեցաւ ու սպաննուեցաւ :

Շռայլութիւն և ազահութիւն՝ երկուքն ալ հաւա-
սարապէս գէշ են :

ՌԱՌԾԲ. — Շռայլութիւն, Դեռնիւրիտ . — Ազահութիւն,
Դեռնիտ . — Աղուէս, Դեռնի . — Վառեակ, Դեռնի . —
Կրակոտ, Դեռնի . — Խնայել, Դեռնի երեւի . — Կշտանալ,
Դեռնի . — Վրէժ լուծել, Դեռնի մամ . — Իւրաքանչիւր,
Դեռնի . — Ծաթիւ, Դեռնի . — Որջ, Դեռնի . — Հաւնոց,
Դեռնի . — Հաւասարապէս, Դեռնի սարեդրտ :

ՀԱՐՑԱՐԱՆ. — Ի՞նչ տեսակ կենդանի է աղուէսը : Պատ-
մեցէ՛ք երկու աղուէսներուն պատմութիւնը : Այս պատմու-
թեանէն ի՞նչ բարոյական կը հետեւի :

114. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Հետեւեալ բայերուն ֆով, բս յարմարութեան կը, կու, կ'
մասնիկները դրե՛ք .

Ես . . . խօսիմ : Դուք . . . ուտէք : Մենք . . . առնենք :
Սրէկ հոս . . . դայիր : Ինչո՞ւ . . . ամչնաք : Ի՞նչ . . . կար-
դաք : Ինչո՞ւ . . . լաս : Քաղաք . . . երթանք : Ի՞նչ . . .
սորվիք : Հայերէն . . . ուսնիմ : Ի՞նչ . . . խնդրէք : Պարտէ-
զին ծաղիկները . . . չորնան կոր : Ձկնորսը ձուկ . . . որսայ :
Ծոյլերը . . . ատեմ, բայց աշխատողները . . . սիրեմ : Արեւը
արեւելքէն . . . ծագի : Փոթորիկի ատեն երկինք . . . որստայ :
Սրբ դասս գիտնամ վարժապետս . . . ուրախանայ : Գիշեր-
ները կանուխ . . . պակկիմ, կսկ առտունները ուշ . . . ար-
թնամ :

146. ԿՐԱՒՈՐԱԿԱՆ ԲԱՅԵՐ

Սիրել — սիրուիլ . խօսիլ — խօսուիլ . արել — արուիլ .
չել — չուիլ . կարդալ — կարդացուիլ . բողոք , բողոքիլ .

ԾԱՆՕԹ. — 1. Բայերը կրաւորական ընելու համար ուիլ
մասնիկը կը գործածուի :

2. Դասատուն թող բացատրէ աշակերտաց ուիլ մասնի-
կին գործածութեան եղանակը (Տե՛ս Տօնելեան քերականու-
թիւն) :

3. Չանաղան վարժութիւններ ընել տալ աշակերտաց
կրաւորական բայերու վրայ , հայերէնէ տաճկերէն և տաճկե-
րենէ հայերէն թարգմանութիւններով :

4. Առաջարկել աշակերտաց զանաղան բայեր և անոնց
կրաւորականը պահանջել :

ՊԱՅՈՒԷՐ. — Սիրուիլ բայը ամբողջութեամբ խոնար-
հեցէ՛ք :

115. ՀՐԱՀԱՆԳ

Ձանազանեցե՛ք՝ առարկայ ցուցնող բառերը (անուն կամ
գոյական) եւ որպիսութիւն ցուցնող բառերը (ածական), եւ
գրեցե՛ք ձեր տեսիլն մեզ .

Տուն , քար , փայլուն , երկայն , շողենաւ , սեւ , կար-
միր , ծառ , բարձր , ձեռք , անուշ , աժան , անօթի , լայն ,
կշիռ , գլխարկ , նեղ , սեղան , հին , նոր , հայելի , շատ ,
քիչ , հիւանդանոց , դեղեցիկ , քաջ , պանդոկ , կերպաս ,
հանդարտ , յամր , գլուխ , գանգ , ձի , հիւանդ , լեռ , ըն-
դարձակ , սիրուն , անձեռոց , դրամ , մազ , խուլ :

149. ՍՊԻՏԱԿ ԱՌԱԳԱՍՏԸ

Պզտիկ տղայ մը օր մը մօրը հետ ծովեզերքը պտըտած ատեն, յանկարծ ուրախութեան ճիչ մը արձակեց, և երկու ձեռքն իրար զարնելով՝ մօրը ցոյց տուաւ ծովուն վրայ նաւակի մը ճերմակ առագաստը։

«Ո՛րքան ճերմակ է, ճիշդ կաթի պէս. նայէ՛, մայր, ինչպէս կը փայլի ջուրին վրայ։» Մայրը ժպտեցաւ առանց բառ մը զրուցելու։ Քիչ քիչ նաւակը ծովափին մօտեցաւ, նաւահանդիստը մտաւ, և տղան ապշած մնաց։

«Ո՛հ, մայրիկ, նայէ՛, առագաստը ո՛րքան սպիտակ և ո՛րքան մաքուր կը կարծէի, բայց հիմա կը տեսնեմ որ գորշ գոյն մը ունի, ցեխով ու փոշիով աղտոտած։ Որչափ սխալեր եմ։»

«Տղաս, ըսաւ մայրը, բնաւ հեռուէն մի գատեր մարդիկը և իրերը։ Որչափ մարդերու հողիներ այս առագաստին կը նմանին. հեռուէն փայլուն կ'երեւան, և երբ մօտենաս, աղտոտ կը տեսնես զանոնք։»

ԲԱՌԵՐ. — Սպիտակ, պէշ. — Առագաստ, եկէն. — Ծովեզերք, տէնէլ + էն-բը. — Ծիչ արձակել, գողբոմբ. — Ծոյց տալ, կեօդերտէ. — Ժպտիլ, կէ-րէ. — Ծովափ, տէնէլ + էն-բը. — Նաւահանդիստ, իմն. — Ապշած, շնճըշ. Գորշ, տէ-լ բէնիէ։

ՀԱՐՅԱՐԱՆ. — Պզտիկ տղան ո՛ւր կը դանուէր և ի՞նչ տեսաւ։ Ի՞նչ ըսաւ ան իր մօրը։ Առագաստը ի՞նչպէս կ'երեւար իրեն։ Երբոր նաւակը մօտեցաւ, ի՞նչպէս երեւցաւ առագաստը։ Այն ատեն տղան ի՞նչ ըսաւ մօրը։ Մայրը ի՞նչ պատասխանեց։ Այս պատմութիւնը մեզի ի՞նչ կը սորվեցնէ։ Առագաստը ի՞նչ է և ի՞նչ բանի կը գործածեն։

150. ՄԱՆՈՒԿՆ ԵՒ ԻՐ ԾԱՂԻԿ

Ընծայեցին ծաղիկ մ'ինձի ,
Զայն անկեցի և ջրեցի :
Խնդրեմ , եկէք , թռչուններ ,
Ըսէք թէ լաւ եմ ըրեր :

Արեւ , ծաղիկս դուն անեցո՛ւր ,
Ամպիկ , անոր վրայ թափէ՛ ջուր :
Գլուխըդ շիտակ բռնէ վեր
Սիրուն ծաղիկ , մի վախեր :

Ես անհամբեր առտուն զովիկ
Պարտէզ կ'իջնեմ ծաղկիս քովիկ ,
Կը հարցընեմ թէ նա լաւ
Գիշերն ամբողջ քընացա՛ւ :

Արեւուն հետ ամպ միասին
Ծաղիկս ազուոր անեցուցին :
Արեւ և ամպ , մեծապէս
Չեր բարիքէն գոհ եմ ես :

Թիթեռնիկներ , եկէք հիմայ ,
Զմայլեցէք ծաղկիս վըրայ :
Եւ դո՛ւ , թռչո՛ւն երգեցիկ ,
Գովէ ծաղիկս գեղեցիկ :

ՌԱԹԵՐ. — Ընծայել , հեռէյե եր-իւ . — Խնդրել , ընծ-
եղ-իւ . — Անհամբեր , սուղըսըլ . — Զմայլել , հայրերոյե գու-
մ-գ . — Երգեցիկ , երգել , յի-ր-ի-սեյեյե :

ՊԱՅՈՒՆԸ. — Վերի ստանաւորը գոց սորվեցէ՛ք և
բարձրաձայն արտասանեցէ՛ք :

151. ԱՆՅՈՂԱԿԱՆ ԲԱՅԵՐ

Սիրել — սիրցնել . շողալ — շողացնել . փաշել — փաշեցնել .
հագուիլ — հագուեցնել . սորվիլ — սորվեցնել . շսել — շսել
շալ . սրել — սրել շալ ,

ԾԱՆՕԹ . — 1. Դասատուն կը բացատրէ աշակերտաց թէ
բայերը ի՞նչպէս անցողական կ'ընեն , ոմանց վրայ ցնել և եցնել
մասնիկները աւելցնելով և ոմանց ալ աներեւոյթին վրայ
շալ բայը :

2. Զանազան վարժութիւններ ընել տալ անցողական
բայերու վրայ :

ՊԱՅՈՒՒՆ . — Հետեւեալ բայերը անցողական ըրէ՛ք .

Սորվիլ , հագալ , յուսալ , ճնկել , օրհնել , գրել , շինել , գո-
ցել , դողել . պսիլ , քափել , որսալ , զարնել , նորել , շալ , ա-
ւելնալ , դրկել , մոռնալ , գիտնալ , շնչել , գծել , կարել :

116. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

Սեռական հոլով յարմար բառեր (յասկացուցիչ) դրե՛ք
հետեւեալ բառերուն սկիզբը .

— ապարանքը : — խրճիթը : — կողքը : — դուռը : —
կաթը : — ամանը : — ծայրը : — գագաթը : — քաղը : —
պոչը : — լեզուն : — մագիչները : — ճիրանները : — լոյսը :
— գմբեթը : — զանգակատունը : — խորանը : — աստիճան-
ները :

ԾԱՆՕԹ . — Այս հրահանգը շարունակել և նմանօրինակ
ուրիշ վարժութիւններ ընել տալ աշակերտաց :

152. ԽՕՍԱԿՑՈՒՅԻՒՆ — ԼԵԶՈՒ

Մարդիկ իրենց միտքը կը բացատրեն ձայներ հանելով։ Այս ձայները հանելու համար գլխաւոր գործիքը լեզուն է։ Այս ձայները զատ զատ բառեր են որով խօսք մը կը շինուի։ Մարդիկ միայն կրնան խօսիլ։ Կենդանիները չեն կրնար խօսիլ։

Մենք մեր գաղափարները խօսելով իրարու կը յայտնենք։ Ինչ որ լսած ենք մեր պապերէն, կրնանք պատմել, և ինչ որ գիտենք կրնանք ըսել ուրիշներու, որոնք չեն գիտեր։

Ամէն մարդ խօսիլ կը սորվի երբ դեռ շատ պզտիկ է, իր մօր միջոցաւ։ Այս պատճառաւ մարդուն ամէնէն առաջ իր մօրմէն սորված լեզուն մայրենի լեզու կ'ըսուի։ Մարդիկ իրենց մայրենի լեզուն միշտ լաւ խօսիլ պարտական են։

Ամէն ազգ իր լեզուն ունի, այնպէս որ երկրի մը բնակիչները չեն կրնար ուրիշ երկրի մը բնակիչներուն ըսածը հասկնալ։ Քուրքիոյ մէջ խօսուած լեզուն թուրքերէն է, Անգղիացիին՝ անգղիերէն կը խօսի, իսկ Ֆրանսացին՝ ֆրանսերէն։

ԲԱՌԾԲ. — Միտք, — գէւ. — Բացատրել, — դռնէջ եդրտ. — Բառ, — Լսել. — Գաղափար, ֆէլէր. — Յայտնել, պէյան եդրտ. — Դեռ, — Գոհ. — Մայրենի լեզու, — և լեռնը. — Ազգ, — Դեմք։

ՀԱՐՑԱՐԱՆ. — Մարդիկ իրենց միտքը ինչպէս իրարու կը յայտնեն։ Ձայն հանելու գործարանը ո՞րն է։ Խօսքը ինչ բաներով կը շինուի։ Կենդանիներն ալ կրնան խօսիլ։ Մարդերը խօսիլ կը սորվի։ Ինչ է մայրենի լեզուն։ Ֆրանսացիները և անգղիացիները ինչ լեզու կը խօսին։ Մեր երկրին լեզուն ո՞րն է։

153. Գ Ի Ր


Գրելու համար տեսակ մը նշաններ կը գործածենք . Այս նշաններն այբուբէնի տառերն են . Ամէն մէկ ձայն իր յատուկ ճառն կամ գիրն ունի . որոնք միասին գալով կը շինեն վանկեր, և վանկերէ ալ կը շինուին բառեր . Կան բառեր որ մէկ վանկ ունին . ինչպէս, հաց, ծառ . Բայց կան բառեր ալ որ աւելի երկայն են . ինչպէս, աշակերտ որ երեք վանկ ունի . Երբ քանի մը բառեր իրարու այնպէս միացնենք որ նշանակութիւն մը ունենան , բոլորը մէկ խօսք մը կը շինեն :

Ամէն տղայ խօսիլ կը սորվի իր ծնողքէն , և վարժութեամբ՝ գրելու ալ կ'սկսի , և այսպէս երկու կերպով կրնայ իր միտքը յայտնել , քերականացի և գրաւոր կերպով : Այս երկու կերպն ալ իր կանոններն ունի որ քերականութիւնն կ'ըսուի : Տղայ մը առանց քերականութիւն գիտնալու կը խօսի , բայց առանց գրերը ճանշնալու և գրելու չկրնար ոչ կարգալ և ոչ ալ գրել : Ուրեմն պէտք է աշխատինք որ լաւ սորվինք մեր մայրենի լեզուին քերականութիւնը :

ԲԱՆՍԻՐ. — Վանկ , հիմ . — Տառ , ե-ղբ . — Նշանակութիւն , ճան . — Վարժութեամբ , -ըլըր-ի . — Բերանացի , -ըլըլ . — Գրաւոր , ե-ղբ ըլ . — Կանոն , գ-յտե . — Քերականութիւն , -որի :

ՀԱՐՅԱՐԱՆ. — Գրելու համար ի՞նչ կը գործածուի : Ի՞նչ է վանկը : Ի՞նչ տեսակ բառեր կան : Խօսքը ի՞նչ է : Մարդ ի՞նչպէս խօսիլ և գրել կը սորվի : Մարդ իր մայրենի լեզուն լաւ սորվելու համար ի՞նչ պէտք է գիտնայ :

Վ Ե Ր Զ





290

2

Handwritten musical notation on a staff, consisting of several notes and rests.

Handwritten musical notation, possibly a single note or a short rest.

Handwritten musical notation on a staff, showing a sequence of notes.

Handwritten musical notation on a staff, featuring a series of notes with stems.

Handwritten musical notation on a staff, including notes and a clef-like symbol.

ՀԱՍ Հիմնարար գիտ. գրադ.



